

# ԱԿՆԱՐԿ ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆՉԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵԻՈՐ ՏԵՍԱՆԿԻՆՆԵՐԷ

ՄԻԼՎԻ ԱԻԱԳԵԱՆ



ՊԵՂՈՒՔ 2015

Տեղիմակը՝

Սիլվի Ասագեան, դասախոս Կարդուպեռական Աստուածաբանութեան  
(Systematic Theology), Մերձստոր Արեւելի Աստուածաբանա-  
կան Հեմարանէն Կերս, Պէքրուք-Լիբանան:





*Ակնարկ Աստուածաշունչին*

*Պատմական եւ Հոգեւոր  
Տեսանկյուններէ*

*Սիլվի Աւագեան*

**Բովանդակություն**

<b>Ներկայ Հրատարակության Մասին</b>	<b>9</b>
<b>Ներածական</b>	<b>11</b>
<b>Աստուածաշունչի Գիրքերը եւ իրենց Համառոտագրությունները</b>	<b>13</b>
<b>Ա. Նախաբան Հին Կտակարանի</b>	<b>17</b>
1. Հին Կտակարանին Կազմությունը	17
2. Հին Կտակարանին Կանոնականացումը	19
3. Հին Կտակարանին Աշխարհը	21
<b>Բ. Աշխարհին եւ Ժողովուրդի մը Ծնունդը</b>	<b>25</b>
4. Աստուած՝ Ստեղծիչը	25
5. Աբրահամ՝ Հաւատքի Օրինակ մը	28
6. Աստուած կը Փրկէ իր Ժողովուրդը	30
7. Ժողովուրդը Սինայի մէջ - Օրէնքներ եւ	
<b>Տօներ</b>	<b>33</b>
<b>Գ. Ուխտը Պահել, թէ՞ Զանց Ընել</b>	<b>37</b>
8. Խոստումը Իրականացած - Քանանու Երկրին Գրաւումը եւ Բաժանումը	37

9. Ներքին և Արտաքին Վտանգներ - Դատա- ւորներու Շրջան	40
10. Քաղաքական Նոր Դրութիւն մը - Սամուէլ	43
11. Սաւուղ՝ Առաջին Թագաւորը	46
12. Դաւիթ Գահ կը Բարձրանայ	48
13. Դաւիթ և Սողոմոն	51
14. Թագաւորութիւնը Բաժնուած	54
<b>Դ. Հին Կտակարանի Մարգարէները</b>	<b>59</b>
15. Ո՞վ էր Մարգարէն	59
16. Իսրայէլ Եւ Յուդա՝ Գերպետութիւններու Դիմաց	62
17. Ընկերային Անարդարութեան դէմ - Մարգարէութիւն Ամովսի	66
18. Աստուծոյ Սէրը և Գութը - Մարգարէութիւն Ովսիայի	68
19. «Անոր Անունը Պիտի Կոչուի Սքանչելի» - Մարգարէութիւն Եսայիի	71
20. Ողբացող Մարգարէն - Մարգարէութիւն Երեմիայի	74

21. Աստուծոյ Շնորհիքը թէ Արդարութիւնը - Մարգարէութիւն Յովնանի	77
<b>Ե. Բանաստեղծական եւ Իմաստասիրական Գրութիւններ</b>	<b>79</b>
22. Սաղմոսներ՝ Փառաբանութեան Երգեր	79
23. Առակներ՝ Իմաստութեան եւ Յաջողութեան Ճամբան	82
24. Արդարին Տառապանքը - Գիրք Յորի	84
25. «Ունայնութիւն Ունայնութեանց» - Գիրք Ժողովողի	87
26. Եսթեր Կ'ազատէ իր Ազգը	89
27. Նոր Ինքնութիւն - Եզրաս եւ Նէեմիա	91
28. Աստուծոյ Յաիտենական Թագաւորութիւնը - Մարգարէութիւն Դանիէլի	93
<b>Զ. Նախաբան Նոր Կտակարանի</b>	<b>96</b>
29. Յունական եւ Հռոմէական Իշխանութեան Ներքեւ	96
30. Գրականութիւն, Կրօնական Խմբակներ եւ Հաստատութիւններ Յիսուսի Օրերուն	99
31. Նոր Կտակարանին Պատգամը՝ Աստուած Մեզի Հետ է	103

<b>Է. Տէր Յիսուսի Առաքելութիւնը</b>	<b>106</b>
32. Աւետարան ըստ Մարկոսի	106
33. Հատուածներ՝ Մարկոսի Աւետարանէն	109
34. Աւետարան ըստ Մատթէոսի	112
35. Հատուածներ՝ Մատթէոսի Աւետարանէն	116
36. Աւետարան ըստ Ղուկասի	120
37. Հատուածներ՝ Ղուկասի Աւետարանէն (Ա.)	123
38. Հատուածներ՝ Ղուկասի Աւետարանէն (Բ.)	126
39. Գործք Առաքելոց	129
40. Հատուածներ՝ Գործք Առաքելոցէն	132
<b>Ը. Պօղոս Առաքեալ - Ի՞նչ Գրեց</b>	<b>136</b>
41. Պօղոս Առաքեալի Ճամբորդութիւնները եւ Նամակները	136
42. Թուղթ առ Կորնթացիս Ա.Բ.	138
43. Թուղթ առ Գաղատացիս	141
44. Թուղթ առ Հռովմայեցիս	144
45. Թուղթ առ Փիլիպպեցիս	147

46. Թուղթ առ Կողոսացիս	150
47. Թուղթ առ Եփեսացիս	153
48. Թուղթ առ Տիմոթէոս Ա., Բ. եւ Տիտոս	156
<b>Թ. Քանի մը Ընդհանրական Նամակներ</b>	<b>158</b>
49. Թուղթ առ Եբրայեցիս	158
50. Թուղթ Յակոբու	161
51. Թուղթ Ա. Պետրոսի	164
<b>Ժ. Յովհաննէս Աւետարանիչի Գործերէն</b>	<b>166</b>
52. Աւետարան ըստ Յովհաննէսի	166
53. Հատուածներ՝ Յովհաննու Աւետարանէն	169
54. Ա. Յովհաննու	173
55. Յայտութիւն Յովհաննու	175
<b>Օգտագործուած Աղբիւրները</b>	<b>180</b>

## **Ներկայ Հրատարակութեան Մասին**

Ներկայ հրատարակութիւնը արդիւնքն է 2001–2004 տարիներուն ընթացքին տարած աշխատանքիս: Օրին՝ Լիբանանի Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդը ծրագրեց Հայ Աւետարանական վարժարաններու բոլոր դասարաններուն համար Աստուածաշունչի դասագիրքեր պատրաստել: Ուրիշներու կողքին, ինծի վստահուեցաւ 7րդ, 8րդ եւ 10րդ դասարաններու դասագիրքերը պատրաստելու աշխատանքը: Այս հրատարակութիւնը ամփոփումն է 7րդ «Հին Կտակարանի Քաղուածք» եւ 8րդ «Նոր Կտակարանի Քաղուածք» դասարաններու ծրագիրներուն, որոշ փոփոխութիւններով:

Հոս պէտք է յիշել թէ Կրթական Խորհուրդը երեք ընթերցողներ ճշդած էր վերոնշեալ ծրագիրին համար.– Տիկ. Մարիէթ Ծահնագարեան՝ դաստիարակչական ընթերցումի, Վեր. Ծան Խանճեան՝ պատմական ընթերցումի եւ Վեր. Յովհաննէս Սվաճեան՝ լեզուական ընթերցումի համար: Ընորհակալութիւն իրենց:

Ընորհակալութիւն եւս Լիբանանի Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդին, որ այս ծրագիրին գաղափարը յղանալով առիթ ստեղծեց անոր իրականացման: Ընորհակալութեան խօսք եւս Տիկնայք Սօսի Չիլինկիրեանի եւ Եւնիկէ Եագուպեանի, գործէն տարբեր մասեր կարդալով պէտք եղած լեզուական սրբագրութիւնները կատարելուն համար. ինչպէս նաեւ Տիկ. Անի Քեստենեան–Պասէթի, գիրքին կողքին դասատրումին համար:

Հոս նաեւ պէտք է նշել թէ ներկայ աշխատանքը կը հետեւի Աստուածաշունչի Հին եւ Նոր Կտակարաններուն ընդհանուր պատմութեան գիծին, առանց գիրք առ գիրք սերտելու Աստուածաշունչը: Պատմական տեսանկիւն ըսելով հիմնականօրէն ի մտի ունիմ Աստուածաշունչին

ներկայացուցած պատմությունը, ինչպես նաև կարելի եղածին չափ ջանացած եմ զայն առնչել մարդկության համայն պատմության, եւ այս պատճառով է որ Նոր Կտակարանի բաժնին մէջ, նախ կը սերտուի Մարկոսի Աւետարանը (իր արձանագրութեան կանուխ թուականին համար) եւ գիրքին վերջաւորութեան՝ Յովհաննէսի Աւետարանը, իր ուշ գրուելուն պատճառով: Անշուշտ կարելի չէ շատ մը դէպքերու, որոնք Աստուածաշունչին մէջ արձանագրուած են, ճշգրիտ թուական սահմանել, ուրեմն յաճախ դիմած եմ «մօտաւորապէս» կամ «շուրջ» բառերուն, մատնանշելու թուականներուն անստուգութիւնը: Այս պատմական տեսանկիւնին կողքին, նկատի ունենալու ենք թէ Աստուածաշունչին հեղինակներուն նպատակը պատմագրութիւն չէ եղած, այլ՝ իրենց հոգեւոր փորձառութեան վկայութիւնը յաջորդ սերունդներուն փոխանցելը: Ուստի, աշխատանքը կը պարունակէ նաև որոշ հոգեւոր խորհրդածութիւններ, տարբեր պատմութիւններու եւ գրութիւններու առնչութեամբ, յատկապէս մատնանշելու Աստուածաշունչին հոգեւոր բնոյթն ու նպատակը: Այս խորհրդածութիւնները ուրեմն կը ջանան որոշ պատմական իրողութիւններու կողքին Աստուածաշունչին հոգեւոր իմաստն ու նշանակութիւնը երեւան բերել:

Ներկայ հրատարակութիւնը կրնան գործածել անհատներ, ինչպէս նաև բոլոր հայկական վարժարանները կամ եկեղեցական խմբակները, որոնք կարիքը ունին Աստուածաշունչի սերտողութեան համար հայերէն աղբիւրի մը:

Վերջապէս յատուկ շնորհակալութիւն Դոկտ. Արմէն Իւրենշլետանին, որուն բժախնդիո ընթերցումն ու լեզուական սրբագրութիւնը կարելի դարձուցին որ գործը սահուն լեզուական արտայայտութիւններով, յստակ գաղափարներով եւ մաքուր հայերէնով ընթերցողին հրամցուի:

## **Ներածական**

Մօտ 2000 տարիներ անցած են Աստուածաշունչի Նոր Կտակարանի դէպքերուն եւ 3500-4000 տարիներ Հին Կտակարանի դէպքերուն: Ինչո՞ւ քրիստոնեան այսօր տակաւին Աստուածաշունչը կը նկատէ հաւատքի հիմք եւ ուղեցոյց: Ի՞նչ ըսել կ'ուզէ Քրիստոնեայ Եկեղեցին երբ կը յայտարարէ թէ Աստուածաշունչը հեղինակաւոր աղբիւր է Քրիստոնէական Հաւատքին:

Անկասկած, Աստուծոյ սէրը եւ շնորհքը աշխարհի եւ մարդկութեան հետ մշտական եղած են, մանաւանդ Աստուծոյ Հոգիին ներկայութեամբ եւ առաջնորդութեամբ: Սակայն Աստուածաշունչի հերոսները յատուկ ձեւով ճանչցած եւ վայելած են Աստուծոյ առաջնորդութիւնը՝ իսկ Յիսուս Քրիստոսի անձին՝ մանաւանդ անոր կեանքին, մահուան եւ յարութեան մէջ, Աստուած իրաւաւորութեամբ ձեւով յայտնուած է մարդ արարածին: Յիսուսը որպէս Տէր եւ առաջնորդ ընդունելով քրիստոնեան կը դառնայ Աստուծոյ որդի, ժառանգորդ եւ Քրիստոսի ժառանգակից (Հռ .8.17): Աստուածաշունչի ընթերցումով եւ սերտողութեամբ մարդ աւելիով կը սորվի Աստուծոյ, կեանքի, ստեղծագործութեան եւ մարդ արարածին մասին. ան կ'անդրադառնայ Աստուծոյ շնորհքին եւ բարի կամքին՝ պատմութեան ընդմէջէն, ինչպէս որ հրեայ ժողովուրդը, փորձառաքար տարիներու ընթացքին, գիտցաւ եւ հասկցաւ Աստուծոյ եւ ստեղծագործութեան մասին Աստուծոյ ամենօրեայ առաջնորդութեան ընդմէջէն:

Պօղոս առաքեալ վերոյիշեալ հատուածին մէջ կը գրէ. – «Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներն ենք» (Հռ. 8.16): Աստուածաշունչը Հոգիին վկայութեան միանալով կը վկայէ Տէր Յիսուսի մասին իբրեւ ճշմարիտ Խօսքը: Ուրեմն Աստուածաշունչին վկայութեան եւ պատգամին անդրադառնալով կը վերոյիշենք Բարի Լուրը, որ մեզի տրուած է Աստուծմէ՝ «Աստուած մեզի հետ»:

Աստուած կը շարունակէ սիրել եւ հրաւիրել բոլոր մարդիկը ընդունելու իր շնորհքը, սէրն ու առաջնորդութիւնը, եւ ապրելու ճշմարտութիւնով, սիրով եւ ազատութիւնով:

**Աստուածաշունչի գիրքերը եւ իրենց համառօտագրութիւնները**

**Հին Կտակարան**

**Օրէնքներու գիրքեր**

Ծննդոց	Ծն.
Ելից	Ել.
Ղեւտացոց	Ղւ.
Թուոց	Թւ.
Երկրորդ Օրինաց	Բ.Օր.

**Պատմական Գիրքեր**

Յեսուայ	Յս.
Դատաւորաց	Դտ.
Հոութայ	Հո.
Ա. Թագաւորաց	Ա.Թգ.
Բ. Թագաւորաց	Բ.Թգ.
Գ. Թագաւորաց	Գ.Թգ.
Դ. Թագաւորաց	Դ.Թգ.
Ա. Մնացորդաց	Ա.Մն.
Բ. Մնացորդաց	Բ.Մն.
Եզրասայ	Եզ.
Նէեմեայ	Նէ.
Եսթերայ	Ես.

**Բանաստեղծական Գիրքեր**

Յոբայ	Յոբ.
Սաղմոսաց	Սղ.
Առակաց	Առ.
Ժողովողի	Ժղ.
Երգ Երգոց	Երգ.

**Մարգարեության Գիրքեր**  
**Եսայեայ**

Ես.

Երեմեայ  
Ողբ Երեմեայ  
Եզեկիելի  
Դանիելի  
Ովսեայ  
Յովելեայ  
Ամովսայ  
Աբդիու  
Յովնանու  
Միքիայ  
Նաուումայ  
Ամբակումայ  
Սոփոնեայ  
Անգեայ  
Զաքարեայ  
Մաղաքեայ

Եր.  
Ողբ.  
Եզ.  
Դն.  
Ովս.  
Յվլ.  
Ամս.  
Աբդ.  
Յվն.  
Մք.  
Նւ.  
Ամբ.  
Սփ.  
Անգ.  
Զք.  
Մղ.

**Նոր Կտակարան**

**Աւետարան**

Ըստ Մատթեոսի  
Ըստ Մարկոսի  
Ըստ Դուկասու  
Ըստ Յովհաննու

Մտ.  
Մր.  
Ղկ.  
Յհ.

Գործք Առաքելոց

Գրծ.

**Թուղթ Պողոսի առաքելոյն**

Առ Հռովմայեցիս  
Առ Կորնթացիս Ա.  
Առ Կորնթացիս Բ.

Հռ.  
Ա. Կր.  
Բ. Կր.

<i>Ան Գաղատացիս</i>	<i>Գղ.</i>
<i>Ան Եփեսացիս</i>	<i>Եփ.</i>
<i>Ան Փիլիպպեցիս</i>	<i>Փլպ.</i>
<i>Ան Կողոսացիս</i>	<i>Կղ.</i>
<i>Ան Թեսաղոնիկեցիս Ա.</i>	<i>Ա.Թս.</i>
<i>Ան Թեսաղոնիկեցիս Բ.</i>	<i>Բ.Թս.</i>
<i>Ան Տիմոթէոս Ա.</i>	<i>Ա.Տմ.</i>
<i>Ան Տիմոթէոս Բ.</i>	<i>Բ.Տմ.</i>
<i>Ան Տիտոս</i>	<i>Տիտ.</i>
<i>Ան Փիլիմոն</i>	<i>Փլմ.</i>
<i>Թուղթ Ան Եբրայեցիս</i>	<i>Եբր.</i>
<b><i>Թուղթ Ընդհանրական</i></b>	
<i>Յակոբոս ընդհանրական</i>	<i>Յկ.</i>
<i>Պետրոսի Ա. ընդհանրական</i>	<i>Ա.Պտ.</i>
<i>Պետրոսի Բ. ընդհանրական</i>	<i>Բ.Պտ.</i>
<i>Յովհաննոս Ա. ընդհանրական</i>	<i>Ա.Յհ.</i>
<i>Յովհաննոս Բ. ընդհանրական</i>	<i>Բ.Յհ.</i>
<i>Յովհաննոս Գ. ընդհանրական</i>	<i>Գ.Յհ.</i>
<i>Յուդայի ընդհանրական</i>	<i>Յդ.</i>
<b><i>Յայտնութիւն Յովհաննոս</i></b>	<i>Յյտ.</i>



**Ա. Նախաբան Հին Կտակարանի**  
**1. Հին Կտակարանին Կազմութիւնը**

**Ինչպէ՞ն հաւաքուած են Հին Կտակարանի գրութիւնները**  
Հին Կտակարանի գիրքերուն բուն աղբիւրներ եղած են բերանացի աւանդութիւնները, օրէնքները եւ գրոյցները: Դարեր շարունակ Իսրայէլի ժողովուրդը այս աւանդութիւնները բերանացի կը սորվէր եւ յաջորդ սերունդներուն կը փոխանցէր, պատմութիւնը պահելու եւ Աստուծոյ ու անոր գործերուն մասին սորվեցնելու համար: Երկար տարիներու վրայ, գրի առնուած եւ հաւաքուած են այս բոլորը, այսպիսիվ Հին Կտակարանը կազմուած է:

**Աստուծոյ եւ մարդուն դերը**

Հին Կտակարանը պատմութիւնն է մարդուն հետ Աստուծոյ մշակած երկար տարիներու յարաբերութեան: Մարդիկ Աստուծոյ առաջնորդութեամբ վկայած են, գրաւոր կերպով, իրենց կեանքերուն մէջ Աստուծոյ գործին մասին:

**Ի՞նչ են Հին Կտակարանի լեզուները**

Հին Կտակարանի երկու հիմնական լեզուներն են եբրայերէնը եւ արամերէնը, որոնք Միջին Արեւելքի մէջ տարածուած սեմական լեզուներէն էին: Հին Կտակարանը նաեւ թարգմանուած է Յունարէնի 3-2րդ դարերուն Ք.ա., Եգիպտոսի մէջ: Այս թարգմանութիւնը կը կոչուի «Եօթանասնից» թարգմանութիւն (LXX, Հռոմէական թուանշանը հաւասար է 70ի) որովհետեւ կը կարծուի թէ թարգմանութիւնը կատարուած է եօթանասուն հոգիներու կողմէ:

**Ինչպե՞ս զարգացած է Հին Կտակարանի գիրքերուն գրա-  
նումը**

Առաջին հինգ (Օրենքի) գիրքերը գրուած ըլլալու են  
Ք.ա. շուրջ 400 թ.ին, Եզրասի օրերուն, որուն առաջ-  
նորդութեամբ հրեայ ժողովուրդը Բաբելոնի Աքսորէն  
Երուսաղէմ վերադարձաւ: Մարգարէութեան գիրքերը եւ  
Բանաստեղծական գրութիւններուն մեծ մասը բաւական  
հին ժամանակին գրուած են: Անոնք կը հաւաքուին Ք.ա.  
շուրջ 200 թ.ին: Առաջին դարու վերջաւորութեան  
կազմուելով Հին Կտակարանը կը ստանայ իր վերջնական  
ձեւը:



Հին Կտակարանի պատմութիւնները վկայութիւններ են, թէ  
ինչպէս Աստուած գործած է ժողովուրդի մը կեանքին մէջ:  
Այս պատմութիւնները մեզ կը հրաւիրեն Աստուծոյ դառ-  
նալու եւ զինք փնտոելու մեր կեանքի մանրամաս-  
նութիւններուն մէջ, իր առաջնորդութիւնը եւ օգնութիւնը  
խնդրելու, ինչպէս Հին Կտակարանի ժողովուրդը խնդրեց  
եւ վայելեց:



## **2. Հին Կտակարանի Կանոնականացումը**

### **Ի՞նչ կը նշանակէ կանոնականացում**

Կանոնականացում բառը եկած է յունարէն [Canon] բառէն, որ կը նշանակէ Օրէնք: «Կանոնական» բառը կը գործածուի Աստուածաշունչի գիրքերուն համար, որոնք ընդունուած են Եկեղեցիին կողմէ, որպէս վերջնական եւ հեղինակաւոր գիրքեր: Հետեւաբար, Աստուածաշունչը Եկեղեցիին անփոփոխ Գիրքը կը նկատուի:

### **Հին Կտակարանի գիրքերու բաժանումները**

Հին Կտակարանը կարելի է բաժնել հետեւեալ բաժանումներու.-

- Ա. Հնգամատեան կամ Օրէնքներու գիրքեր՝ (Ծննդոցէն - Բ. Օրինաց). հրեաները այս գիրքերը կը կոչեն [Torah]
- Բ. Պատմական գիրքեր՝ (Գիրք Յեսուայէն - Գիրք Եսթերայ).
- Գ. Բանաստեղծական եւ իմաստութեան գիրքեր՝ (Գիրք Յոբայէն - Երգ Երգոց).
- Դ. Մարգարէութեան գիրքեր՝ (Եսայեայէն - Մաղաքիա).

### **Ե՞րբ եւ ինչպէ՞ս եղած է Հին Կտակարանի կանոնականացումը**

Հաւանաբար Օրէնքներու գիրքերը կանուխէն ընդունուած էին որպէս հեղինակաւոր գրութիւններ (մօտ 5րդ դար Բ.ա.): Հին Կտակարանի գիրքերուն մեծամասնութիւնը սակայն Բ.ա. 2րդ դարուն վերջաւորութեան ամբողջացած եւ ընդունուած ըլլալու են որպէս հեղինակաւոր

գրություններ: Ներկայիս, հրեաներ, Աւետարանական Եկեղեցին եւ կարգ մը Ուղղափառ եկեղեցիներ Հին Կտակարանը կը ճանչնան այդ ձեռին մէջ (39 գիրքեր): Սակայն, Կաթողիկէ Եկեղեցին եւ որոշ Ուղղափառ եկեղեցիներ կ'ընդունին նաեւ եօթը [Apocrypha] (Անվատեր) կոչուած գիրքեր, որոնք անելցուած են «Եօթանասնից» թարգմանութեան ժամանակ: Հետեւաբար, անոնց ընդունած Հին Կտակարանը կը բաղկանայ 46 գիրքերէ:



Յիսուս գործածեց Հին Կտակարանը որպէս իր «Աստուածաշունչը». սակայն Յիսուսին Հին Կտակարանի ընթերցումը բառացի ընթերցում չէր, այլ՝ հոգեւոր: Ան բառին չկառչեցաւ, այլ բառին ետին գտնուող Հոգիին: Այսպիսով Յիսուս Հին Կտակարանին եւ հին Օրէնքին խորքը թափանցեց եւ յայտնաբերեց: Ան նաեւ Հին Կտակարանէն մէջբերելով փորձություններու դէմ դրաւ եւ չարին յաղթեց:



### **3. Հին Կտակարանի Աշխարհը**


Հին Կտակարանի աշխարհը, որ Միջերկրական Ծովի արևելքէն մինչեւ Միջագետք կը տարածուէր, շրջապատուած էր բնական լեռներով եւ անապատներով: Այս մէկը օգնած է, որ մարդիկ յարաբերաբար ապահով կեանք, եւ հետեւաբար՝ քաղաքակրթութիւն ունենան:

Հին Կտակարանի բուն դէպքերը պատահած են Պաղեստինի մէջ. իսկ որոշ դէպքեր՝ Եգիպտոսի եւ Միջագետքի մէջ: Պաղեստինը կը կոչուէր Քանանու երկիր. Աստուած Աբրահամի կը խոստանայ այս երկիրը տալ, հետեւաբար կը կոչուի նաեւ խոստացեալ Երկիր: Տարիներու ընթացքին այս շրջանը եղած է կարեւոր շրջան մը: Շատեր կը ճամբորդէին կամ կ'անցնէին Պաղեստինէն, որովհետեւ այդ կը միացնէր երեք ցամաքամասերը՝ Եւրոպան, Ասիան եւ Ափրիկէն:

#### **Շրջակայ երկիրներու ազդեցութիւնը պատմութեան ընթացքին**

1. **Եգիպտոսը** Քանանու Երկրին վրայ իշխած է հրեաներուն Պաղեստին մտնելէն առաջ:
2. **Ասորեստանը** Ք.ա. 9րդ դարուն կը բարգաւաճի, Սամարիան կը գրաւէ ու Ք.ա. 722 թ.ին ժողովուրդը գերութեան կը տանի, սակայն, շուտով կը տկարանայ:
3. **Բաբելոնը** կը զօրանայ Ք.ա. 18րդ դարուն Համուրապիի օրերուն. ապա՝ Ասորեստանի իշխանութեան տակ կը մնայ: 625 էն ետք դարձեալ կը զօրանայ: 597ին Երուսաղէմի վրայ կ'իշխէ. 587ին կը կործանէ զայն եւ ժողովուրդը գերութեան կը տանի դէպի Բաբելոն:

## Հրեայ ժողովուրդին Ճամբորդությունները



4. Պարսկաստանը կը զօրանայ Կիւրոսի օրերուն, կ'իջիտ Միջին Արեւելքի վրայ Ք.ա. 550-529ի միջեւ եւ ազատութիւն կու տայ հրեաներուն որ Պաղեստին վերադառնան:

5. Յունաստանը Մեծն Աղեքսանդրի օրով կ'իջիտ Պաղեստինի վրայ Ք.ա. 333 թ.ին:

6. Հռոմ կ'իջիտ յոյներուն վրայ 63 թ.ին: Պաղեստին կը մտնէ Հռոմի իշխանութեան տակ:



*Պատմութեան ընդմէջէն կ'անդրադառնանք թէ ինչպէս հրեայ ժողովուրդը դժուարութիւններու եւ արտոյի հանդիպած է: Հրեաներ երբեմն Աստուծմէ հեռանալով Աստուծոյ եւ իրենց ուխտին անհաւատարիմ գտնուած են, իսկ ուրիշ անգամներ ջանացած են Աստուծոյ հետ իրենց կատարած ուխտին հաւատարիմ մնալ:*





**Բ. Աշխարհին եւ Ժողովուրդի մը Ծնունդը**  
**4. Աստուած՝ Ստեղծիչը**

**Աստուծոյ բարի ստեղծագործութիւնը**

Աստուծոյ մասին յաճախ կը խօսինք որպէս Արարիչ՝ Ստեղծիչ: Ան է աղբիւրը ամբողջ ստեղծագործութեան եւ ամէն կենդանի էակի: «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց», «եւ Աստուած իր բոլոր ըրածը տեսաւ: Ահա շատ բարի է»:

Այս ստեղծագործութեան մէջ մարդ արարածը յատուկ տեղ կը գրաւէ: Ան «Աստուծոյ պատկերովը» ստեղծուած է: Սակայն, մարդը յաճախ հեռանալով Աստուծմէ, անհաւատարիմ կը գտնուի իր իսկական պատկերին: Այս մէկը յստակ է Ադամ եւ Եւայի պատմութեան մէջ, ինչպէս նաեւ Կայէն եւ Աբէլի, Նոյի եւ Բաբելոնի աշտարակին պատմութիւններուն մէջ:

**Մարդ՝ Աստուծոյ պատկերով՝ բարի**

Աստուածաշունչի պատմութիւններուն մէջ յաճախ կ'անդրադառնանք մարդուն մեղաւոր ընթացքին, որուն պատճառը եղած է իր հպարտութիւնը, ինչպէս նաեւ՝ եղբոր հանդէպ ունեցած նախանձը: Սակայն միեւնոյն ժամանակ կ'անդրադառնանք Աստուծոյ բարի ներկայութեան եւ միջամտութեան: Աստուծոյ սէրը եւ շնորհքը բաւարար են մարդը մեղաւոր վիճակէն հանելու եւ իսկական բարի պատկերին դարձնելու: Աստուծոյ ողորմութիւնը եւ շնորհքը ներկայ են: Ան կը շարունակէ սիրել եւ հոգալ բոլորը:

«Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկա, արու եւ էգ ստեղծեց զանոնք» (ԾՆ.1.27):

## **ԾՆՆՈՒՄ ԳԻՐՔՐ**

ԾՆՆՈՒՄը Հնգամատեանի առաջին գիրքն է: Գիրքը կը ներկայացնէ աշխարհին, մարդոց եւ յատկապէս հրեայ ժողովուրդին ծնունդը: Հնգամատեանին մէջ Մովսէսն է բուն դերակատարը. ան նաեւ ներդրում ունեցած է որոշ դէպքեր եւ օրէնքներ գրի առնելու ընթացքին մէջ:

ԾՆՆՈՒՄ 1-11ի մէջ կը գտնենք համաշխարհային եւ ընդհանուր մարդկութեան վերաբերող ճշմարտութիւններ, որոնք խորհրդանշական ոճով արձանագրուած են: Այս գլուխները աստուածաբանական պատկերացում են (ոչ պատմական) աշխարհի ծագումին, մարդ արարածին ինքնութեան, եւ Աստուծոյ հետ մարդուն ունեցած յարաբերութեան մասին:

## **Պատմական եւ հոգեւոր ընթերցումներ**

Պէտք է հոս զանազանութիւն դնել պատմական հետազօտումի եւ հոգեւոր ընթերցումի միջեւ: Պատմական հետազօտութիւնը կը հետապնդէ պատմական իրողութիւններ կամ ճշմարտութիւններ, որոնք գիտականօրէն կարելի է ուսումնասիրել եւ վերլուծել. իսկ հոգեւոր ընթերցումը կը ձգտի հոգեւոր իմաստ եւ հոգեւոր ճշմարտութիւն գտնել Աստուածաշունչի գրութիւններուն մէջ: Խորքին մէջ, Աստուածաշունչը հոգեւոր ճշմարտութեան աղբիւր է: Հաւանաբար, կարելի է Եկեղեցոյ Հայրերէն Որոգիներէսի [Origen] (184-253) հետ ըսել, թէ՛ «Ամբողջ Աստուածաշունչը ունի հոգեւոր իմաստ, բայց բոլոր գրութիւնները ֆիզիքական [կամ պատմական] նշանակութիւն չունին. որովհետեւ յաճախ անկարելի կը դառնայ հոն ֆիզիքական ճշմարտութիւն գտնելը»:



Աստուած բարի Աստուած է: Ան ամէն բան բարի ստեղծեց. կը հաւատանք որ Աստուծմէ կը ստանանք միայն ինչ որ բարի է:

Ադամ եւ Եւայի, Կայէն եւ Աբելի... պատմութիւնները իւրաքանչիւր մարդու պատմութիւնն են: Մարդ յաճախ կը խզէ իր յարաբերութիւնը Աստուծոյ հետ, կը նախանձի եւ իր եղբօր վնաս կը հասցնէ:



## 5. Աբրահամ՝ Հաւատքի Օրինակ Մը

### **Աբրահամ**

Աստուած Աբրահամը կը կանչէ, անոր հետ ուխտ մը կ'ընէ եւ խոստում մը կու տայ: «Քու հօրդ տունէն գնա՛ այն երկիրը, որ ես քեզի պիտի ցուցնեմ: Քեզ մեծ ազգ պիտի ընեն ու քեզ պիտի օրհնեն . . . ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին» (Ծննդ.12.1-3):

Աստուծոյ այս խոստումը կը կրկնուի Աբրահամի զաւակներուն՝ Իսահակին (26.2-4), Յակոբին (28.13) եւ Յովսէփին (45.1-17): Յովսէփի օրերուն սովի պատճառով, մեծ թիով հրեաներ ձգելով Քանանու Երկիրը կը փոխադրուին Եգիպտոս: Յովսէփի պատմութիւնով ընտանեկան պատմութիւնները կ'աւարտին եւ կը սկսի ազգի մը պատմութիւնը:

### **Աբրահամի հաւատքն ու վստահութիւնը**


Աբրահամ հաւատաց եւ վստահեցաւ Աստուծոյ: Ան ձգեց իր հօրը տունը, ուր մեծցած էր՝ Ուր քաղաքին մէջ, որ Միջագետքի մէջ կը գտնուէր եւ գնաց նախ դէպի Խառան (Միջագետքի հիւսիս-արեւմուտքը, Գրծ.7.2,4) ապա դէպի Քանան, հոն ուր Աստուած զինք առաջնորդեց: Պատմութեան մէջ կը տեսնենք թէ ան նոյնիսկ պատրաստ կ'ըլլայ Աստուծոյ համար իր որդին զոհելու. այս մէկը կը յայտնէ Աբրահամին խոր վստահութիւնը Աստուծոյ հանդէպ: Ան նիւթական եւ շօշափելի պապահովութիւն մը չփնտոեց, այլ իր ամբողջ յոյսը իսկապէս Աստուծոյ վրայ դրաւ:

«Աբրամ հաւատաց Տէրոջը, որը  
Աբրամին արդարութիւն սեպուեցաւ»  
(Ծն.15.6):

## **Հայրերու շրջան**

Ք.ա. 3000 թ.ին պատմությունը կը սկսի Միջին Արեւելքի մէջ: Գիրն ու մշակոյթը, ինչպէս նաեւ հողագործութիւնն ու շինարարութիւնը կը զարգանան Միջագետքի եւ Եգիպտոսի շրջաններուն մէջ:

Հաւանաբար Աբրահամի ճամբորդութիւնը Խառանէն դէպի Քանանու Երկիրը, տեղի ունեցած է Ք.ա. 2000-1950 թուականներուն: Աբրահամով կը սկսի «Հայրերու Շրջան» ը Հին Կտակարանին մէջ, եւ կը շարունակուի Ծննդոց գիրքի հիմնական անձնաւորութիւններուն ասպած ժամանակաշրջանին տեսողութեամբ: Ծննդոցին մէջ կը կարդանք Աբրահամի, Յակոբի եւ Յովսէփի ընտանեկան պատմութիւններու մասին, որոնք կը նկարագրեն հայրերուն հաւատքը Աստուծոյ հանդէպ: Աստուած հետաքրքրուած է անհատներով եւ պատրաստ է անոնց հետ ուխտ կնքելու:



Կատարեալ վստահութիւն Աստուծոյ վրայ. այն է Աբրահամին պատմութեան պատգամը մեզի:

## 6. Աստուած կը Փրկէ իր Ժողովուրդը

### Հրեաներուն դժուար կացութիւնը

Եւ.1.11 Էն կ'իմանանք, թէ նոր թագաւորի (փարաւոնի) մը օրով, հրեաներ չարչարանքի ենթարկուած էին եւ պարտադրուած էին ծանր գործեր ընելու, քաղաքներ շինելու նպատակով (Փիթօմը ու Ռամսէսը): Անոնք շատ դժուարութիւններու մատնուած էին եւ կորսնցուցած՝ իրենց ազատութիւնն ու ինքնութիւնը: Ուրեմն, Աստուծոյ կը դիմեն



օգնութեան համար: Այս պայմաններուն տակ Աստուած կը լսէ գերութեան մէջ հրեաներուն բարձրացուցած հառաչանքը եւ օգնութեան կը հասնի: Ան Մովսէսը կը կանչէ, որպէսզի հրեայ ժողովուրդը Եգիպտոսէն դուրս հանէ:

### Ո՞վ էր Մովսէս

Մովսէս հրեայ ըլլալով, մեծցած էր Փարաւոնին տունը: Ան կը հնազանդի Աստուծոյ կոչին եւ հրեայ ժողովուրդը կ'առաջնորդէ Եգիպտոսէ դուրս, այդպիսով հրեաներ իրական ազգ մը ըլլալու փորձառութիւնը ունեցան, մինչ Աբրահամին միջոցով ազգ ըլլալու խոստումը տրուած էր իրենց:

### Ծամբորդութեան ընթացքը

Աստուած իր ժողովուրդին հետ էր անոնց ճամբորդութեան ընթացքին Եգիպտոսէն մինչեւ Քանանու Երկիր: Հրեաներ

կը ճանչնան զԱստուած իբրեւ Փրկիչ եւ Ազատիչ, ինչպէս նաեւ իբրեւ հոգացող Աստուած, որ առտուները երկինքէն հաց կու տար, իսկ իրիկունները միս: Ան կ'առաջնորդէր ժողովուրդը կրակով եւ ամպով: Աստուած նաեւ Մովսէսին կու տայ տասը պատուիրանները, անոնցմով ժողովուրդը ուղղելու:

### **Ելիցի Շրջանը**

«Հայրերու Շրջան» ը կ'աւարտի Յովսէփով Ք.ա. շուրջ 1550 թ.ին: Եգիպտոսի մէջ հրեաներ ապրեցան շուրջ 400 տարի: Եգիպտոսէ ելիցը հաւանաբար պատահած է Ք.ա. 1300-1250 թուականներուն:

### **Աստուծոյ հետ ուխտը**

Ուխտը երկու կողմերու միջեւ դաշինք կամ համաձայնութիւն է, որ հիմնուած է իրարու հանդէպ ունեցած վստահութեան վրայ:

Աստուած Մովսէսին հետ ուխտ կ'ընէ եւ ժողովուրդէն կը պահանջէ, որ հաւատարիմ ու հնազանդ ըլլայ իրեն: Աստուծոյ եւ հրեայ ժողովուրդին միջեւ կնքուած ուխտին իբրեւ նշան տրուեցան օրէնքները, որոնք կը պատուիրեն Աստուծոյ հաճելի կեանք ապրիլ, եւ մարդոց նկատմամբ ճիշդ յարաբերութիւն եւ վարմունք ունենալ:



*Հրեաներուն Եգիպտոսէ ելլելու պատմութիւնը Հին Կտակարանի ամենակարեւոր պատմութիւններէն մէկն է: Աստուած կ'ազատէ իր ժողովուրդը գերութենէ, երբ ան իր ազատութիւնն ու ինքնութիւնը կորսնցուցած էր:*

*Աստուած կ'ազատէ մարդ արարածը յատկապէս իր ներքին (այսինքն հոգիին) գերութենէն: Աստուծոյ հետ եւ Աստուծոյ մէջ է մարդուն ազատութիւնը:*



## **7. Ժողովուրդը Սինայի Մէջ - Օրէնքներ եւ Տօներ**

### **Ժողովուրդը Սինայի մէջ**

Ժողովուրդին ճամբորդութիւնը Մովսէսի առաջնորդութեամբ Եգիպտոսէն դէպի Քանանու Երկիր երկար էր: Այս շրջանին է որ շատ մը օրէնքներու եւ տօներու հիմը դրուեցաւ, որոնք հիմնականօրէն աստուածային յայտնութեամբ Մովսէս փոխանցեց ժողովուրդին: Ուրեմն, հոս անդրադառնալու ենք անոնցմէ հիմնականին, եւ ապա անոնց բուն իմաստին եւ նշանակութեան:

### **Օրէնքներ եւ պատուէրներ**

Հրեայ ժողովուրդը ունեցած է անհատական, դատական եւ ժառանգական, պաշտամունքի եւ ծէսերու օրէնքներ. Որպէս անհատական օրէնքներու օրինակ, յիշենք թէ ամէն մարդ մաքուր պահելու էր իր մարմինը, այսինքն պիղծ կենդանիի միս ուտելու չէր, հեթանոսի հետ ուտելու կամ խօսակցելու չէր, հիւանդ կամ մեռած մէկու մը մօտենալու չէր. ամէն մարդ պահելու էր տասը պատուիրանները ինչպէս նաեւ Աստուծոյ հետ ուխտը:

### **Կարեւոր տօներ**

Հրեաները ունէին շատ տօներ, որոնք մինչեւ այսօր կը պահուին. անոնցմէ կը յիշենք.-

### **1. Տէրոջ Զատիկը եւ Բաղարջակերաց Տօնը**

Տէրոջ Զատիկը կը յիշատակէ հրեայ ժողովուրդին Եգիպտոսէն ազատուիլը, առաջին ամսուան (Ապրիլ) 14ին իրիկունը: Մորթուած, անարատ, մէկ տարեկան գառնուկը մէկ տան մէջ կ'ուտէին: Միսը կրակին վրայ կը խորովէին (որ ոսկոր մը չկտորի) եւ կ'ուտէին անխմոր (առանց թթխմորի) հացով եւ լեղի խոտերով: Այս ընթրիքը

հապճեպով կ'ուստէին՝ փախչելու պատրաստ վիճակի մէջ, յիշելու համար Եգիպտոսէն փախուստը: Ինչ որ յաջորդ առաւօտ մնար, կրակով այրելու էին:

Եթէ մէկը մեռելէ պղծուած կամ հեռաւոր ճամբորդութեան մէջ ըլլար, կրնար նոյնը 2րդ ամսուան մէջ նոյն ձեւով տօնել (ԹԼ.9.1-14): Նոյն ամսուան 15րդ օրը Բաղարջակերաց տօնն էր, որուն համար 7 օրեր անխմոր հաց ուտելու (Բաղարջ կը նշանակէ առանց թթխմորի եփած հաց) եւ Տէրոջը ողջակէզներ մատուցանելու էին:

## **2. Հունձքի Տօն - Պենտեկոստէի Տօն**

Այս տօնը կը զուգարիպի Բաղարջակերացէն 50 օրեր ետք. «Երբ ձեր երկրին հունձքը հնձէք, հնձած ատեննիդ արտին եզերքը լման մի՛ հնձէք, ու հունձքին մնացած հասկերը մի՛ հաւաքէք. Զանոնք աղքատին ու օտարականին թողուցէք» (ՂԼ.23.22):

## **3. Քաութեան Տօն**

Այս տօնին Քահանայապետը կը մտնէր «Սրբութիւն Սրբութեանց» վայրը եւ կ'աղօթէր ժողովուրդին մեղքերուն թողութեան համար (7րդ ամսուան 13րդ օրը):

## **4. Տաղաւարահարաց Տօն**


Այս տօնը կը յիշատակէ Իսրայէլի ժողովուրդին վրաններու կամ տաղաւարներու տակ բնակիլը, 7րդ ամսուան 15րդ օրէն սկսելով. «Եօթը օր տաղաւարներու մէջ պիտի բնակիք... որպէսզի ձեր սերունդները գիտնան, թէ՛ Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն հանած ատենս տաղաւարներու մէջ բնակեցուցի զանոնք» (ՂԼ.23.42-43):

## **Աստուծոյ Ներկայութեան Վրանը**

Ել.25-32, 35-40 գլ.ներուն մէջ կը կարդանք Աստուծոյ Ներկայութեան Վրանին մասին: Աստուած կ'ըսէ.- «Ինծի սրբարան մը թող շինեն, որպէսզի իրենց մէջ բնակիմ» (25.8): Վրանը ունէր իր սուրբ սրահը, որ «Սրբութիւն» կը կոչուէր: Այնտեղ կը գտնուէր Աստուծոյ մատուցուած հացին սեղանը, լոյսի աշտանակը, զոհի սեղանը եւ խունկ ծխելու սեղանը:

Սրահին կը յաջորդէր ասելի փոքր սենեակ մը, որ վարագոյրով բաժնուած կ'ըլլար եւ կը կոչուէր «Սրբութիւն Սրբութեանց»: Այնտեղ կը գտնուէր Ուխտի Տապանակը,\* որ կը պարունակէր 10 պատուիրանները:

Միայն քահանաները կրնային մտնել սուրբ սրահ. իսկ «Սրբութիւն Սրբութեանց» սրահը միայն Քահանայապետը կրնար մտնել, տարին մէկ անգամ, աղօթելու ժողովուրդին մեղքերուն համար:



\* Ըստ Ել.25.10-22ի, Ուխտի Տապանակը փայտէ սնտուկ մըն էր, ոսկիով պատուած, որ կը պարունակէր Մովսէսին տրուած երկու քարէ տախտակները, որոնց վրայ տասը պատուիրանները գրուած էին:



Նոր Կտակարանին մէջ կը կարդանք, թէ Տէր Յիսուս Վերջին Ընթրիքին իր աշակերտներուն հետ գատիկը կերաւ. «Բաղարջակերաց առաջին օրը աշակերտները Յիսուսի ըսին. Ո՞ր կ'ուզես որ քեզի պատրաստենք գատիկը՝ ուտելու համար»:

Դարձեալ կը կարդանք Յիսուսի խօսքերը որ ընթրիքի ժամուն ըսաւ. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս ... ամենքդ ալ խմեցէ՛ք ասկէ. Վասնզի ասիկա է իմ արիւնս Նոր Ուխտի, որ պիտի թափուի՝ շատերու մեղքերուն թողութեան համար» (Մտ.26.17-29): Հին Ուխտին փոխարէն, որ Աստուած Աբրահամին, Իսահակին, Յակոբին, Յովսէփին եւ Մովսէսին հետ կնքած էր, Տէր Յիսուսի կեանքով, մահով եւ յարութեան մեզմէ իւրաքանչիւրը կը հրաւիրուի Նոր Ուխտին Բաժնեկից ըլլալու: Այս իմաստով, Նոր Ուխտը հիմնուած է Յիսուս Քրիստոսով տրուած փրկութեան եւ շնորհքին վրայ, քան թէ Օրէնքին:

Ուրեմն, Նոր Ուխտով, Յիսուս ի՛նք եղաւ զոհը՝ գառնուկը: Իրմով Նոր Ուխտը կ'իրականանայ, առանց ողջակէզներ մատուցելու եւ առանց Քահանայապետին միջնորդութեան:

**Գ. Ուխտը Պահել՛, թէ՞ Զանց Ընել**  
**8. Խոստումը Իրականացած**  
**Քանանու Երկրին Գրաւումը եւ Բաժանումը**


**Յետու կը յաջորդէ Մովսէսին**

Մովսէսի մահէն ետք, Յետու կը յաջորդէ անոր որպէս Իսրայէլի ժողովուրդին առաջնորդը: Յետու կ'առաջնորդէ ժողովուրդը դէպի իրենց տրուած խոստումին իրականացումը (ասիկա Աստուծոյ նոյն խոստումն էր Աբրահանին՝ իրեն սերունդ եւ երկիր տալու):

Հրեաներ Յորդանանի գետը անցնելով, նախ Երիթովը կը գրաւեն, ետքը Գայինը, որմէ ետք կ'նուղղուին հիւսիս եւ հարաւ, խաղաղ կերպով կը հաստատուին բաւական ընդարձակ շրջաններու մէջ: Քանանու երկիր մուտքը եւ անոր գրաւումը տեղի կ'ունենայ Ք.ա. շուրջ 1250 թ.ին (Յես.1-12):

Քանանու Երկիրը մտնելէ ետք, Յետու կը բաժնէ զայն 12 ցեղերու միջեւ (Յես.13-21):

1. Ռուբէն
2. Շմաւոն
3. Ղեւի (մասնատր շրջան մը չստանար, այլ տարբեր շրջաններու մէջ քաղաքներ կ'ունենայ)
4. Յուդա
5. Իսաքար
6. Զաբուղոն
7. Ասեր
8. Գադ



9. Դան

10. Նեփթադիս

11. Յովսէփ (իր երկու որդիները՝ Մանասէ եւ Եփրեմ ժա-  
նանգութիւն առին)

12. Բենիամին

Երկրին այս բաժանումով, հրեայ ցեղերը տարած-  
ւեցան, եւ իրարմէ հեռու ապրելով սկսան Քանանացի  
հեթանոս ցեղերու հետ շփման մէջ մտնել եւ անոնց հետ  
յարաբերիլ: Այս մէկը հետագային պատճառ կը դառնայ  
հրեաներուն տկարութեան, ինչպէս նաեւ իրենց կրօնական  
եւ հոգեւոր արժէքներուն կորուստին:

### **Յեսու կը զգուշացնէ ժողովուրդը**

Յեսու իր հրաժեշտի ուղերձին մէջ (Յես.22-24), կը  
նախատեսէ գալիք վտանգը. ան կը զգուշացնէ  
ժողովուրդը օտար ազգերու հետ խառնուելէ եւ անոնց  
չաստուածները պաշտելէ: Յեսու կ'ըսէ. - «Եթէ ձեր Տէր  
Աստուծոյ ձեզի պատուիրած ուխտը զանց ընէք ու երթաք  
օտար աստուածներ պաշտէք... Տէրոջը բարկութիւնը ձեր  
վրայ պիտի բորբոքի ու ձեզի տուած ընտիր երկրին  
վրայէն շուտով պիտի կորսուիք» (Յես.23.16):

Մովսէս եւ Յեսու ժողովուրդը առաջնորդեցին եւ  
անոնց օգնեցին որ իրենց ուխտը նորոգեն Աստուծոյ հետ  
(Յես.24):



*Աստուծոյ ներկայութիւնը, առաջնորդութիւնը եւ սէրը կարելի չէ վայելել, երբ մարդ արարած հեռանայ Աստուծմէ: Աստուծոյ սէրը եւ առաջնորդութիւնը իրական են, այնքան ատեն որ մարդ պատրաստ է ընդունելու զանոնք իր կեանքէն ներս:*



## **9. Ներքին և Արտաքին Վստանգներ**

### **Յեսուէն ետք**

Յեսուի օրերուն հրեայ ժողովուրդը միաբան և զօրաւոր էր: Սակայն, անոր մահէն ետք «Իսրայէլի որդիները Տէրոջը առջեւ չարութիւն ըրին և իրենց Տէր Աստուածը մոռնալով Բահաղիմը ու Աստարովթը պաշտեցին» (Դտ.3.7): Դտ.3.5ին մէջ կը կարդանք.- «Իսրայէլի որդիները քանանացիներուն, քետացիներուն, ամօրհացիներուն, փերեզացիներուն, խեւացիներուն ու յեբուսացիներուն մէջ բնակեցան»:

Հրեաները օտար ազգերու հետ ապրելով և անոնց կրօնքներուն ծանօթանալով, յաճախ կը փորձուէին պաշտել անոնց շաստուածները և մոռնալ իրենց հաւատքն ու համոզումները:

### **Որո՞նք էին օտար ազգերը**

Օտար ազգերուն մասին գիտնալու համար վերադառնալու ենք Ք.ա. 2րդ հազարամեակի վերջաւորութեան, երբ տարբեր ազգեր արքայութեան Երոպայի արեւելքէն և Փոքր Ասիայէն (կեդրոնական Անատոլիայէն) Քետացիներուն (Հիթիթներուն) Թագաւորութեան անկումին պատճառով, տարբեր ցեղերու կողմէ: Անոնք եկան և հաստատուեցան Միջագետք, Սուրիա և Միջերկրականի ծովեզերքը: Քանանացիները հաստատուեցան Պաղեստին, սակայն, բաւական ժամանակ ետք, հրեաներուն զօրանալով, անոնք մասամբ գացին դէպի հիւսիս և ստացան փինիկեցի անունը:

Քետացիներ հաստատուեցան Պաղեստինի հարաւը, ամօրհացիներն ալ Միջագետքը ձգելով գաղթեցին Սուրիա և Պաղեստին: Հրեաները գրաւեցին Քանանու Երկրէն

որոշ մասեր, իսկ շատ մը ուրիշ քաղաքներ մնացին քանանացիներուն եւ այլ ազգերու իշխանութեան տակ:

### **Վտանգներուն դէմ**

Հրեաներ այս ժամանակաշրջանին տարբեր վտանգներ եւ դժուարութիւններ դիմագրաւեցին: Օրինակ, Քանանու Երկրին լեռնային տարածութիւնները պատճառ կ'ըլլային փոքր քաղաքներու գոյութեան եւ անոնց մեկուսացումին հրէական միւս բնակավայրերէն: Նաեւ օտար ազգերու հետ հրեաներուն պայքարը պատճառ կը դառնայ ցեղերուն բաժանումին: Այսպիսով հրեաներ կը հեռանան Աստուծմէ: Տարբեր դատաւորներ սակայն, կ'ազատեն ժողովուրդը իրենց թշնամիներէն եւ կը դառնան Իսրայէլի ցեղերուն կրօնական եւ գինուորական առաջնորդները: Անոնց միջոցով հրեաներ կը վերջիշեն իրենց կատարած ուխտը Աստուծոյ հետ:

### **Որո՞նք էին դատաւորները**

Ուրեմն, այս ներքին եւ արտաքին վտանգներուն պատճառով, ժողովուրդը շատ յաճախ անորոշ վիճակի կը մատնուէր, իր հաւատքը պահելու թէ լքելու որոշումին դիմաց: Դատաւորներուն միջամտութիւնը, սակայն, յաճախ առիթ եղած է հաւատքը վերջիշելու: Դատաւորները (թիւով մօտաւորապէս 12 հոգի) Աստուծոյ կողմէ ղրկուած զօրավարներ էին, որոնց վրայ Տիրոջ Հոգին գալով (Դատ.6.34; 11.29; 14.6; 15.14) այնպիսի գործեր կը գործէին, որոնք այլապէս պիտի չկարողանային ընել:

### **Ե՞րբ պատահած են այս պատմութիւնները**

Դատաւորներու դէպքերը տեղի ունեցած են մօտաւորապէս Ք.ա. 1200-1000 թուականներուն: Կարելի չէ այս պատմութիւնները ժամանակագրականօրէն շարել, որովհետեւ անոնք կը ներկայացնեն տարբեր ցեղերու

*պատմությունները: Որոշ շրջանի (կամ ցեղի) մը նեղու-  
թեան օրերը, ուրիշ շրջանի (կամ ցեղի) համար խաղաղ  
ժամանակ կրնայ ըլլալ:*



*Դատաւորներու շրջանը կը յիշեցնէ մեզի մարդուն  
իրականութիւնը: Մարդ արարած յաճախ ենթարկուած է  
մոռնալու իր ուխտը Աստուծոյ հետ եւ գերին դառնալու  
տարբեր չաստուածներու, ինչպէս նիւթապաշտութիւնը,  
իշխանութեան փափաքն ու անձնասիրութիւնը: Այս  
չաստուածներուն ենթարկուելով մարդ կը հեռանայ  
Աստուծմէ եւ կը վտանգէ իր իսկական իրականութիւնն ու  
ինքնութիւնը: Աստուած կը շարունակէ սիրել եւ ներել,  
սակայն Աստուծոյ այս պարգեւը ազդու կը դառնայ միայն  
երբ մարդ պատրաստ ըլլայ զայն ընդունելու եւ մանաւանդ  
Աստուծոյ հետ իր ուխտը յիշելու:*



## **10. Քաղաքական Նոր Դրույթին մը**

### **Դատաւորներէն ետք**

Հրեայ ժողովուրդին պատմութիւնը հիմնովին կը փոխուի Ա. Բ. եւ Գ. Թգ. 1-11 գլուխներուն մէջ: Դատաւորներու շրջանին հրեաները կազմուած էին իրարմէ անջատուած եւ թոյլ ցեղերէ, որոնց կը միացնէր միայն իրենց հաւատքը: Սակայն, այս նոր շրջանին, Իսրայէլ կը դառնայ զօրաւոր ազգ մը, Միջերկրական ծովու արեւելեան շրջանին մէջ: Այս մեծ փոփոխութիւնները տեղի ունեցան շնորհիւ չորս անձերու՝ Սամուէլի, Սաւուղի, Դաւիթի եւ Սողոմոնի:

### **Սամուէլ՝ քահանայ, մարգարէ, դատաւոր**

Սամուէլին մօրը՝ Աննային մասին կը կարդանք, թէ ան Աստուծմէ որդի մը խնդրելով, կը խոստանայ զայն Տիրոջ նուիրել: Սամուէլի մանկութենէն արդէն մայրը զինք Սելով կը տանի, Հեղի քահանային մօտ, եւ Աստուծոյ ծառայութեան կը նուիրէ զայն: Ան իր մանկութենէն Աստուծմէ կը կանչուի մարգարէ ըլլալու: Սամուէլ հաւատարմօրէն կը ծառայէ Իսրայէլի ցեղերուն որպէս քահանայ, դատաւոր եւ մարգարէ: Ան միշտ կոչ կ'ուղղէ ժողովուրդին իրենց Աստուծոյն դառնալու:

Սամուէլ եղած է վերջին դատաւորը եւ մեծ դեր ունեցած է թագաւորութեան հիմնադրութեան մէջ:

### **Ուխտի Տապանակին գրաւումը**

Ա.Թգ. 4.1-11ի մէջ կը կարդանք, թէ հրեաները փղշտացիներուն դէմ պատերազմելու ժամանակ կը պարտուին: Ուստի, կ'որոշեն Սելովէն Ուխտի Տապանակը բանակ բերել: Տապանակին հետ կու գան Հեղի քահանային երկու որդիները Ուփնի ու Փենէֆէս. սակայն,

այս մէկը իրենց չ'օգնէր: Փղշտացիները անլի զօրացած կը պատերազմին եւ կը յաղթեն: Իսրայէլի զօրքը 30 հազար մարդ կը կորսնցնէ. Ուխտի Տապանակը կը գրաւուի եւ Հեղիին երկու որդիները կը սպաննուին: «Տէրոջ տապանակը փղշտացիներուն երկրին մէջ եօթը ամիս մնաց» (6.1). Փղշտացիներ քանի մը աղէտներու հանդիպելէ ետք, Ուխտի Տապանակը Իսրայէլին կը դարձնեն:

### **Խնդրանք՝ թագաւորի մը**

Փղշտացիներուն յարձակումներուն դիմաց, Իսրայէլ պէտք ունէր նոր քաղաքական դասաւորութեան մը: Ժողովուրդը Սամուէլէն կը խնդրէ թագաւոր մը, որ «բոլոր ազգերուն պէս» գիրենք կառավարէ (8.5): Իսրայէլի գոյատեւման համար անհրաժեշտ էր թագաւորական դրութիւնը: Հրեաները թագաւոր մը կը պահանջեն, սակայն, թագաւորը իրենց դրացի ազգերուն նման, իբրեւ աստուած չեն բարձրացներ: Աստուծոյ իշխանութիւնը ամէն թագաւորութենէ եւ իշխանութենէ վեր մնալու էր:

Պէտք է հոս յիշենք, թէ Ա. Բ. Գ. եւ Դ. Թագաւորաց գիրքերը եղած են մէկ գիրք, որ շատ հաւանաբար բաժնուած է իր ներկայ բաժանումներուն «Եօթանասնից» թարգմանութեան ժամանակ:



Կը կարդանք թէ հրեաներ յաճախ շփոթի կը մատնուէին՝ արդեօ՞ք ամբողջովին Աստուծոյ վստահէին, թէ՞ իրենց կարողութիւններուն վստահելով համակերպէին իրենց շուրջ գտնուող հեթանոս ժողովուրդներուն: Կը կարդանք նաեւ, թէ անոնք Ուխտի Տապանակին վստահելով, զայն բանակավայր կը բերեն, սակայն այս մէկը անօգուտ կ'ըլլայ:

Կարելի է եզրակացնել թէ Աստուծոյ հանդէպ մարդուն հաւատքը առնչուելու չէ որեւէ նիւթական ներկայութեան: Աստուած Հոգի է եւ մարդուն հաւատքն ու պաշտամունքը հոգիով ըլլալու է: Այս մէկը ամբողջական վստահութիւն կ'ենթադրէ Աստուծոյ հանդէպ եւ Աստուծոյ Թագաւորութեան ներկայութեան՝ հաւատացեալներուն կեանքերուն մէջ:



## **11. Սաւուղ՝ Առաջին Թագաւորը**

### **Սամուէլ եւ Սաւուղ**

Ա.Թգ.9-13ին մէջ կը կարդանք թէ Սաւուղ քանի մը հանգրուաններով գահ կը բարձրանայ: Ան նախ Սամուէլ մարգարէին ձեռքով թագաւոր կ'օծուի. ապա իր համեստութիւնը կ'օգնէ որ ան ժողովուրդին համակրանքը շահի: Երբ ամսոնացիներուն կը յաղթէ, ան աւելիով կը գնահատուի ժողովուրդէն (11.1-15):

Սաւուղ թագաւորի կարեւորագոյն գործը եղած է մարգուած բանակի մը պատրաստութիւնը: Անոր շրջանը կարելի է նկատել պատրաստութեան շրջան կառավարման նոր դրութեան մը, այսինքն թագաւորութեան:

### **Սաւուղի սխալ կեցուածքը (Ա.Թգ.15.1-35)**

Ինչպէս Սաւուղ աստիճանաբար գահ կը բարձրանայ, նոյնպէս կը կարդանք անոր անկումին մասին: Տարբեր հարցերու հանդէպ իր համարձակ, անզուսպ եւ պոռթկացող նկարագիրը զինք դէմ յանդիման կը դնէ Սամուէլ մարգարէին հետ:

Սամուէլի պատուէրներուն իր անհնազանդութիւնը պատճառ կը դառնայ որ Սաւուղի թագաւորութիւնը մերժուի: 13րդ գլխուն մէջ կը կարդանք, թէ Սաւուղ փղշտացիներուն հետ պատերազմի երթալէ առաջ, փոխանակ Սամուէլի սպասելու, ինք անձամբ Տէրոջը ողջակէզ կը մատուցանէ: Իսկ 15րդ գլխուն մէջ կը կարդանք թէ Սաւուղ կ'արհամարհէ մարգարէին խօսքերը, որ ըսած էր. «Գնա՛ ու Ամաղէկը զա՛րկ: Անոր բոլոր ունեցածը նզովուածի պէս բնաջինջ ըրէ»: Պատերազմը վսեմ նպատակի համար ըլլալու էր, եւ ոչ՝ անկէ շահ ստանալու: Սակայն, Սաւուղ Ամաղէկի թագաւորը ողջ

բռնեց, անոր ոչխարներուն ու արջառներուն աղէկ  
կենդանիները խնայեց եւ չուզեց զանոնք ջարդել:



Փորձութիւններու դիմաց դժուար է հաւատքի, սկզբունք-  
ներու եւ հաստատ նկարագիրի տէր ըլլալ: Սաւուղ  
կեանքի այս քննութեան մէջ ձախողեցաւ:



## 12. Դաւիթ Գահ կը Բարձրանայ

### Ո՞վ էր Դաւիթ

Դաւիթ Յուդայի ցեղէն (Բարայէլի 12 ցեղերէն մին էր, որուն տրուած էր Հրէաստանի հարաւի տարածութեան մեծամասնութիւնը), Բեթլեհէմի մէջ ծնած, Յէսսէի որդիներուն կրտսերագոյնն էր. ան թագաւոր կ'օծուի Սամուէլ մարգարէին կողմէն (Ա.Թգ.16.1-13): Դաւիթ իր պատանի տարիքէն ճանչցուած էր իր քաջութեամբ (ան Գողիաթի կը յաղթէ, Ա.Թգ.17.1-54), ինչպէս նաեւ նշանաւոր էր որպէս բանաստեղծ, երգեր եւ սաղմոսներ գրող:

### Սաւուղ եւ Դաւիթ

Կը կարդանք, թէ Դաւիթ կը մտնէ պալատ իբրեւ Սաւուղ թագաւորին նուագողը. հետագային ան յաջող զինուորական մը կ'ըլլայ եւ կը շահի ժողովուրդին սէրը: Այս մէկը կը գրգռէ Սաւուղին նախանձը, որ կը սկսի զայն հալածել: Սաւուղի որդին՝ Յովնաթան, մէկէ աւելի անգամներ կ'ազատէ Դաւիթի կեանքը: Դաւիթ ստիպուած կը փախչի դրացի երկիրները, ուր շատեր իրեն կը միանան (մօտ 400 մարդիկ). ան վերադառնալով կը պատերազմի օտար ազգերու դէմ եւ կը յաղթէ անոնց:

Դաւիթ չի փորձեր իր անձնական ուժերով Սաւուղէն վրէժ լուծել, որովհետեւ Սաւուղ իրեն համար «Տէրոջը օծեալ»ն էր: Դաւիթ կը վստահի Աստուծոյ զօրութեան, իսկ Սաւուղ, իր յուսահատ վիճակին մէջ, փրկչտացիներուն դէմ կը պատերազմի եւ նոյն օրուան մէջ կը սպաննուի իր երեք որդիներուն եւ իր հետեւորդներուն հետ:

### **Դաւիթ Յուդայի եւ Իսրայէլի թագաւոր կ'ըլլայ**

Սաւուդի մահէն ետք, Դաւիթ թագաւոր եղաւ նախ Յուդայի վրայ. 7.5 տարիներու ընթացքին Քերթոն կ'ըլլայ իր մայրաքաղաքը: Մինչ այդ Սաւուդի որդիներէն մէկը թագաւոր եղաւ Իսրայէլի մնացեալ ցեղերուն վրայ (Բ.Թգ.2.8-11): Իսրայէլի մէջ բաւական անցուդարձերէ ետք, Սաւուդի որդին սպաննուեցաւ եւ «Իսրայէլին բոլոր ցեղերը Քերթոն եկան . . . անոնք Դաւիթը Իսրայէլի վրայ թագաւոր օժեցին» (Բ.Թգ.5.1-5):

Դաւիթ Երուսաղէմը ընտրեց իբր թագաւորութեան մայրաքաղաքը: Երուսաղէմը դարձաւ ո՛չ միայն քաղաքական, այլ եւ կրօնական կեդրոն: Ան հոն գտնուեց Ուխտի Տապանակը: Այսպիսով, Աստուծոյ ներկայութիւնը այս թագաւորութեան հետ առնչուեցաւ:

### **Երուսաղէմը**

ԾՆ.14.18ի մէջ կը կարդանք թէ Երուսաղէմ (նախ կը կոչուէր Սաղէմ) քաղաքը եղած է անկախ եւ ինքնավար: Քաղաքը բնակուած էր յերուսացիներու կողմէ, որոնց թագաւորը՝ Մելքիսեդեկ Աբրամը կ'օրհնէ: Յս.18.16ի մէջ նկարագրուած է թէ ինչպէս Յեսու Երուսաղէմի (Յերուսի) շրջանը գրաւելով, կը տրամադրէ զայն Բենիամինի ցեղին:

Դաւիթ (Ք.ա. շուրջ 1000 թ.ին) Երուսաղէմ մտնելով, զայն յարմար կեդրոն կը նկատէ իր թագաւորութեան մայրաքաղաքը ընելու (Բ.Թգ.5.6-9):



*Հակառակ անոր որ Դաւիթ դիմագրւած է զանազան  
դժուարութիւններ եւ ուրիշներու նման գործած է մեղքեր,  
սակայն, Աստուած եղած է անոր զօրութեան եւ  
յաջողութեան գաղտնիքը:*

*Դաւիթ կրցած է արտասանել՝ «Իմ Աստուածս՝ իմ  
պարիսպս է, եւ անոր կը յուսամ» (Բ.Թգ.22.3):*



### 13. Դաւիթ եւ Սողոմոն

#### **Աստուծոյ ուխտը Դաւիթին հետ**

Ի տարբերութիւն Մովսէսին հետ կատարուած ուխտին Դաւիթին հետ Աստուծոյ ըրած ուխտը չէր պայմանաւորուած որեւէ մարդկային կեցուածքով, այլ հիմնուած էր Աստուծոյ շնորհքին վրայ: «Քու տունդ ու թագաւորութիւնդ յաւիտեան ապահով պիտի ըլլան, քու այծոռդ յաւիտեան հաստատ պիտի մնայ» (Բ.Թգ.7.16):

#### **Դաւիթին թագաւորութիւնը եւ գործերը**

Ծուրջ 75 տարիներ (Ք.ա. 10րդ դար) Հրէաստանի քաղաքական եւ տնտեսական կեանքը ամբողջովին փոփոխութեան կենթարկուի Դաւիթի եւ Սողոմոնի թագաւորութեան օրերուն: Դաւիթ իշխելով նաեւ դրացի երկիրներու վրայ, իր երկրին սահմանները ընդարձակեց: Իր օրերուն երկիրը խաղաղ էր. ան կրցաւ կրօնական եւ ազգային ներքին բարեկարգութիւններ ընել: Այսպիսով Հրէաստան կրցաւ միանալ, մանաւանդ որովհետեւ անոր քաղաքական առաջնորդը եղաւ նաեւ անոր կրօնական առաջնորդը:

«Դաւիթ ամբողջ Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ: Դաւիթ իր ամբողջ ժողովուրդին իրաւունք ու արդարութիւն կ'ընէր» (Բ.Թգ.8.15):

Դաւիթի մասին կը կարդանք, թէ ան ալ մեղքեր գործեց: Բ.Թգ.11.1-12.31ի մէջ, ան շնութիւն եւ սպանութիւն գործեց, սակայն, Նաթան մարգարէին խրատներով, ան դիմեց Աստուծոյ սիրոյն եւ շնորհքին: Դաւիթի թագաւորութեան ընթացքին, իր որդիներէն մէկը՝ Աքիսողոմ, իրեն դէմ ապստամբեցաւ, բայց պարտուեցաւ եւ սպաննուեցաւ:

### **Դաւիթ կը փոխանցէ թագաւորութիւնը**

Գ.Թգ.1.1-2.46ի մէջ կը կարդանք թէ Դաւիթ Նաթան մարգարէին խրատով կը նշանակէ Սողոմոնը՝ Աբիսողոմին եղբայրը եւ Բերսաբէին որդին, որ իրմէ տեք թագաւոր ըլլայ: Դաւիթ իր վերջին պատուէրներուն մէջ Սողոմոնին կ'ըսէ.- «Ուժովցիր ու քաջասիրտ եղիր: Եւ քու Տէր Աստուծոյդ պատուէրները պահէ՛» (Գ. Թգ.2.2-3):

### **Սողոմոն իմաստուն**

Սողոմոնի մասին կը կարդանք, թէ ան Տէրոջմէ իմաստութիւն խնդրեց: «Սողոմոնին իմաստութիւնը բոլոր արեւելքցիներուն իմաստութենէն ու եգիպտացի- ներուն բոլոր իմաստութենէն աւելի էր ... ու բոլոր շրջակայ ազգերուն մէջ անուանի եղաւ» (Գ.Թգ.4.30-31):

### **Երկրին բարգաւաճումը Սողոմոնի օրով**

Սողոմոն սերտ յարաբերութիւն մշակեց Փիւնիկէի Քիրամ թագաւորին հետ: Ան տաճարին համար փայտ ապահովեց Լիբանանէն եւ տաճարին շինութիւնը ամբողջացուց: Սողոմոն նաեւ Ուխտի Տապանակը գետեղեց տաճարին մէջ: Սողոմոն երկրին մէջ խաղաղութիւն հաստատելու նպատակով, հիմնեց զօրաւոր բանակ մը, ան երկրին տնտեսական վիճակը բարելաւեց եւ առեւտուրը զարգացուց:

Սողոմոն ունի նաեւ իմաստուն խօսքեր եւ գրութիւններ, որոնց պիտի անդրադառնանք երբ Առակաց եւ Ժողովողի գիրքերը սերտենք:



*Դաւիթ եւ Սողոմոն բացառիկ եւ անսխալական մարդիկ  
չէին, սակայն, Աստուած իրենց հետ ուխտ ըրաւ եւ իրենց  
միջոցով գործեց: Աստուած մարդոց միջոցով կը գործէ,  
հսկառակ անոնց թերութիւններուն:*



## **14. Թագաւորութիւնը Բաժնուած**

### **Երկու տարբեր թագաւորութիւններ**

Հակառակ անոր որ Աստուածաշունչին մէջ Սողոմոնի իմաստութեան մասին կը կարդանք, սակայն, կ'մանանք նաեւ անոր գործած շատ մը սխալներուն մասին: Ան ծանր տուրքեր դրաւ ժողովուրդին վրայ եւ կոսապաշտութիւնը թոյլատրեց ժողովուրդին մէջ: Իր ծերութեան ժամանակը, ան Աստուծմէ հեռացաւ, մեղաւոր կեանք ապրեցաւ եւ կուռքեր պաշտեց, որոնք իր հեթանոս կիները իրենց հետ բերած էին (Գ.Թգ.11.1-13): Այս բոլորը ընդվզում յառաջացուցին ժողովուրդին մէջ, որ ծածուկ մնաց մինչեւ իր որդիին՝ Ռոբովամին ժամանակը:

Ռոբովամ երբ գահ բարձրացաւ, արհամարհեց ժողովուրդին խնդրանքը, որ իր հօր դրած ծանր լուծը, հարկերն ու տուրքերը թեթեւցնէ: Ան իրենց հետ խստութեամբ վարուեցաւ, որուն պատճառով Իսրայէլի տասը ցեղերը մերժեցին անոր իշխանութիւնը: Անոնք Յերոբովամին դիմեցին, որ Սողոմոնի մահէն առաջ Ռոբովամի դէմ ապստամբած էր, եւ զինք Իսրայէլի վրայ թագաւոր դրին: Այսպիսով, Իսրայէլի թագաւորութիւնը (10 ցեղեր) բաժնուեցաւ Յուդայի թագաւորութենէն (2 ցեղեր): Այս բաժանումը տեղի ունեցաւ Ք.ա. 922 թ.ին:

### **Իսրայէլի (Հիւսիսային) Թագաւորութիւնը– մայրաքաղաքը՝ Սամարիա**

Յերոբովամ շուտով կը հեռանայ Աստուծմէ: Ան 22 տարի թագաւորելէ ետք, իր որդիին՝ Նադաբ, իրեն կը յաջորդէ: Նադաբէ ետք յաջորդաբար կու գան շատ մը թագաւորներ, որոնց անունները կը գտնենք վարի ցանկին մէջ: Անոնցմէ շատերը կ'ըլլան թոյլ եւ իրենց հաւատքին, ինչպէս նաեւ իրենց թագաւորութեան

նկատմամբ կը վարուին անհոգութեամբ: Անոնք զիրար սպաննելով անհրաւ կերպով կը տիրանային գահին: Մարգարէներ յաճախ կը փորձէին զգուշացնել ժողովուրդն ու թագաւորը որ դառնան իրենց Աստուծոյն: Եղիա մարգարէն Աքաաբի օրերուն, Բահաղի սուտ մարգարէներուն դէմ կը ճակատի եւ ժողովուրդին կը յայտնէ, թէ՛ Տէրն է ճշմարիտ Աստուածը (Գ.Թգ.17-19):

### **Յուդայի (Հարաւային) Թագաւորութիւնը - մայրաքաղաքը՝ Երուսաղէմ**

Ռոբովամ կը շարունակէ թագաւորել Յուդայի եւ Բենիամինի վրայ: Այս թագաւորութիւնը, որ Իսրայէլի թագաւորութենէն աւելի փոքր էր, կը դառնայ աւելի զօրաւոր: Շատ մը քահանաներ եւ օրէնքը յարգող հրեաներ Յուդայի կողմը կ'անցնին: Ռոբովամ կը սկսի աստուածապաշտութեամբ կառավարել. սակայն, ետքը՝ ինք եւ իր ժողովուրդը, կը դառնան կռապաշտութեան եւ ամէն տեսակ չարութեան:

Ռոբովամի կը յաջորդեն շատ մը թագաւորներ (վարի անուանացանկը կը ներկայացնէ թագաւորներու եւ մարգարէներու անունները, որոնք նստած են Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութեան աթոռին վրայ:) Թագաւորներէն ոմանք որոշ բարեկարգութիւններ կ'ընեն եւ ժողովուրդին կը յիշեցնեն Աստուծոյ հետ կատարած իրենց ուխտը.- «Տէրոջ բարկութիւնը Երուսաղէմի ու Յուդայի վրայ էր, մինչեւ որ զանոնք իր երեսէն ձգեց» (Գ.Թգ.24.20):



*Հրեայ ժողովուրդը Աստուծու հեռանալով ամէն ինչ կորսնցուց: Իրենց անհաւատութիւնը մոռցուց Աստուծոյ հետ իրենց ունեցած Ուխտը որ կատարած էին: Այսօր նոյնը կը պատահի մեր շուրջը. մարդիկ կը կորսնցնեն խաղաղութիւն, սէր եւ ուրախութիւն, որովհետեւ Աստուծու հեռու են:*



<b><u>Իսրայելի Թագաւորութիւն (922-722 Ք.ա.)</u></b>	<b><u>Յուդայի Թագաւորութիւն (922-587 Ք.ա.)</u></b>
Յերոբովամ	Ռոբովամ
Նադաբ	Աբիա
Բաասա	Ասա
Էլա	Յովսաբատ
Ջամբրի	Յովրամ
Ամրի	Ոքոզիա
Աքաաբ (Եղիա)	Գոթողիա
Ոքոզիա (Եղիսէ)	Յովաս
Յէու	Ամասիա
Յովաքազ	Ազարիա (Եսայի Ք.ա. 740-700)
Յովաս	Ոզիա (Միքիա)
Յերոբովամ ք. (Ամովս, Ք.ա. 760)	Յովաթամ
Զաքարիա (Ովսէ Ք.ա. 750-725)	Աքազ
Սեղոում	Եզեկիա
Մանայեմ	Մանասէ
Փակէ	Ամոն
Ովսէէ	Յովսիա
	Յովաքազ
	Յովակիմ
	Յովաքին (Երեմեայ)
	Սեդեկիա
722ին Սամարիայի անկում, Ասորի ներու կողմէ.	587ին Երուսաղէմի անկում, Բաբելոնի կողմէ.



**Դ. Հին Կտակարանի Մարգարեները**  
**15. Ո՞վ էր Մարգարեն**

**Ո՞վ էր մարգարեն**

Բ. Օրինաց 18.18ի մէջ Աստուած Մովսէսին այս խօսքերը կ'ուղղէ. - «Քեզի պէս մարգարէ մը պիտի հանեմ անոնց իրենց եղբայրներուն մէջէն եւ իմ խօսքերս անոր բերանը պիտի դնեմ ու ինչ որ անոր պատուիրեմ, անոնց պիտի ըսէ»: Ուրեմն, մարգարէն Աստուծոյ կողմէ կանչուած եւ Աստուծմէ դրկուած է ժողովուրդին, փոխանցելու համար Աստուծոյ իրեն յայտնած պատգամը:

Մարգարէները, հետեւաբար, Աստուծոյ եւ անոր գործին նուիրուած անձեր էին: Անոնք Աստուծոյ խօսնակներն էին, ժողովուրդին առաջնորդութիւն եւ ուղղութիւն կու տային, որպէսզի ժողովուրդը Աստուծոյ հանդէպ իր Ուխտին հաւատարիմ մնար:

**Ինչպէ՞ս կրնանք հասկնալ մարգարէին գործը**

Մարգարէին գործը կարելի է դիտել երկու տեսանկիւններէ. -

1. Տուեալ վիճակին մասին մարգարէին խօսքերն ու անոնց արժեւորումը.
2. Ապագայի մասին մարգարէին կատարած ենթադրութիւնները եւ խրատները, որոնք հիմնուած են ներկայ վիճակին մասին իր կատարած արժեւորումին վրայ.

Մարգարէն ժողովուրդին ամենօրեայ կեանքին, ինչպէս նաեւ անոր ապագային մասին կը սորվեցնէ, յատկապէս երբ Աստուծոյ կը դիմէ եւ անոր յայտնութեան կը վստահի: Մարգարէն միշտ ճիշդը կը խօսի, նոյնիսկ երբ իր շուրջ ամէն մարդ սխալը կը շեշտէ: Ան անձնական շահ եւ փառք չի փնտոներ, այլ միայն Աստուծոյ փառքը եւ անոր արդարութեան տարածուիլը

կ'ուզէ: Այսպիսով, կարելի է ըսել թէ մարգարէութիւնը գուշակութիւն չէ՛, այլ՝ Աստուծոյ հանդէպ մեծ հաւատքի, հաւատարմութեան, ինչպէս նաեւ Աստուծմէ՛ յատուկ հոգեւոր զօրութիւն ստանալու արդիւնք:

### **Ե՞րբ սկսաւ մարգարէներուն շրջանը եւ ինչպէ՞ս շարունակուեցաւ**

Հին Կտակարանին մէջ Մովսէս կը նկատուի մարգարէներուն նախատիպը եւ օրինակը: Սակայն, շուրջ երեք դար ետք (Ք.ա. 10-9 դարերուն), Սամուէլով մարգարէներու նոր շրջան մը կը սկսի:

Այս շրջանին, մարգարէները յատկապէս թագաւորներուն կ'ուղղէին Աստուծոյ պատգամը, զանոնք զգուշացնելով եւ խրատելով: Այս մարգարէները գործած են «անգիր», այսինքն չեն ունեցած իրենց յատուկ գրութիւնները: Ասոնցմէ են Սամուէլը, Նաթանը, Եղիան եւ Եղիսէն:

Ք.ա. Տրդ դարուն, երբ երկու թագաւորութիւնները կը տկարանան եւ Իսրայէլի անկումը տեղի կ'ունենայ, մարգարէները իրենց պատգամը կ'ուղղեն հրեայ ժողովուրդին եւ այլ ազգերու: Անոնք կը խօսին զղջումի եւ Աստուծոյ դատաստանին մասին: Ասոնցմէ են Եսայի, Երեմիա, Եզեկիէլ նաեւ «Փոքր» Մարգարէները,<sup>†</sup> ինչպէս Ովսէ, Ամովս, Միքիա

Սակայն Ք.ա. 6րդ դարուն, Յուդայի Թագաւորութեան անկումով, մարգարէները կը պատգամեն յոյսի եւ քաջալերանքի խօսքեր: Անոնք կը ջանան վերա-

---

<sup>†</sup> «Փոքր» Մարգարէները, թիւով 12, այսպէս կը կոչուին որովհետեւ իրենց մարգարէութեան գիրքերը փոքր են բաղդատմամբ «Աւագ» Մարգարէներուն գրութիւններուն՝ Եսայիի, Երեմեայի, Որք Երեմեայի, Եզեկիէլի, Դանիէլի:

*հաստատել ժողովուրդին ուխտը Աստուծոյ հետ: Բաբելոնի Աքսորէն վերադառնալով, մարգարէները կը քաջալերեն տաճարին վերաշինութիւնը եւ պաշտամունքի վերսկսիլը:*



*Մարգարէն այն անձն է որ ճշմարտութիւնը տեսնելով կը փոխանցէ զայն քաջութեամբ եւ սիրով: Մեր ներկայ ժամանակներուն որքա՞ն կարիքը ունինք «մարգարէներու», որոնք արդարութիւն կը պահանջեն եւ ճշմարտութիւնը կը խօսին:*



## 16. Իսրայել եւ Յուդա Գերպետութիւններու Դիմաց

### Ա. Իսրայելի անկումը

Ք.ա. 9րդ դարուն, Ասորական Կայսրութիւնը կ'ընդարձակուի եւ կը զօրանայ: Սուրիա եւ Իսրայել կը համաձայնին ասորիներուն դէմ դնել, որուն ենթարկուած էին Ք.ա. 738 էն ի վեր: Անոնք (Սուրիան եւ Իսրայելը) կը պաշարեն Երուսաղէմը եւ կը ստիպեն զայն իրենց միանալու, Ասորեստանի դէմ: Սակայն, Յուդայի Աքազ թագաւորը, օգնութեան համար կը դիմէ Ասորեստանի թագաւորին (Գ.Թգ.16.5-18):

Սուրիա եւ Իսրայել ասորիներէն պարտուելով, իրենց ժողովուրդէն շատեր գերի կը տարուին Ասորեստան (Ա.Մն.5.26; Դ. Թգ.15.29): Իսկ Ք.ա. 722ին տեղի կ'ունենայ Սամարիայի անկումը. «Ովսէէին իններորդ տարին Ասորեստանի թագաւորը Սամարիան առաւ ու Իսրայելը Ասորեստան փոխադրեց» (Դ.Թգ.17.6): Այս շրջանին կարգ մը մարգարէներ՝ **Ամոս, Ովսէ, Եսայի եւ Միքիա** կը խօսին Իսրայելի եւ Յուդայի գործած անգթութիւններուն, զրկանքին եւ անօրէնութիւններուն մասին: Իսկ Ք.ա. 640-609 թուականներուն, **Երեմիա** մարգարէին օրերուն, **Սոփոնիա, Նաւում եւ Ամբակում** կը մարգարէանան, մանաւանդ Յուդայի անկումին մասին, որ արդարութիւնը մոռնալով չաստուածներ կը պաշտէր:

### Բ. Յուդայի անկումը

Ասորեստանին կը յաջորդէ Բաբելոնը: Իսրայելի անկումէն շուրջ մէկ ու կէս դար ետք, Յուդայի Թագաւորութիւնն ալ կ'իյնայ Բաբելոնի իշխանութեան տակ: Յուդայի վերջին թագաւորը եղաւ Սեդեկիա. «Բաբելոնի թագաւորին ծա-

ուան ... Երուսաղէմ եկաւ ու Տէրոջը տունը եւ թագաւորին տունը այրեց... քաղաքին բնակիչներուն մնացորդն .. ու մնացած բազմութիւնը ... գերի տարաւ» (Դ. Թգ.25.8-12): Այսպիսով, Երուսաղէմի անկումը եւ կործանումը տեղի ունեցաւ Ք.ա. 587ին:

Յուդայի անկումէն ետք, **Արդիու եւ Յովել** կը խօսին պատիժի եւ դատաստանի մասին:

#### **Գ. Աքսորի շրջան**

Հրեաները, շուրջ կէս դար, խաղաղութեամբ ապրեցան Բաբելոնի մէջ: Աքսորի այս շրջանին (597-538 Ք.ա.), անոնք վայելեցին որոշ ազատութիւն. հրեաներուն համար այս շրջանը եղաւ նաեւ ինքնաքննութեան շրջան մը, անդրադառնալու իրենց մեղքերուն: Արդեօ՛ք Աստուած տակաւին հոգացող եւ ներող էր:

**Եզեկիէլ** մարգարէն 25 տարեկան էր, երբ քսորականներու առաջին խումբին հետ Բաբելոն գնաց: Եզեկիէլ կը մեղադրէ Աստուծոյ ժողովուրդը, ինչպէս նաեւ ուրիշ ազգեր, իրենց սխալ ընթացքին համար: Սակայն, իր մարգարէութեան վերջաւորութեան, ան կը սկսի յոյսով խօսիլ նոր Երուսաղէմի մասին:

«Իսրայէլի տունը՝ իրենց անօրէնութեանը եւ ինծի ապստամբ ըլլալնուն համար գերի եղաւ ու ես իմ երեսս անոնցմէ ծածկեցի: ... Իրենց յանցանքներուն համեմատ իրենց հատուցում ըրի: ... Հիմա Յակոբը գերութենէն պիտի դարձնեմ ու բոլոր Իսրայէլի տանը պիտի ողորմիմ: ... Եւ պիտի գիտնան, թէ՛ ես եմ անոնց Տէր Աստուածը» (Եգ.39.23-29):

## **Դ. Աքարէն ետք**

Ք.ա. 539ին Պարսիկներու Կիրոս թագաւորը Բաբելոնի վրայ յարձակելէ եւ անոր յաղթելէ ետք, հրեաներուն ազատութիւն կը շնորհէ: Կիրոս նիւթական մեծ օգնութիւն կ'ընէ հրեաներուն եւ զանոնք կը դրկէ, որպէսզի երթան եւ իրենց երկիրը վերաշինեն: Սակայն մեծ թիւով հրեաներ կը նախընտրեն մնալ այնտեղ: Այսուհանդերձ, բաւական մեծ խումբ մը (շուրջ 50,000) կը վերադառնան Պաղեստին: Այս խումբին կը յաջորդեն ուրիշներ, Եզրասի եւ Նէեմիաի առաջնորդութեամբ:

Այս շրջանին **Անգէ** եւ **Զաքարիա** կը մարգարէանան: **Զաքարիա** կը շեշտէ իրական պաշտամունքին կարեւորութիւնը: Նախ, զԱստուած փնտռելու ենք մեր կեանքերուն մէջ եւ իր Թագաւորութիւնը խնդրելու ենք:

Յուդայի, յատկապէս վերաշինուած Երուսաղէմի ժողովուրդին մասին, կ'իմանանք **Մաղաքիա** մարգարէէն, որուն մարգարէութիւնը կու գայ Ք.ա. 5րդ դարուն սկիզբէն:



*Յանախ երբ մարդ արարած իր ունեցածը կորսնցնէ, կ'անդրադառնայ անոր կարելիութեան եւ արժէքին ու ինքզինք վերաքննութեան կենթարկէ, ինչպէս հրեաներուն պատահեցաւ արքայի մէջ:*

*Որպէս հաւատացեալներ, Աստուծոյ շնորհքն ու սէրը կը վայելենք մեր կեանքերուն մէջ այնքան ատեն, որ Աստուծոյ մօտ ենք: Սակայն Աստուծմէ հեռանալով եւ հրեաներուն նման «կռապաշտութեան» դիմելով ենթակայ կ'ըլլանք այս աշխարհի ժամանակաւոր արժէքներուն, որոնք կրնան շուտով անհետանալ:*



## **17. Ընկերային Անարդարության Դէմ Մարգարէութիւն Ամովսայ**

### **Մարգարէին կեանքը**

Ամովս Թեկուէի հովիւներէն էր (Բեթլեհէմի մօտ): Աստուած զինք կանչած էր Իսրայէլի մէջ մարգարէ ըլլալու (7.14-15), Յերոբովամի թագաւորութեան օրերուն (շուրջ Ք.ա. 793-753 թուականներուն): Ամովս միշտ քահանայներ ունեցած է երկրին կառավարիչներուն եւ քահանաներուն հետ, որոնք անհոգ գտնուած են իր խօսքերուն նկատմամբ: Ամասիա քահանան անոր ըսած է. -

«Ո՛վ տեսանող, զնա՛, Յուդայի երկիրը փախչի՛ր: Հոն հաց կե՛ր եւ հոն մարգարէութիւն ըրէ»:

Ամովս երկրի չարութիւնները վերագրեց քաղաքական առաջնորդներուն եւ հիմնականօրէն անոնց ուղղեց իր խօսքերը:

### **Մարգարէին պատգամը**

1. Մարգարէին օրերուն Իսրայէլի մէջ երկու տարբեր ընկերային դասակարգներ կային: Ան խիստ կերպով կը քննադատէ հարուստ դասակարգը եւ անոնց անարդարութիւնը. «Քանի որ աղքատին վրայ կը կոխէք, ու անկէ ցորենի պարգեւներ կ'առնէք» (5.11): Ան ընկերային անարդարութեան մասին կ'ըսէ. -

«Բայց իրաւունքը ջուրի պէս թող վազէ, ու արդարութիւնը՝ զօրաւոր գետի պէս» (5.24):

2. Մարգարէն շեշտած է անհատին պատասխանատու-  
թիւնը Աստուծոյ հանդէպ: Հրեաները Աստուծոյ հետ  
իրենց ունեցած ուխտին անհաւատարիմ գտնուելով, յա-  
տուկ դատաստանի պիտի արժանանան: Անոնք կրօնքին  
արտաքին գործողութիւնները կ'ընէին, բայց ներքնապէս՝  
անարդար էին:

«Ձեր տօները կ'ատեն ու կը մերժեն.  
Ձեր հանդիսաւոր ժողովներէն հաճոյք  
պիտի չառնեն:  
Եթէ ինձի ողջակէզներ ու ձեր հացի  
ընծաները մատուցանէք ալ՝ պիտի  
չընդունին» (5.21-22):

3. Աստուած ամենակարող է: Ան բոլորին Աստուածն է,  
եւ ո՛չ միայն հրեայ ժողովուրդին: Հետեւաբար, բոլոր  
ազգերը դատաստանի պիտի կանչուին:



Արդարութեան համար գործելը իր գինը ունի: Աւելի  
դիրքին է մարդոց սխալներուն հանդէպ լուռ կենալ եւ  
համակերպիլ անոնց, քան զանոնք մերժել եւ արդարու-  
թիւնը պաշտպանել: Սակայն, Տէր Յիսուս Լերան  
Քարոզին մէջ ըսաւ. - «Երանի՛ անոնց, որ հալածուած են  
արդարութեան համար, վասնզի Երկինքի Թագաւոր-  
ութիւնը անոնցն է» (Մտ.5.10):



## **18. Աստուծոյ Սէրը եւ Գուլթը Մարգարէութիւն Ովսեայ**

### **Ո՛վ էր Ովսէ**

Ովսէ Իսրայէլի (Հիւսիսային) Թագաւորութեան մարգարէներէն մէկն էր, որ իր ժողովուրդին կը քարոզէ շուրջ 25 տարիներ (750-725 Ք.ա.), մինչ Թագաւորութեան անկումը կը մօտենար: Ովսէ Աստուծմէ պատուէր կը ստանայ ամուսնանալու մեղաւոր կնոջ մը հետ: Ան կ'ունենայ երեք զաւակներ, որոնց կը տրուին խորհրդանշական անուններ՝ Յեզրայէլ («Աստուած կը ցանէ»), Լօրուհամա («շողորմեալ»), եւ Լօսամփ («իմ ժողովուրդս չէ»):

Ովսէ իր մարգարէութեան գիրքին առաջին երեք գլուխներուն մէջ, իր անձնական կեանքէն, մանաւանդ իր տիկնոջ հետ ունեցած փորձառութենէն, կը խօսի Աստուծոյ սիրոյն մասին:

### **Մարգարէին պատգամը**

1. Մարգարէն, Աստուծոյ եւ իր ժողովուրդին յարաբերութիւնը կը նմանցնէ իր ամուսնական յարաբերութեան: Ովսէի սէրը իր կնոջ հանդէպ, նման էր Աստուծոյ հրեայ ժողովուրդին հանդէպ ունեցած սիրոյն. իսկ կնոջ մեղքը նման էր հրեայ ժողովուրդին մեղքին, որ Աստուծոյ անհաւատարիմ էր եւ ուրիշ աստուածներ կը պաշտէր:

«Երկիրը Տէրոջմէ խոտորելով՝ խիստ

շատ պոռնկացաւ» (1.2):

«Քանզի երկրի վրայ ճշմարտութիւն չկայ ու ողորմութիւն չկայ ու Աստուծոյ գիտութիւնը չկայ» (4.1):

Աստուծոյ գիտութիւնը ունենալ չի նշանակեր Աստուծոյ մասին պարզապէս որոշ տեղեկութիւններ գիտնալ, այլ սիրոյ, հնազանդութեան ու մտերմութեան իսկական յարաբերութիւն մը մշակել իրեն հետ:

2. Մարգարէն կը խօսի երկրին կործանումին, ժողովուրդին աքսորուելուն, ինչպէս նաեւ աքսորէն անոնց վերադառնալուն մասին: Աստուած արդար է. ան պիտի թողու ժողովուրդը որ իրենց ընտրութեան հետեւանքը կրեն: Միեւնոյն ժամանակ Աստուած սիրող եւ ներող է, որ տակաւին կը սիրէ իր ժողովուրդը եւ կը յուսայ որ օր մը անոնք իրեն դառնան:

«Այն օրը, կ'ըսէ Տէրը, Ձիս իմ այլս պիտի կոչես, Ու անգամն ալ զիս իմ Բահաղս պիտի չկոչես» (2.16):

«Ձանհկա ինծի համար երկրի վրայ պիտի սերմանես՝ Ու Չողորմեալին պիտի ողորմիմ Եւ իմ ժողովուրդս չեղողին՝ Դուն իմ ժողովուրդս եւ պիտի ըսես. Ան ալ ինծի՝ իմ Աստուածս եւ պիտի ըսէ» (2.23):

Հաստուածը ամուսնական յարաբերութեան մասին արտայայտող ոճին միջոցով կը խօսի մարդուն եւ Աստուծոյ միջեւ յարաբերութեան մասին: Այլեւս մարդ ուրիշ աստուածներ պիտի չունենայ: Հակառակ մարդուն մեղաւոր ընթացքին, Աստուած պիտի ողորմի եւ փրկէ զայն. իսկ մարդ արարած պիտի ճանչնայ զԱստուած որպէս իր միակ Տէրը:



*ԶԱտուած ճանշնալ չի նշանակեր Աստուծոյ մասին տեղեկութիւններ ամբարել: Անշուշտ Ս. Գրային եւ եկեղեցական գիտութիւնն ու հմտութիւնը անհրաժեշտ են, սակայն հաւատքի պարագային մարդ արարած Աստուծոյ հանդէպ խոր վստահութեան փորձառութիւնը կ'ունենայ, որ անձնական փորձառութիւն մըն է: Ուրեմն, որեւէ հաւատքի արտայայտութիւն անիմաստ կը դառնայ առանց մարդուն անհատական դերին այդ հաւատքի արտայայտութեան նկատմամբ: Այս է Ովսէ մարգարէին պատգամին զօրութիւնն ու նշանակութիւնը: Աստուծոյ սէրը եւ գութը անսահման են, սակայն այդ սէրը եւ գութը ազդու կը դառնան երբ մարդ, Աստուծոյ դառնալով փնտռէ եւ ընդունի Աստուծոյ պարգեւը:*

*Աստուծոյ սիրոյն մէջ մնալ չի նշանակեր պարզապէս գիտնալ այդ սիրոյն մասին, այլ մանաւնդ ընդունիլ եւ անոր համեմատ ապրիլ:*



## 19. «Անոր Անունը պիտի Կոչուի Աքանչելի» Մարգարեություն Եսայեայ

### Մարգարեություն Եսայեայ

Եսայեայ մարգարեությունը Հին Կտակարանի կարեւորագոյն մարգարեություններէն մէկն է: Եսայի մարգարէն քարոզած է Երուսաղէմի մէջ (Ք.ա. 742–700) Յուդայի Թագաւորութեան՝ Ոգիա, Յովաթամ, Աքազ եւ Եզեկիա թագաւորներու օրերուն: Ան եղած է բանաստեղծ եւ քաղաքագէտ: Իրեն կարելի է վերագրել Եսայիի մարգարեութեան առաջին 39 գլուխները, որոնք կու գան Ք.ա. Տրդ դարէն: Մարգարէին կոչումին մասին կը կարդանք ճորդ գլխուն մէջ, երբ ան տաճար մտնելով Աստուծոյ ներկայութիւնը կը զգայ եւ կ'անդրադառնայ իր մեղաւոր ընթացքին: Սակայն, Աստուած զինք կը սրբէ եւ մարգարէական պաշտօնին կը կանչէ:

Եսայի ունեցած է աշակերտներ, որոնք իր անունով եւ իր ուսուցմունքներուն հետեւելով շարունակած են իր գործը Ք.ա. ճորդ դարուն, Աքսորի օրերուն (40–55 գլուխները), եւ Աքսորէ ետք (56–66 գլուխները):

Մարգարեութիւնը, իր տարբեր մասերով, ժամանակակից է երկու թագաւորութիւններուն անկումին, Աքսորի շրջանին եւ Աքսորէ վերադարձին:

### Մարգարէին պատգամը

1. Եսայի մարգարէն Յուդայի (Հարաւային) Թագաւորութեան Աքազ թագաւորին օրերուն, կը ցաւի երբ կը տեսնէ թագաւորին տկար հաւատքը: Թագաւորը փոխանակ Աստուծոյ փրկութեան վստահելու, կը դիմէ Ասորեստանի եւ անոնց արարողութիւններուն եւ կռապաշտութեան կը հետեւի: Մարգարէն կը խօսի ապագայ

թագաւորի մը մասին, որ իրաւունքով ու արդարութեամբ պիտի թագաւորէ՝

«Անոր անունը պիտի կոչուի Աքան-  
չելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,  
Յախտենականութեան Հայր, Խաղա-  
ղութեան Իշխան» (9.6):

2. Բաբելոնի Աքսորի ամենէն դժուար շրջանին (587–539 Ք.ա.), մարգարէին աշակերտը 40–55 գլուխներուն մէջ, կը խօսի յոյսի մասին որ հիմնուած է Աստուծոյ վրայ, մինչ ժողովուրդը արքորի եւ գերութեան մէջ էր: Յոյսի այս խօսքերը կ'օգնեն որ հրեայ ժողովուրդը անդրադառնայ իր սխալ ընթացքին եւ վերանորոգէ իր հաւատքն ու համոզումները:

«Բայց Տէրոջը ապաւինողներուն ուժը  
պիտի նորոգուի եւ անոնք արծիւներու  
պէս թռչելով վեր պիտի ելլեն, պիտի  
վազեն ու չթուլնան, պիտի քալեն ու  
չոգնին» (40.31):

3. Աքսորէն վերադառնալով ժողովուրդը կ'ունենայ տեսա-  
կաւոր դժուարութիւններ: Այս շրջանին ժողովուրդին մէջ  
կար բաժանում եւ ատելութիւն, մանաւանդ օտարին  
հանդէպ: Մարգարէին աշակերտներէն ուրիշ մը 56–66  
գլուխներուն մէջ, կը ջանայ ցոյց տալ, թէ ժողովուրդը  
որքան հեռացած է Աստուծմէ:

«Քանզի մեր յանցանքները քու առջե-  
ւրդ շատցան ու մեր մեղքերը մեզի  
դէմ վկայութիւն կու տան... յան-  
ցանք գործեցինք, Տէրը ուրացանք եւ  
մեր Աստուծոյն հետեւելէն խտորե-  
ցանք» (59.12–13):

*Այս բաժինին մէջ կայ նաեւ փրկութեան, մխիթարութեան եւ ուրախութեան բարի լուրը, որ պիտի իրականանայ Տէրոջ Օծեալին միջոցով (61):*



*Մեր մեղքերուն, նեղութիւններուն եւ դժուարութիւններուն մէջ մեր միակ յոյսը Աստուած է, եւ մեզի տրուած Բարի Լուրը, թէ՛ Աստուած Տէր Յիսուսով ամէն օր մեզի հետ է:*



## **20. Ողբացող Մարգարէն Մարգարէութիւն Երեմեայ**

### **Ո՛վ էր Երեմիա մարգարէն**

Երեմիա մարգարէն սկսաւ քարոզել Յուդայի մէջ, Յովսիա թագաւորին օրերուն Ք.ա. 627 թ.ին եւ անոր յաջորդող վերջին չորս թագաւորներու օրերուն (Ք.ա. 627-587): Մարգարէն ապրեցաւ իր ժողովուրդին ամենադառն փորձառութիւնը՝ Երուսաղէմի գրաւումը եւ ժողովուրդին արքայը: Երեմիա կոչուած է ողբացող մարգարէ իր կրած նեղութիւններուն համար. ան իր կեանքով եւ վկայութեամբ Աստուծոյ վստահելու օրինակ մըն էր, հոգ չէ, թէ ան ինչ գին կը վճարէ: Մարգարէն իր անձէն եւ իր շահէն մեծ զիջումներ կը կատարէ հրեայ ժողովուրդին Աստուծոյ պատգամը փոխանցելու համար: Ան ժողովուրդին Աստուծոյ խօսքը կը փոխանցէր, սակայն ժողովուրդը փոխանակ անոր մտիկ ընելու, կը քննադատէ եւ կը հալածէ զայն:

Հրեայ ժողովուրդը հեռացած էր Աստուծմէ: Անոնք կը պահէին օրէնքները, կը պատուէին Ուխտի Տապանակը եւ կը մատուցանէին զոհեր, սակայն, իրենց սրտերուն մէջ անոնք Աստուծոյ համար տեղ չունէին: Մարգարէն անոնց կը յայտնէ, թէ Աստուած այս բոլորը պիտի վերցնէ, որ չըլլայ թէ ժողովուրդը անոնց դիմելով զինք մոռնան (3.16; 7.1-5; 26): Մարգարէն իր այս խօսքերուն համար դաւաճան եւ հերետիկոս կը նկատուի (այսինքն սխալ ուսուցում տուող): 38րդ գլխուն մէջ կը կարդանք, թէ ան ջրհորի մը մէջ կը դրուի, որ կը գործածուէր իբրեւ բանտ: Ան նաեւ բանի մը անգամներ մահափորձի կ'ենթարկուի:

### **Մարգարէին կեանքը եւ տանջանքները**

Երեմիա իր կեանքին ընթացքին պայքարած է քաղաքական եւ կրօնական ղեկավարներուն դէմ: Ենթադրելով, թէ Բաբելոնէն թշնամիներ պիտի գան եւ գրաւեն երկիրը, ան ուզեց զգուշացնել ժողովուրդը եւ կատարիչները: Իր օրերուն գտնուած են նաեւ սուտ մարգարէներ, որոնք փոխուելու եւ զգաստանալու որեւէ մարտահրաւէր չեն տուած ժողովուրդին: Անոնք միշտ դրական խօսքերով ժողովուրդը ճշմարտութենէն կը հեռացնէին, ինչպէս Անանիա մարգարէն (Եր. 28): Երեմիա ասոնց դէմ ալ պայքարած է, եւ յայտնած՝ թէ այդպիսիները Աստուծոյ հարազատ խօսքը չեն փոխանցեր:

### **Մարգարէին պատգամը**

«Տէրը այսպէս կ'ըսէ. Ծամբաներու վրայ կայնեցէ՛ք ու նայեցէ՛ք եւ հին շաւիղներուն համար հարցուցէք, թէ ո՞րն է բարի ճամբան. ու անոր մէջէն քալեցէք, որպէսզի ձեր հոգիներուն հանգիստը գտնէք.

Բայց անոնք ըսին. Անոր մէջէն պիտի չքալենք: Ուրեմն, ո՛վ ազգեր լսեցէ՛ք ... ահա ես այս ժողովուրդին վրայ չարիք պիտի բերեմ իբր անոնց խորհուրդներուն պտուղը, վասն զի իմ խօսքերուս մտիկ չըրին եւ իմ օրէնքս ալ մերժեցին» (6.6, 18):

Մարգարէն Նոր Ուխտի մը մասին կը խօսի որ դուրսէն պիտի չպարտադրուի մարդոց վրայ որպէս օրէնք: Աստուած պիտի վերահաստատէ իր ուխտը իր ժողովուրդին հետ: Այս անգամ, Աստուած իր օրէնքը անոնց ներսիդին պիտի դնէ եւ անոնց սրտին վրայ պիտի գրէ: Ամէնքը զԱստուած պիտի ճանչնան: Աստուած անոնց մեղքերը պիտի ներէ եւ ալ զանոնք պիտի չիշէ:



Ինչպէս Երեմիայի օրերուն, նոյնպէս այսօր, ճշմարտութիւնը վկայելը դժուար է. շատ ատի դիւրին է շրջանակին հաճելի եւ համակերպող խօսքեր խօսիլ, սուտ մարգարէներուն նման, քան ճշմարտութեան մէջ մնալ եւ զայն արտացոլել: Աստուծոյ օրէնքը քարերու կամ թուղթերու վրայ արձանագրուած չէ, այլ մարդուն ներսիդին արդէն իսկ տրուած է իրեն: Մարդուն կը մնայ փնտոտել այդ օրէնքը եւ զայն ընդունիլ:



## **21. Աստուծոյ Շնորհքը թէ Արդարութիւնը Մարգարէութիւն Յովնանու**

### **Ո՞վ էր Յովնան մարգարէ**

Յովնան մարգարէն (հաւանաբար ապրած է Ք.ա. Տրդ դարուն) Աստուծմէ պատուէր կը ստանայ Նինուէ երթալու, եւ հոն ժողովուրդին Աստուծոյ դատաստանին մասին քարոզելու:

Յովնան, փոխանակ արեւելք՝ Ասորեստան ուղղուելու, հակառակ ուղղութեամբ կ'երթայ դէպի Թարսիս, «Տէրոջը երեսէն հեռու» (1.3): Յովնան սակայն չի յաջողիր Աստուծոյ «երեսէն» փախչելու: Փոթորիկի եւ ալեկոծութեան հանդիպելով, ան կը ստիպուի Աստուծոյ հնազանդիլ: Յովնան Նինուէ կ'երթայ ու հոն կը քարոզէ, որուն արդիւնքով մարդիկ Աստուծոյ կը հաւատան:

### **Մարգարէին պատգամը**

1. Աստուած ներող Աստուած է.

Նինուէի ժողովուրդը, մարգարէին խօսքերը լսելով «իրենց չար ճամբաներէն դարձան. ուստի Աստուած գթաց ու այն չարիքը, որ անոնց վրայ պիտի բերէր, չբերաւ» (3.10): Յովնան «խիստ վշտացաւ ու նեղացաւ», երբ տեսաւ Նինուէի ժողովուրդը, որ դարձի եկաւ եւ իրեն համար սահմանուած պատիժը չկրեց:

Յովնան Աստուծոյ ըսաւ.- «Գիտէի, թէ՛ դուն ողորմած, գթած, երկայնամիտ եւ բազումողորմ Աստուած ես ու չարիքի համար կը ցախս» (4.2): Մարգարէն կը նկարագրէ Աստուած իբրեւ ողորմած, գթած, երկայնամիտ եւ բազումողորմ Աստուած: Ան կը ներէ բոլոր անոնց, որոնք իրենց չար ճամբաներէն Աստուծոյ կը դառնան:

2. Աստուած բոլորին փրկութիւնը կ'ուզէ.

Յովնանի պատմութիւնը ծաղրանքի առարկայ կը դարձնէ հրեայ (իբրեւ ընտրեալ) ժողովուրդին հպարտութիւնն ու բարեպաշտութիւնը: Աստուած ոչ միայն հրեաներուն, այլ եւ բոլոր ժողովուրդներուն փրկութիւնը կ'ուզէ:

3. Աստուծոյ շնորհքը թէ արդարութիւնը.

Յովնան մարգարէ նախ կը մերժէ Աստուծոյ պատուէրին հնազանդիլ, որովհետեւ իրեն համար հարց էր հետեւեալը՝ արդեօք արդա՞ր է որ Նինուէի մեղաւոր ժողովուրդը փրկուի եւ ազատի Աստուծոյ դատաստանէն:

Մարգարէութեան այս գիրքը հետեւեալը կը հաստատէ՝

Աստուած թէ՛ արդար է, եւ թէ՛ ողորմած: Անոր ներողամտութիւնը եւ գթութիւնը չափ եւ սահման չունին:



Որպէս մարդ արարածներ յաճախ դժուարութիւն կ'ունենանք ուրիշներուն յաջողութիւնը ընդունելու: Յաճախ կը խորհինք թէ այս կամ այն անձը արժանի չէր այդ բարձր տիտղոսին կամ այդ յատուկ առանձնաշնորհումին, նոյնիսկ ներումին:

Սակայն, Աստուած շնորհքի Աստուած է. անոր փրկութիւնը բոլորին համար է: Ան կու տայ մեզի առանց մեր արժանի ըլլալուն, եւ կու տայ ուրիշներուն նոյնպէս երբ արժանի չեն:

**Ե. Բանաստեղծական եւ Իմաստասիրական  
Գրություններ**

**22. Սաղմոսներ՝ Փառաբանութեան Երգեր**

**Սաղմոսաց գիրքը**

Սաղմոսաց գիրքը յատուկ գիրք մըն է՝ աղօթքի, փառաբանութեան եւ խորհրդածութեան: Գիրքը կը պարունակէ 150 սաղմոսներ, որոնք նաեւ կը կոչուին փառաբանութեան երգեր (Յունարէն թարգմանութեամբ):

«Ու բերանս դրաւ նոր երգ մը, մեր

Աստուծոյ գովութիւնը» (40.3):

Սաղմոսներուն հեղինակին (կամ հեղինակներուն) մասին ստոյգ տեղեկութիւն, ինչպէս նաեւ այլ պատմական տուեալներ հասած չեն մեզի: Սաղմոսները յաճախ կը սերտուին իրենց տարբեր բովանդակութիւններու եւ գրական ոճերու համաձայն: Սաղմոսներէն ոմանք կը նկարագրեն անհատական ապրումներ, իսկ ուրիշներ կ'արտասանուէին հաւաքականութեան կողմէ. անոնք ուրախութեան, ցաւի եւ ողբի մարդկային արտայայտութիւններ են: Ուստի, կարելի է Սաղմոսները 6 մասերու բաժնել:

**Ա. Փառաբանութեան սաղմոսներ**

«Աղաղակեցէ՛ք Տէրոջը, ո՛վ բոլոր երկիր: Ծառայեցէ՛ք Տէրոջը ուրախութեամբ. Անոր առջեւ կեցէ՛ք ցնծութեամբ» (100.1-2):

«Օրհնէ՛ Տէրը, ո՛վ իմ անձս...»

(104.1):

Սաղմոսներգուն ուրախութեամբ կ'երգէ Աստուծոյ մեծութեան եւ փրկարար միջամտութեան մասին:

Աստուած ամենակարող եւ ստեղծագործ Աստուած է (103, 104, 145):

#### **Բ. Շնորհակալութեան սաղմոսներ**

Այս սաղմոսները յատուկ ձեւով կ'անդրադառնան Աստուծոյ կատարած գործերուն: Աստուած կրնայ տարբեր վտանգներէ եւ նեղութիւններէ ազատել իր ժողովուրդը (18, 116, 118):

«Անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք» (30.4):

«Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ, չարէն պիտի չվախնամ» (23.4):

#### **Գ. Օգնութեան սաղմոսներ**

«Ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի, վասնզի տկար եմ ես ...» (6.2)

«Ինչպէս եղջերուն ջուրի վտակներու կը փափաքի, այնպէս ալ իմ անձս քեզի կը փափաքի, ո՛վ Աստուած» (42.1):

Այս սաղմոսները կը սկսին օգնութեան խնդրանքով մը: Յաճախ կը նկարագրուի հեղինակին նեղութիւնը եւ դժուարութիւնը՝ հիւանդութիւն, մահ կամ մեղք: Ընդհանրապէս կը նկարագրուի, թէ Տէրը ինչպէս օգնութեան հասած է, եւ ինչպէս հեղինակը իր դժուարութենէն փրկուած է (6, 22, 51, 69):

#### **Դ. Թագաւորական սաղմոսներ**

Այս սաղմոսները կ'արտասանուին որոշ առիթներու, ինչպէս թագաւորի մը օծումին կամ պատերազմէ մը յաղթական դուրս գալու առիթներով (2, 18, 72, 101):

**Ե. Իմաստութեան սաղմոսներ**

«Երանելի է այն մարդը, որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չի քալեր» (1.1):

Այս սաղմոսները կը պարունակեն խրատներ կեանքը իմաստութեամբ ապրելու: Անոնք նաեւ կը սորվեցնեն ինչպէս դիմագրաւել կեանքի դժուարութիւնները, Աստուծոյ խօսքը ունենալով որպէս ուղեցոյց (1, 34, 90):

**Զ. Պատարագի սաղմոսներ**

Այս սաղմոսները կ'արտասանուին պատարագի ժամանակ. իսկ յատուկ սաղմոսներ, զո՞ն մատուցանելու եւ կամ տաճար մտնելու ընթացքին կ'արտասանուէին: Որոշ արարողութիւններ ունէին իրենց յատուկ սաղմոսները (14, 50, 85, 136):



Սաղմոսները կ'առաջնորդեն մեզ աղօթքի մէջ զԱստուած փառաբանելու, շնորհակալ ըլլալու եւ իր առաջնորդութիւնը խնդրելու: Սաղմոսները կարդալով կը միանանք գոհաբանական եւ փառաբանութեան բոլոր աղօթքներուն, որոնք արձանագրուած են այս գիրքին մէջ:



## **23. Առակներ՝ Իմաստութեան եւ Յաջողութեան Ճամբան**

### **Ի՞նչ են առակները**

Առակները կարճ խօսքեր են, որոնք տպաւորիչ ձեւով մը կեանքի եւ աստիճանային մասին որոշ ճշմարտութիւններ կը ներկայացնեն: Անոնք ուղղուած են տարբեր տարիքի մարդոց, անոնց ամենօրեայ կեանքին մասին խրատելու եւ ուղղութիւն տալու:

### **Առակաց գիրքը**

Առակաց գիրքը կը պարունակէ իմաստասիրական խօսքեր եւ գրութիւններ, որոնք եկած են իմաստուն եւ գիտուն ուսուցիչներէ: Անոնք կ'ուսուցանէին նոր սերունդին, կեանքի փորձառութիւններուն վրայ հիմնելով իրենց խօսքերը: Գրութիւններէն մաս մը հաւանաբար կարելի է վերագրել Սողոմոն իմաստունին: Սակայն, գիրքը իր վերջնական ձեւով կը պատկանի Ք.ա. 4-5րդ դարերուն:

### **Առակները ի՞նչ կը սորվեցնեն**

Առակները կը սորվեցնեն զգուշութեամբ խօսիլ եւ արդարութեամբ ասրիլ, իմաստուն ըլլալ եւ կեանքի մէջ յաջողիլ: Անոնք կը ջանան կերտել ընթերցողին նկարագիրը, եւ օգնել որ կեանքի դժուարութիւններու եւ հարցերու առնչութեամբ ճիշդ դիրքորոշում ունենայ:

Վերջապէս, կարելի չէ միայն մարդկային ջանքերով իւրացնել իմաստութիւնը: Իմաստութիւնը Աստուծոյ պարգէն է, բոլոր անոնց որոնք կը փնտռեն զինք: Հետեւաբար, իմաստութեան նպատակն է Տէրը ճանչնալ, սիրել ու հնազանդիլ անոր:



*Մարդ արարած միշտ առիթը ունի փոխուելու, առիթը ունի ձգելու չարը, եւ իւրացնելու բարին: Անշուշտ «իմաստութիւնը Աստուծոյ պարգեւն է», ինչպէս Առակաց գիրքը կը շեշտէ: Սակայն, մենք ալ մեծ դեր ունինք իմաստութիւնը փնտռելու, ստանալու եւ անոր համեմատ ապրելու մէջ:*




## 24. Արդարին Տառապանքը Գիրք Յոբայ

### Ո՞վ էր Յոբ

«Հուս երկրին մէջ Յոբ անունով մարդ մը կար: Այն մարդը կատարեալ ու արդար եւ աստուածավախ էր ու չարութենէ ետ կը քաշուէր» (1.1):

Յոբ ունէր եօթը տղաք եւ երեք աղջիկներ: Ան նաեւ ունէր մեծ հարստութիւն եւ ստացուածք:



### Յոբի Տառապանքը

Յոբին դժուարութիւնները կը սկսին, երբ Աստուած աստանային կը հարցնէ. «Իմ Յոբ ծառայիս աղէկ ուշադրութիւն ըրի՞ր» (1.8): Սատանան կ'ըսէ, թէ Յոբ բարի է, պարզապէս քանի որ Աստուած իրեն լաւ հոգ կը տանի եւ անոր մեծ հարստութիւն տուած է: Սատանան կը

փորձէ Յոբը. ան նախ կը կորսնցնէ իր տղաները եւ աղջիկները, ապա իր հարստութիւնը եւ առողջութիւնը: Յոբի պատահածը զինք կ'առաջնորդէ գանգատի, յայտնելով թէ իրեն պատահածը արդար չէր: Սակայն, այս բոլորին մէջ դարձեալ, ան Աստուծոյ դէմ չի մեղանչեր:

### **Յոբին բարեկամները**

Յոբի երեք բարեկամները զինք մխիթարելու կու գան: Անոնք տեսնելով անոր սաստիկ ցաւը, կը փորձեն մխիթարել զինք, սակայն, նոյնպէս՝ կը մեղադրեն, իր տառապանքը վերագրելով իր մեղաւոր ընթացքին: Եղիուս անունով 4րդ խօսակից մը կը միանայ իրենց: Ան Աստուծոյ մեծութեան եւ անոր շնորհքին մասին կը վկայէ:

### **Յոբին հաւատքը Աստուծոյ հանդէպ**

Յոբ իր ցաւերուն եւ տառապանքին մէջ կ'ըսէ՝

«Վասն զի գիտեմ թէ իմ փրկիչս ողջ է ու անհկա վերջին ժամանակը պիտի ելլէ երկրի վրայ:

Ու թէեւ մորթէս ետքը այս ալ փճանայ, բայց իմ մարմնովս զԱստուած պիտի տեսնեմ» (19.25- 26):

Յոբ Աստուծոյ մեծութեան անդրադառնալով, կ'արհամարհէ իր անձը եւ Աստուծոյ կը դառնայ: Աստուած ալ Յոբին վերջը սկիզբէն աւելի կ'օրհնէ, ու անոր զաւակներ եւ հարստութիւն կու տայ:





*Յոբ ըստ. «Մօրս արգանդէն մերկ ելայ ու հոն մերկ պիտի դառնամ: Տէրը տուաւ ու Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը» (1.21):*



## 25. «Ունայնություն Ունայնութեանց» Գիրք Ժողովողի

### **Ժողովողի Գիրքը**

«Ժողովողի» Յունարէնով կը նշանակէ մարդիկ ժողովի կանչել, քարոզելու նպատակով: Գիրքը հաւանաբար գրուած է Բաբելոնի Աքսորէն ետք՝ Ք.ա. 400–200 թուականներուն:

Հեղինակը իմաստուն մարդ մըն էր, որ իր ժամանակին ընդունուած գաղափարները եւ արժէքները կը քննադատէ: Ուրիշներ կը սորվեցնէին, թէ լաւ գործերով եւ զոհեր մատուցանելով կարելի է Աստուծոյ մօտենալ եւ կատարելութեան հասնիլ: Սակայն, հեղինակին համար այս բոլոր բաները ունայնություն են (այսինքն անիմաստ). «Աստուծմէ վախցողը ամենէն ապահով կ'ելլէ» (7.18):

### **Ժողովողին պատգամը**

Ժողովողի գիրքը կը բաղկանայ կարճ գրություններէ, որոնք կը շեշտեն մէկ գաղափար՝ «Ամէն բան ունայնություն է», «արեւուն տակ բնաւ նոր բան մը չկայ» (1.2, 9): Գիրքը ընթերցողին դիմաց կը դնէ հարցում մը՝ «Ի՞նչ օգուտ կ'ունենայ մարդ արեւուն տակ քաշած բոլոր աշխատանքէն» (1.3): Գիրքը երկու մասերով կը պատասխանէ այս հարցումին:

### **Ա. Փիլիսոփայական մօտեցումով**

Հեղինակը կը խօսի կեանքի ունայնութեան մասին: Ան կը դիմէ կեանքի տեսակաւոր կերպերու, իր սիրտը զուարճացնելու համար: Ան կը ջանայ իմաստ գտնել հարստութեան, գործի եւ հաճոյքի մէջ. սակայն, «ահա ամէն բան ունայնություն է», միայն հոգիի տանջանք եւ ցաւ բերող բաներ են:

### **Բ. Դրական պատգամով**

«Մարդու ուտելն ու խմելը եւ իր բոլոր աշխատութենէն բարիք վայելելը Աստուծոյ պարգեւն է» (3.13): Հեղինակը կ'ամփոփէ, ըսելով, թէ մարդ ինչպէս ապրելու է իր կեանքը: Երիտասարդը ուրախութեամբ եւ զուարճութեամբ ապրելու է: Սակայն, ան գիտնալու է, թէ իր ըրածներուն եւ իր ամբողջ կեանքին համար, Աստուած զինք դատաստանի պիտի կանչէ: Ան կ'ամփոփէ ըսելով՝

«Աստուծմէ վախցի՛ր ու անոր պատուիրանքները պահէ՛, վասնզի մարդուն բոլոր պարտականութիւնը ասիկա է» (12.13):



Ընդհանրապէս ժամանակաւոր արժէքները գրաւիչ եւ հաճելի կ'երեւին. սակայն անոնք ընտրելով, մարդուն հոգին չի կրնար իսկական գոհացում ունենալ:

Միայն Աստուծոյ հետ եւ Աստուծոյ մէջ մարդ արարածին կեանքը կ'իմաստաւորուի եւ նպատակ կը ստանայ:



## 26. Եսթեր Կազատէ իր Ազգը

### **Եսթերայ գիրքը**

Աքսորի պատճառով Բաբելոնի մէջ շուրջ կէս դար մնալէ ետք, հրեաներէն մաս մը կը վերադառնայ իր երկիրը, Բ.ա. 6րդ դարուն: Սակայն, մեծ մասը կը շարունակէ մնալ Բաբելոնի մէջ, պարսկական իշխանութեան ներքեւ, ուր կը շարունակէ հրէական արարողութիւնները պահել: Այս մէկը որոշ դժուարութիւններ կը պատճառէ իրենց, ուրիշ ազգերու հետ: Եսթերայ գիրքը կը պատմէ հրեաներուն եւ այլ ազգերուն միջեւ եղած թշնամութեան պատմութիւն մը:

### **Ո՞վ էր Եսթեր**

Եսթեր հրեայ որբ աղջիկ մըն էր, որ հաւանաբար ապրած էր Աքսորի շրջանին, Պարսկաստանի մէջ:

### **Ի՞նչ կ'ընէ ան**

Եսթերին պատմութիւնը կը սկսի, երբ ան թագաւորին կողմէ կ'ընտրուի ըլլալու պարսիկներուն թագուհին: Կը կարդանք, թէ Համան անունով խորամանկ պալատական մը կը ծրագրէ բոլոր հրեաները բնաջնջել: Ան կ'ամբաստանէ Եսթերը եւ անոր հօրեղբօրորդին՝ Մուրթքէն, թագաւորը սպաննել ծրագրելու յանցանքով: Համան կը յաջողի հրովարտակներ դրկել բոլոր գաւառները եւ հրամաններ արձակել յատուկ օրուայ մը մէջ (Մարտ 13ին) հրեաները սպաննելու:

Մուրթքէ կը դիմէ Եսթերին օգնութեան: Եսթեր կը յաջողի թագաւորին իմացնել Համանին դաւադրութիւնը, որ կ'իյնայ իր լարած ծուղակին մէջ: Հրեաներ վտանգէն կ'ազատին եւ կը սպաննեն իրենց թշնամիները:

### *Ինչպե՞ս կը յիշուի Եսթերը*

*Մինչեւ օրս հրեաները կը տօնեն Մարտ 13ը [Purim] : Այդ օրը Եսթերայ Գիրքը ամբողջութեամբ կը կարդացուի, յիշելու, թէ՛ ինչպե՞ս իրենց նախահայրերը չարէն ազատեցան :*



*Երկու ճամբաներ կան մարդ արարածին դիմաց ընտրելու անոնցմէ մէկը եւ այդպիսով՝ սահմանելու իր սկզբունքը կամ կերպը կեանքի մէջ յառաջ երթալու եւ բարձրանալու : Ասոնցմէ առաջինը խաբէութիւնն է, իսկ երկրորդը՝ ճշմարտութեան ճամբան : Անշուշտ խաբէութեան ճամբան կրնայ շատ աւելի արագ արդիւնք տալ քան ճշմարտութեան ճամբան, սակայն միեւնոյն ժամանակ, շատ շուտով ալ կրնայ մարդը ամբողջական կորուստի մատնել :*



## **27. Նոր Ինքնութիւն Եզրաս Եւ Նէեմիա**

### **Աքսորէն վերադարձ**

Բաբելոնի Աքսորէն շուրջ կէս դար ետք, Պարսից Կիւրոս թագաւորը՝ Ք.ա. 539 թ.ին, կ'արտօնէ որ հրեաները իրենց երկիրը վերադառնան: Անոնցմէ մաս մը Երուսաղէմ վերադառնալով, կը սկսին վերաշինել իրենց տաճարը:

### **Ո՞վ էր Եզրաս**

Եզրաս եղած է քահանայ եւ դպիր: Բաբելոնի Աքսորին յաջորդող շրջանին, ան մեծ դեր ունեցած է վերահաստատելու հրէական կրօնքն ու օրէնքները: Ան նկատուած է պաշտամունքի, օրէնքներու եւ Ս. Գրոց հմուտ ժամանակագիր:

### **Ո՞վ էր Նէեմիա**

Նէեմիա Եզրասէն ետք կերթայ Երուսաղէմ, շինելու քաղաքին պարիսպները (Ք.ա. 445-444 թուականներուն): Ան եղած է պարսից թագաւորին բաժակակիրը: Երբ կը լսէ, թէ հրեաները Երուսաղէմ վերադառնալէն ետք քաղաքը քարուքանդ գտած են, կ'որոշէ Երուսաղէմ երթալ իր ժողովուրդին օգնելու:

Թագաւորին հրամանով, Նէեմիա կը դրկուի Երուսաղէմ, որպէս Յուդայի շրջանին կառավարիչ: Իրեն կ'ընկերակցին զօրապետեր եւ ձիաւորներ: Ան քաղաքին փլած պարիսպները քննելով, ժողովուրդը ծանր աշխատանքի կը լծէ: Ան նաեւ կրօնական բարեկարգութիւններ ալ կը կատարէ. կը պատուիրէ ներել կամ շնորհել աղքատներուն պարտքերը, կ'արգիլէ Շաբաթ օրով գործ կամ վաճառականութիւն ընել, ինչպէս նաեւ ոչ-հրեաներու հետ խառն ամուսնութիւն կնքել:

Եզրաս եւ Նէեմիա գործակցելով հաւաքած են ժողովուրդը եւ անոնց պատմած՝ իրենց հայրերուն պատմութիւնը: Այսպիսով, անոնք յաջողած են անոնց նոր ինքնութիւն մը տալ:

### **Եզրասի եւ Նէեմիաի Գիրքերը**

Եզրասի եւ Նէեմիաի գիրքերը Ա. եւ Բ. Մնացորդաց գիրքերուն հետ, կը պատկանին մէկ հեղինակի: Ա. եւ Բ. Մնացորդաց գիրքերը կը պատմեն Իսրայէլի պատմութեան սկիզբը մինչեւ Բաբելոնի Աքսորը: Իսկ Եզրասն ու Նէեմիան կը շարունակեն պատմել յաջորդ 100 տարիներու պատմութիւնը (Բ.ա. 536-432):



Հրեաները յուսահատ վիճակի մէջ էին Աքսորի շրջանին: Անոնք վերադառնալով, կրցան նոր ինքնութիւն մը ունենալ: Մարդ արարածին ամէն օր կը շնորհուի նոր ինքնութիւն եւ նոր կեանք ձեռք ձգելու կարելիութիւնը. մարդուն կը մնայ սակայն այդ շնորհքը ընդունիլ:



## **28. Աստուծոյ Յախտենական Թագաւորութիւնը Մարգարէութիւն Դանիէլի**

### **Դանիէլի գիրքը**

Դանիէլի գիրքը իմաստուն եւ աստուածավայն հրեայ երիտասարդի մը պատմութիւնն է, որ հաւանաբար պատահած է Բաբելոնի Աքսորիկն շրջանին (587-539 Ք.ա.), սակայն արձանագրուած է 2րդ դարուն Ք.ա.: Այս գիրքը պատմութիւններու եւ տեսիլքներու միջոցով կը յայտնէ, թէ Աստուած կ'իշխէ պատմութեան վրայ:

### **Ո՞վ էր Դանիէլ**

Դանիէլ Երուսաղէմէն Բաբելոն արքայութիւնը Էր, իր երեք բարեկամներուն հետ՝ Սեդրակ, Միսաք եւ Աբեդնաքով: Ինք, Բաբելոնի թագաւոր Նաբուգոդոնոսորին (605-562 Ք.ա.) կողմէ արքայութեանը առաջին խումբին կը պատկանէր (Գ.Թգ.24.10-16): Դանիէլ Աստուծոյ հաւատարիմ մնալով, քաջութեամբ կը մերժէ հեթանոսական սովորութիւններուն ենթարկուիլ: Այսպիսով, ան կը վտանգէ իր կեանքը: Սակայն, վերջաւորութեան ի յայտ կուգայ ճշմարտութիւնը եւ Աստուծոյ արդարութիւնը:

Գիրքին մէջ կը կարդանք տարբեր պատմութիւններ.- Դանիէլի եւ իր ընկերներուն դրուագը, թագաւորին երազին՝ Դանիէլի մեկնաբանութիւնը, Դանիէլի բարեկամներուն մահուան դատապարտուիլը նաեւ Դանիէլի առիւծներուն գուրը նետուիլը:

### **Դանիէլի պատմութեան պատգամը**

1. Աստուած պատմութեան մէջ ներկայ է եւ կը գործէ, որպէսզի բոլոր մարդիկ (հրեայ, թէ՛ հեթանոս) զինք ճանչնան որպէս միակ ճշմարիտ Աստուածը:

2. Աստուած ամենասուրբ եւ ամենաբարձրն է: Ան մարդկային բոլոր հաշիւներէն եւ ծրագիրներէն վեր է, որ կրնայ ձախողցնել նոյնիսկ երկրի իշխանութիւնները, որոնք վերջ ի վերջոյ պիտի փոխարինուին Աստուծոյ Թագաւորութիւնով:

«Այն թագաւորներուն օրերը երկինքի Աստուածը ուրիշ թագաւորութիւն մը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի չաւերուի... Անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հասցնէ ու ինք յաւիտեան պիտի մնայ» (2.44):



Դանիէլի պատմութիւնը կարդալով կ'անդրադառնանք, թէ ան որքան քաջ երիտասարդ մըն էր: Դանիէլի համար Աստուած էր միակ թագաւորը, որուն առջեւ խոնարհելով, ան կ'աղօթէր եւ իրմէ կը խնդրէր: Դանիէլի նման ապրելով առիթ կու տանք որ Աստուծոյ յաւիտենական Թագաւորութիւնը այսօր մեր կեանքերուն մէջ գայ:





## **Զ. Նախաբան Նոր Կտակարանի**

### **29. Յունական եւ Հռոմէական Իշխանութեան Ներքեւ**

#### **Հին եւ Նոր Կտակարաններու միջեւ**

Հրեաներ պարսկական իշխանութեամբ կը վերադառնան իրենց երկիրը եւ կը վերաշինեն քանդուած տաճարը 5րդ դարուն Ք.ա: Պարսկական իշխանութեան կը յաջորդէ Յունական տիրապետութիւնը:

#### **Յունական տիրապետութիւն եւ մշակոյթ**

332-323 թուականներուն Ք.ա., Մեծն Աղեքսանդր կը յաղթէ պարսիկներուն եւ մէկ յունական մշակոյթ հիմնելու նպատակով կը գրաւէ շատ մը երկիրներ: Ան կը յաջողի հիմնել հելլենական մշակոյթ մը, որուն բուն լեզուն յունարէն էր, սակայն միեւնոյն ժամանակ բաց էր կայսրութեան տարբեր մշակոյթները ընդունելու:

Մեծն Աղեքսանդրի մահէն ետք, 301 թ.ին Ք.ա., կայսրութիւնը կը բաժնուի չորսի, որոնցմէ երկուքը Պաղեստինի հետ առնչուած էին.

- Պողոմեան իշխանութիւն՝ Եգիպտոսի եւ հարաւային Պաղեստինի շրջաններուն վրայ կը տիրապետէ:

- Սելեւկեան իշխանութիւն՝ Բաբելոնի (Միջագետք) եւ Սուրիոյ շրջաններուն վրայ կը տիրէ:

Հրեաներ սկիզբը կ'իյնան Պողոմեան իշխանութեան տակ, սակայն 198 թ.ին Ք.ա. Պողոմեան իշխանութիւնը պարտուելով Սելեւկեաններէն, Հրէաստան կը մտնէ սելեւկեաններու տիրապետութեան տակ:

#### **Որոշ անկախութիւն**

Այս նոր իշխանութեան տակ հրեաներ շատ դժուարութիւններէ կ'անցնին պահելու իրենց ինքնութիւնը, որ հիմնուած էր իրենց հաւատքին եւ օրէնքներուն վրայ: Շատ մը

հրեաներ կը նահատակուին: Սակայն 165-164 թուականներու միջեւ Մակաբայեցի Յուդայի առաջնորդութեամբ, հրեաներ Սելեւկեաններուն դէմ կը պայքարին եւ կը յաղթեն: Այս յաղթութեամբ անոնք կ'ունենան որոշ քաղաքական եւ կրօնական ազատութիւն:

### **Հրէաստան հռոմէացիներու իշխանութեան տակ**

Հռոմէական իշխանութիւնը սկսելով եւ տարածուելով 63 թ.ին Ք.ա. կը հասնի Պաղեստին եւ իբր արդիւնք հրեաներու անկախութիւնը կը վերջանայ: Հրեաներ դարձեալ դժուարութիւններէ կ'անցնին եւ կը սպասեն Աստուծոյ միջամտութեան եւ փրկութեան:

### **Տէր Յիսուս (4 Ք.ա. – 30 Ք.ե.)**

Հռոմէական տիրապետութեան շրջանին Յիսուս քարոզեց նոր իշխանութեան մը մասին որ հաստատուած էր ոչ թէ զինուորական ուժի տիրապետութեան, այլ արդարութեան, հաւասարութեան եւ մարդկային ազատութեան արժէքներուն վրայ: Հրեաներ իր օրերուն կ'ակնկալէին թագաւոր մը, որ ազատէր զիրենք օտար տիրապետութիւններէ: Սակայն Յիսուս շարունակեց խօսիլ եւ տրվեցնել Աստուծոյ սիրոյն եւ Թագաւորութեան մասին: Անոր պատգամը քիչեր ընդունեցին, սակայն ան այսօր ունի մեծ թիւով հետեւորդներ, որոնք կը փնտռեն ո՛չ թէ աշխարհային փառք, այլ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը:



Հրեաներ կը սպասէին աշխարհիկ (քաղաքական) տեսանկիւնէ դիտուած զօրաւոր եւ հեղինակաւոր թագաւորի մը (մեսիային), որ զիրենք զէնքի ուժով ազատէր թշնամիներուն իշխանութենէն:

Յիսուս սակայն տարբեր էր. ան Խաղաղութեան Իշխան կոչուեցաւ եւ անոր Թագաւորութիւնը այս աշխարհէն չէր:



### **30. Գրականություն, Կրօնական Խմբակներ և Հաստատություններ Յիսուսի Օրերուն**

#### **Հրէական գրականություն**

Յիսուսի օրերուն եւ իրմէ առաջ մօտ 2 դարեր՝ [Հին Կտակարանի վերջին գրութեան՝ Դանիէլի 165 Բ.ա., եւ Նոր Կտակարանի առաջին գրութեան՝ Ա.Թեսաղոնիկեցիս 50 Բ.ե.ի միջեւ] հրեաներ ունէին իրենց յատուկ գրականութիւնը, որ կը բաղկանար վարդապետական գրութիւններէ: Այս գրութիւնները կը ջանային բացատրել Հին Ուխտի օրէնքները, եւ հասկնալի դարձնել զանոնք կարդացողին: Երեք խումբերու կարելի է բաժնել այս գրութիւնները:

Ա. «Միշնա», բերանացի մեկնաբանութիւն Օրէնքի գիրքերուն, որ վերջը գրի առնուած է.

Բ. «Կեմարա», «Միշնա» յի բացատրութիւնը. «Միշնա» եւ «Կեմարա» միասին հաւաքուելով կը կազմեն «Դալմուտ»ը:

Գ. «Միտրաշ», Օրէնքի գիրքերուն բառացի բացատրական գիրքն է:

Եղած են նաեւ ուրիշ պատմական, բանաստեղծական եւ իմաստութեան գրութիւններ, որոնց մէջ յստակ է հրէական մտքի զարգացումն ու փոփոխութիւնը:

#### **Կրօնական խումբեր**

Յիսուսի ապրած օրերուն արդէն գոյություն ունէին հիմնական հինգ կրօնական խումբեր: Անոնք կազմուած էին 2րդ դարուն Բ.ա. մակաբայեցիներուն օրերուն:

##### **1. Փարիսեցիներ**

Կրօնական կարելոր դասակարգ մը կը կազմեն: Անոնք կը հաւատային Օրէնքի գիրքերուն, հաւատարմօրէն եւ

անկեղծորեն կը ջանային գործադրել օրէնքները: Անոնց գլխաւոր թերութիւնը այն էր որ Աստուծոյ մօտենալու համար կը վստահէին իրենց անձնական բարեպաշտութեան եւ սրբութեան: Փարիսեցիներ Հոռմէացիներուն դէմ քաղաքական գործունէութիւն չունէին:

## **2. Սադուկեցիներ**

Երկրորդ կարեւոր խումբը կը կազմեն: Ասոնք կու գային քահանայական դասակարգէ, եւ ունէին քաղաքական հետաքրքրութիւններ եւ աշխատանքներ, ինչպէս նաեւ ինքզինքնին գերադաս կը նկատէին միւս խումբերէն: Սադուկեցիներ պատրաստ էին գործակցելու Հոռմէացիներուն հետ ապահովելու իրենց հեղինակութիւնը եւ տնտեսական շահերը:

Սադուկեցիներ կը հաւատային Օրէնքի գիրքերուն ու չէին ընդուներ հոն չգտնուող գաղափարներ, ինչպէս՝ յարութեան, Մեսիայի գալուստի եւ կամ հրեշտակներու մասին կարծիքներ:

## **3. Էսսիներ**

Այս դասակարգին պատկանողներ համոզուած էին, որ աշխարհը ապականած է եւ մարդիկ՝ մեղաւոր: Հետեւաբար անջատեցին իրենք զիրենք առօրեայ կեանքի պայմաններէ, ոմանք ամբողջովին հեռու ապրեցան: Այս խումբին պատկանողներ ունէին իրենց յատուկ օրէնքները:

## **4. Նախանձայոյզներ**

Այս խումբին պատկանողները ունէին հրէական ազգաշունչ հոգի, ինչպէս նաեւ փափաք՝ զէնքով շահուած անկախութեան եւ զօրութեան: Այս խումբին պատկանողներ պատրաստ էին պատերազմ մղելու հոռմէացիներու դէմ, այն համոզումով, որ Աստուած պիտի միջամտէ եւ ազատէ զիրենք:

### **5. Երկրին ժողովուրդը**

Այս մեծամասնության կը պատկանէին մնացեալները, որոնք սովորական դասակարգի պատկանելով, միայն ծանր աշխատանքով կրնային ապահովել իրենց ապրուստը, որովհետեւ հռոմէացիներ մեծ տուրք կ'առնէին իրենցմէ: Ասոնք Օրէնքի գիրքերը մանրամասնօրէն չէին գիտեր, սակայն կը փորձէին իրենց կարելիութեան համեմատ հաւատարիմ ըլլալ անոնց: Այս խումբին էր որ Յիսուս քարոզեց եւ սորվեցուց:

### **Հրէական կարեւոր հաստատութիւններ**

**Տաճար.**– Տաճարին մէջ ամենօրեայ զոհեր կը մատուցուէին, եւ յատուկ արարողութիւններ տեղի կ'ունենային զատիկներու առիթներով: Հրեաներ որոնք Պաղեստինէ դուրս կ'ապրէին, նուազագոյնը տարին անգամ մը Երուսաղէմ կը վերադառնային, զատիկներէն մէկուն առիթով:



**Տաճարին հիմնական մասերը ներկայացնող պատկեր մը**

**Ծերակոյտ (Սանհեդրին).**– Հրեաներու կառավարիչ մարմին, իրաւարար եւ օրէնսդիր, բարձրագոյն ատեան: Կը բաղկանար 71 հոգիներէ, որոնց կ'ատենապետէր

*Քահանայապետը: Այս մարմինը կը կառավարէր Հոռոմի արտօնութեամբ եւ իրաւունք չունէր մահուան վճիռ արձակելու:*

**Ժողովարան (Սինակոկ).**– Հաւանաբար Աքսորի շրջանին սկսած էին ժողովարանին մէջ պաշտամունքները, Ծաբաթ օրերը, ինչպէս նաեւ շաբաթամէջի օրերուն: Քրիստոնէաներ առաջին անգամ Աւետարանը Ժողովարանին մէջ կը քարոզեն:



*Թէպէտ այս խմբակներն ու հաստատութիւնները իրական չեն մեր ներկայ կեանքին մէջ, սակայն ինչպէս անցեալին, նաեւ այսօր, կան փարիսեցիներու նկարագրով անհատներ, որոնք իրենց անձնական բարեպաշտութեան կը վստահին, կամ ուրիշներ՝ որոնք կը հաւատան թէ միայն զէնքով կայ փրկութիւն: Յիսուս սակայն քարոզեց երկրին համեստ ժողովուրդին, եւ ինք ալ համեստ եւ խոնարհ Տէր էր:*



### **31. Նոր Կտակարանին Պատգամը՝ Աստուած Մեզի Հետ Է**

#### **Ինչպէ՞ն կը փոխուին առաքեալներուն կեանքերը**

Նոր Կտակարանը արդիւնքն է առաջին քրիստոնէականերու (առաքեալներուն) հաւատքին. Անոնք ունէին այն համոզումը, թէ Բարի Լուրը, որ Յիսուսով հասաւ իրենց, բոլորին համար է եւ թէ իրենք իրենց հաւատքով ու վկայութեամբ կրնան աշխարհը փոխել: Յիսուսի բերած Բարի Լուրը ազատեց զիրենք այդ օրերու ճնշիչ իշխանութիւններու եւ օրէնքներու հեղինակութենէն եւ բեռէն:

«Ամուր կեցէք այն ազատութիւնով,  
որով Քրիստոս մեզ ազատեց եւ  
նորէն ծառայութեան լուծի տակ մի՛  
մտնէք» (Գղ. 5.1):

Անոնք նաեւ ունեցան խաղաղութիւն եւ ուրախութիւն, նոյնիսկ նեղութիւններու մէջ, ինչպէս նաեւ յոյս, սէր եւ քաջութիւն Բարի Լուրը տարածելու: Առաջին քրիստոնէակաները կը խօսին նոր կեանքի եւ նոր իրականութեան մը մասին, որ ուժի գերադասութեան վրայ հիմնուած չէ, այլ Աստուծմէ տրուած է բոլոր անոնց, որոնք կ'ընդունին իր պարգեւը: Առաջին քրիստոնէականերու կեանքին մէջ պատահածը իրենց կեանքերը ամբողջովին կը փոխէ:

«Ուրեմն եթէ մէկը Քրիստոսին մէջ է,  
անիկա նոր ստեղծուած մըն է:  
Հիները անցան եւ ահա ամէն բան  
նոր եղաւ» (Բ. Կր. 5.17):

**Ի՞նչ կը պատահի առաջին քրիստոնեաներու կեանքին մէջ Առաջին քրիստոնեաներ կ'ունենան յատուկ փորձառութիւն մը: փորձառութիւն բառով ըսել կ'նշուի մարդուն եւ Աստուծոյ հանդիպումը եւ յարաբերութիւնը (ինչպէս Պօղոս առաքեալին փորձառութիւնը Դամասկոսի ճամբուն վրայ, Գրծ.9.1-19): Աստուծոյ զօրութիւնը կը ներգործէ մարդուն սովորական կեանքին մէջ, որուն արդիւնքով մարդուն կեանքը կը փոխուի: Այս հանդիպումը եւ յարաբերութիւնը զարմանալի եւ բացառիկ են, այնպէս որ կարելի չէ նկարագրել զանոնք մեր բառերով: Սակայն պէտք է հոս անդրադառնալ այն յատուկ փորձառութեան որ կը փոխէ շատերու կեանքը, ինչպէս փոխեց Պօղոս առաքեալին կեանքը, Քրիստոնէութիւնը հալածողէ մը՝ Քրիստոնէութիւնը քարոզողի:**

### **Յիսուսի յարութիւնը**

«Անհկա մեռելներէն յարութիւն առաւ»․ այս վկայութեամբ եւ այս հաւատքով կը սկսի Քրիստոնէութիւնը տարածուիլ: Պօղոս առաքեալ կը գրէ կորնթացիներուն․

«Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ . . . եւ թաղուեցաւ ու յարութիւն առաւ երրորդ օրը, . . . եւ երեւցաւ Կեփասին ու ետքը տասներկուօրին: Ետքը հինգ հարիւրէ աւելի եղբայրներուն մէկտեղ երեւցաւ, որոնցմէ շատեր մինչեւ հիմա կ'ապրին եւ ոմանք ննջեցին: . . . ամենէն ետքը՝ . . . ինծի ալ երեւցաւ» (Ա.Կր. 15.3-8):

Պօղոս առաքեալ կը խօսի հոգեւոր փորձառութեան մը մասին, երբ յարեալ Յիսուս (ոչ սովորական մարդ)

ուրիշներու եւ իրեն կը հանդիպի եւ իրենց կեանքը  
փոխելով իրենց առաքելութիւն մը կու տայ:



Առաջին քրիստոնէաներուն նոյն այդ հաւատքի փորձառու-  
թիւնը այսօր մենք ալ կրնանք ունենալ: Նոյն Բարի Լուրը  
այսօր մեզ ալ կրնայ փոխել, ազատել չարին եւ ամբոխին  
մէջ կորսուելու ճնշումէն եւ տալ մեզի ուրախութիւն,  
խաղաղութիւն եւ յոյս: Իրենց նման մենք ալ կրնանք  
յարեալ Յիսուսի հետ հանդիպիլ, եւ վայելել անձնական  
յարաբերութիւն մը իրեն հետ:

Յիսուս իր մահէն եւ յարութենէն երկար տարիներ  
ետք տակաւին կ'ապրի, ան մեզի հետ է իր Հոգիով, կը  
զօրացնէ, կը նորոգէ եւ կ'առաջնորդէ եթէ իրմէ  
խնդրենք:



**Է. Տէր Յիսուսի Առաքելութիւնը**  
**32 Աւետարան ըստ Մարկոսի**

**Համատեսակ Աւետարանները**

Մարկոսի, Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարանները կը կոչուին Համատեսակ Աւետարաններ «Synoptic Gospels», որովհետեւ բաւական մեծ նմանութեամբ կը պատմեն Յիսուսի կեանքը եւ կը փոխանցեն Բարի Լուրը, որ կու գայ մեզի Տէր Յիսուսով:

**Ո՞վ գրած է Աւետարանը եւ ե՞րբ**

Աւետարանին հեղինակին մասին տեղեկութիւն չունինք: Աւանդութիւնը Աւետարանը կը վերագրէ «Մարկոս ըսուած Յովհաննէս»ին, որ յիշուած է Գրծ.12.12ի մէջ: Ան ընկերակցած էր Պօղոս առաքելին իր աւետարանչական որոշ ճամբորդութիւններուն ընթացքին (Կղ.4.10), ինչպէս նաեւ Պետրոսին (Ա.Պտ.5.13): Անոր մայրը իր տունը բացած էր Երուսաղէմի մէջ որպէս առաջին եկեղեցին: Աւետարանը չ'ակնարկէր Երուսաղէմի եւ տաճարին քանդումին, ինչպէս կ'ընեն միւս Համատեսակ Աւետարանները. հետեւաբար անիկա գրուած ըլլալու է Հռոմի մէջ, տաճարը քանդուելէն (70 թ.ին) առաջ: Ընդունուած է թէ Մարկոսի Աւետարանը առաջին արձանագրուած Աւետարանն է:

**Նպատակ եւ պատգամ**

Աւետարանը կը շեշտէ թէ՝

1. Յիսուս Աստուծոյ Որդին է: Յիսուս յատուկ յարաբերութիւն ունէր Աստուծոյ հետ, ունէր յատուկ առաքելութիւն, ինչպէս նաեւ՝ յատուկ զօրութիւն եւ իշխանութիւն:

2. Յիսուս, Աստուծոյ Որդին ըլլալով, նկարագրուած է նաեւ որպէս սովորական մարդ. ան կ'ուտէ, կը քնանայ, կը խօսի եւ կը սորվեցնէ յաճախ գործով, քան խօսքով: Աւետարանը պարզ եւ դիւրին ոճով կը նկարագրէ Յիսուսի կեանքը, աւելի ծանրանալով անոր գործերուն քան՝ խօսքերուն:

3. Յիսուսի առաքելութիւնն էր Աստուծոյ Թագաւորութեան մասին քարոզել եւ զայն իրական դարձնել: Հրեաներ կ'ակնկալէին Մեսիային գալուստը, որ պիտի կործանէր թշնամիները եւ նոր թագաւորութիւն մը հաստատելով զիրենք պիտի ազատէր քաղաքական եւ կրօնական ճնշումներէ: Յիսուս չարմարեցաւ անոնց այս ակնկալած պատկերին, հետեւաբար ան մերժուեցաւ իրենցմէ. Յիսուսի հաստատած Թագաւորութիւնը տարբեր էր:

**Յիսուս (4 Ք.ա. – 30 Ք.ե.)՝ Մարկոսի Աւետարանին մէջ** Աւետարանիչը կը ներկայացնէ Յիսուսի կեանքը պարզ ձեւով. Յիսուս կ'ապրէր Գալիլիոյ մէջ: Ան կը մկրտուի Յորդանան գետին մէջ եւ կը սկսի քարոզել (1.14–9.50): Գալիլիոյ մէջ մարդիկ կը դիմաւորեն զինք խանդավառ ութեամբ: Հոնկէ Յիսուս կ'երթայ հեթանոսներուն՝ Տիրոսի ու Սիդոնի սահմանները (7.24, 36): 10րդ գլխուն մէջ Յիսուս կ'երթայ Երուսաղէմ:

Երուսաղէմ կը ներկայացնէր Գալիլիոյ հակառակ պատկերը. հոն կեդրոնն էր կրօնական առաջնորդներու, որոնք կը կարծէին թէ իրենք ամբողջ ճշմարտութիւնը գիտեն: Յիսուս նաեւ կը քարոզէ Երուսաղէմի մէջ, սակայն սկիզբէն ան կը մերժուի, ինչպէս նաեւ կը մերժուի իր առաքելութիւնը որ սկսած էր Գալիլիոյ մէջ (3.22): Հոն կը խաշուի եւ գերեզմանը պարսպ կը տեսնուի (11.1–16.8): Աւետարանին վերջաւորութեան Աստուծոյ հրեշտակը անոր յարութեան լուրը կու տայ աշակերտներուն:



*Յիսուս Աստուծոյ Որդի ըլլալով ընդունուեցաւ եւ սիրուեցաւ  
ոմանց կողմէ (Գալիլիոյ մէջ) եւ անարգուեցաւ ու մերժուե-  
ցաւ ուրիշներէ (Երուսաղէմի մէջ): Նման ճակատագրի կը  
հանդիպին բոլոր անոնք, որոնք իրեն կը հետեւին:*



### 33. Հատուածներ՝ Մարկոսի Աւետարանէն

**Նախաբան համարը.**– «Աստուծոյ Որդիին Յիսուս Քրիստոսի Աւետարանին Սկիզբը» (1.1):

**Աստուծոյ Որդի.** Աւետարանին բուն պատգամն է թէ Յիսուս Աստուծոյ Որդին է:

**Յիսուս.** Այս անունը կը ներկայացնէ սովորական մարդ մը «...հիւսնը...Մարիամին որդին եւ Յակոբոսին ու Յովսէսին եւ Յուդային ու Սիմոնին եղբայրը» որուն քոյրերն ալ ծանօթ են (6.3). սովորական մարդ մը, սակայն ամբողջովին տարբեր ուրիշներէ:

**Քրիստոս.** Յիսուս է Աստուծոյ ընտրածը (Մեսիան): Այս անունը ընդհանրապէս գաղտնի կը մնայ: Պետրոս կը յայտարարէ՝ «Դուն ես Քրիստոսը» (6.29): Սակայն Յիսուս կը պատուիրէ որ մէկուն բան մը չըսեն: Ան միայն իր ձեռքակալութենէն վերջ կ'ընդունի այս անունը (14.61-62):

**Աւետարան.** Այսինքն Բարի Լուրը որ գրողը կ'ուզէ փոխանցել, Յիսուսի եւ Աստուծոյ Թագաւորութեան մօտենալուն մասին (1.14-15):

**Սկիզբ.** Յիսուսի առաքելութիւնը նոր սկիզբ մըն է պատմութեան մէջ:

#### **Յիսուսի մկրտութիւնը (1.9-11)**

Յիսուսի ծնունդին եւ մանկութեան մասին կը պատմեն միայն Մատթէոսի եւ Դուկասի Աւետարանները. իսկ Մարկոսի եւ Յովհաննէսի Աւետարանները կը սկսին Յովհաննէս Մկրտիչին առաքելութեամբ:

Հաւանաբար Յիսուսի հանրային առաքելութիւնը կը սկսի 27 թ.ին (հմմտ.՝ Ղկ.3.23), որմէ առաջ ան Նազարէթի մէջ ապրած էր (հմմտ.՝ Մտ.2.23): Յիսուսի մկրտութեան մասին այս հատուածը կը շեշտէ, թէ

Աստուած Յիսուսի առաքելութեան սկիզբէն կը յայտնէ եւ կը յայտարարէ իր սէրը իր Որդիին հանդէպ, գործերով եւ խօսքերով: Կը կարդանք հաստուածին մէջ թէ Յիսուս ջուրէն ելլելուն պէս երկինքը կը բացուի եւ Սուրբ Հոգին աղաւնիի պէս կ'իջնէ իր վրայ: Եւ երկինքէն ձայն մը կու գայ որ կ'ըսէր. «Դուն ես իմ սիրելի Որդիս, որուն հաւներ եմ:» Այսպիսով կարելի է այս պատկերին ընդմէջէն Սուրբ Երրորդութեան (Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի) նշանակութիւնը հասկնալ:

### **Յիսուս անդամալոյծ մը կը բժշկէ (2.1-12)**

Այս եւ ուրիշ հրաշքներու մէջ, կապ կը գտնենք բուժումի, մեղքերու թողութեան եւ հաւատքի միջեւ: «Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին: Որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են» (2.5):

Յիսուս նախ անդամալոյծին հոգին կ'ուզէ բուժել: Սակայն դպիրները, որոնք հոն ներկայ էին, արդէն կը մտածէին թէ ինչպէս Յիսուսը պիտի ամբաստանեն: Յիսուս անդամալոյծին մեղքերը ներելով կը յայտնէ թէ ինք պարզ մէկը չէր: Ան իշխանութիւն ունէր մեղքերու թողութիւն տալու: Յիսուս նաեւ անոր մարմինը կը բուժէ «Ան ալ շուտ մը ելաւ եւ իր մահիճը առնելով բոլորին առ ջեւէն դուրս ելաւ» (2.12):


### **Չորրորդ ձեռքով մարդը (3.1-6)**

Դարձեալ շատեր կ'ուզեն ամբաստանել Յիսուսը եւ կը սպասեն թէ արդեօք Շաբաթ օրով պիտի բուժէ՞ մարդուն ձեռքը (որովհետեւ Օրէնքը կ'արգիլէր Շաբաթ օրով որեւէ գործ ընել): Յիսուս գիտնալով մարդոց խորհուրդները եւ իրենց սրտերուն կուրուսթիւնը, կը բժշկէ հիւանդը: Յիսուսի համար, ոչ թէ Օրէնքը, այլ մարդ արարած առաջնակարգ է:

**Յիսուս կոյր Բարտիմէոսը կը բժշկէ (10.46-52)**

Յիսուս Երիթովէն անցնելով կը մօտենայ Երուսաղէմ: Կոյր Բարտիմէոս իմանալով անոր մասին, կ'ուզէ անոր քով երթալ: Բարտիմէոս իր հանդերձը ձգելով, կ'ելլէ ու կու գայ Յիսուսին մօտ (ինչ որ հարուստ մարդը չկրցաւ ընել 10.17-31 հ.ուն մէջ): Յիսուս պատասխանելով կոյրին խնդրանքին կ'ըսէ անոր.- «զնա՛, քու հաւատքդ քեզ բժշկեց»:

Բարտիմէոս իրական հաւատացեալի մը օրինակն է. Ան պատմութեան սկիզբը ճամբուն քով նստեր էր, եւ վերջաւորութեան կը կարդանք թէ աչքերը (նաեւ հոգիին աչքերը) բացուեցան ու ճամբան Յիսուսի ետեւէն կ'երթար: Ծամբան, դէպի Երուսաղէմ եւ դէպի խաչ գացող ճամբան էր:



Շատ յաճախ կը շեշտենք հրաշքները, եւ կը մոռնանք, թէ անոնք ինչու գործուեցան: Սակայն պէտք է անդրադառնանք թէ Յիսուսի գործած հրաշքներուն նպատակը փառք փնտոել չէր. Ան կը բուժէ, որովհետեւ կը սիրէ մարդ արարածը եւ պատրաստ է անոր ֆիզիքական եւ հոգեւոր պէտքերը հոգալ: Այդ հրաշքներուն մէջ Աստուծոյ Թագաւորութիւնը ներկայ էր իր բուժիչ զօրութեամբ: Թագաւորութեան զօրութիւնը ներկայ է նաեւ մեր ամենօրեայ, սովորական կեանքերուն մէջ:



### **34. Աւետարան Ըստ Մատթէոսի**

#### **Մատթէոս՝ Եկեղեցիին Աւետարանը**

Մատթէոսի Աւետարանը յաճախ գործածուած է Եկեղեցիին կողմէ եւ ընդհանրապէս կոչուած է Եկեղեցիին Աւետարանը: Ուշ գրուած ըլլալուն համար միայն այս Աւետարանին մէջ յիշուած է «եկեղեցի» բառը (16.18; 18.17), հետեւաբար հոն կը գտնենք նաեւ եկեղեցիին հետաքրքրող հարցեր:

#### **Հեղինակ եւ թուական**

Աւետարանը գրուած է 85-90ի միջեւ, Անտիոքի մէջ: Մատթէոս առաքեալ, որուն մասին կը կարդանք 9.9 եւ 10.3ի մէջ, հաւանաբար հաւաքած էր Յիսուսի խօսքերը արամերէն լեզուով, որոնք վերջը ամփոփուած եւ թարգմանուած են յունարէնի Աւետարանիչին կողմէ: Միտք ունենալով թէ Երուսաղէմի անկումէն ետք (70 թ.ին հռոմէացիներուն կողմէ) հրեաներուն եւ քրիստոնէաներուն միջեւ պառակտումը կը մեծնայ (որովհետեւ քրիստոնէաներ մերժած էին հրեաներուն օգնել Հռոմէական Կայսրութեան դէմ իրենց ասպաստամբութեան ընթացքին), Աւետարանին մէջ նկատելի է թէ Եկեղեցիին արդէն իսկ բաժնուած է հրէական աշխարհէն:

#### **Նպատակ եւ պատգամ**

Մատ թէոսի Աւետարանը կը շեշտէ թէ՛

1. Յիսուս Քրիստոսի միջոցով Աստուծոյ Թագաւորութիւնը ատելիով կը մօտենայ եւ կ'իրականանայ. Անոր միջոցով Աստուած պիտի միանայ իր ժողովուրդին, այսինքն Եկեղեցիին (1.23):

2. Բարի Լուրը բոլորին համար է. Եկեղեցիին դերն է Աւետարանը բոլորին քարոզել:

Յիսուսի փոթորիկը հանդարտեցնելու հրաշքէն (8.23-27) կարելի է հասկնալ թէ ինչպէս առաջին դարու վերջաւորութեան, եկեղեցին կը գտնուէր արգելքներու դիմաց, որոնք ալեկոծութեամբ խորհրդանշուած են:

3. Յիսուս է իսկապէս սպասուած Մեսիան, որ յիշուած է Հին կտակարանի մէջ:

4. Յիսուս ուսուցանող Քրիստոսն է, ան իր պատգամը կու տայ երկար քարոզներով:

**Յիսուս (4 Ք.ա. – 30 Ք.ե.)՝ Մատթէոսի Աւետարանին մէջ** 1-4 գլուխները նախաբան են Տէր Յիսուսի առաքելութեան: Մտ.2.1 էն կ'իմանանք թէ Յիսուս կը ծնի Պաղեստինի Բեթլեհէմ քաղաքին մէջ (հաւանաբար 4 թ.ին Ք.ա. կամ ատկէ առաջ), Հերովդէս կայսրին՝ օրերուն: Ան կ'ապրի Գալիլիայի Նազարէթ քաղաքին մէջ որպէս

---

‡ Այս Հերովդէս Մեծն էր. ան Հրէաստանի, Սամարիայի եւ Գալիլէայի (ներկայ Պաղեստինի) վրայ թագաւորած է 37- 4 թ. Ք.ա. (հմմտ.՝ Մտ.2.1): Հերովդէս սկսած էր Երուսաղէմի մէջ Երկրորդ Տաճարը հիմնել 19 թ.ին Ք.ա. եւ իր մահէն ետք գործը կը շարունակուի մինչեւ 68 թ. Ք.ե.: Ան գիտցուած էր իր վայրագութեամբ: Հերովդէս Մեծը հայրն էր Հերովդէս Անտիպասի, որ իր հօր մահէն ետք Գալիլէայի եւ Բերիայի վրայ կ'իշխէ (Ղկ.23.7-12): Հերովդէս Մեծին 4 թ.ին Ք.ա. մահանալը կը նշանակէ թէ Յիսուս ծնած է կամ 4 թ.ին Ք.ա. կամ այդկից առաջ՝ 5 կամ 6 Ք.ա. (բղ.՝ Մտ.2.14): Քրիստոնէական Օրացոյցը, որ Տրդ դարուն հաստատուած էր սխալմամբ Յիսուսի ծննդեան թուականը 5 կամ 6 տարիներ աւելի ուշ նկատուած է:

հաւատարիմ հրեայ. Յիսուս կը քարոզէ Աստուծոյ Թագաւորութեան մասին իր կեանքով, ուսուցումներով եւ գործերով: Մարկոս Աւետարանին նման, Մատթէոսի մէջ ալ Յիսուս իր առաքելութիւնը Գալիլիոյ մէջ կը սկսի (4.12), որմէ ետք ան կը ճամբորդէ Երուսաղէմ, ուր Հոռմէացիներու կողմէ կը խաչուի մօտ 30 թ.ին:

Այս Աւետարանին մէջ Յիսուս նկարագրուած է որպէս՝

- **Դաւիթի Որդի.** (1.1; 2.2) Յիսուս կը պատկանի Դաւիթի թագաւորական ցեղին.
- **Աստուծոյ Որդի.** մկրտութեան պատմութեան մէջ Աստուած կ'ըսէ «Այս է իմ սիրելի որդիս» (3.17), նաեւ՝ 17.5.
- **Էմմանուէլ.** այսինքն Աստուած մեզի հետ (1.23). Աւետարանին վերջաւորութեան դարձեալ կը կարդանք՝ «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը»:
- **Վարդապետ եւ Տէր.** Յաճախ Յիսուս կը ճանչցուի իբրեւ վարդապետ (այսինքն ուսուցիչ). միայն իր աշակերտները եւ իր առաքելութեան հաւատացողներ զինք Տէր կ'անուանեն: Վերջին ընթրիքին, երբ Յիսուս իր մատնուիլը կը նախատեսէ, աշակերտները տրտմած կը հարցնեն «Տէ՛ր, միթէ ե՞ս եմ» (26.22), սակայն Յուդա զինք «Վարդապետ» կը կոչէ (22.25):



Ալեկոծութեան ժամանակ Յիսուս կը քնանայ (8.24):  
Քունը հոս կը խորհրդանշէ Յիսուսի ներքին վիճակը,  
անոր խաղաղութիւնը, քաջութիւնը, սակայն միեւնոյն  
ժամանակ անոր յանձնուիլը ալեկոծութեան, ինչպէս որ  
հետագային խաչին ալ պիտի յանձնուի:

Աշակերտները, միւս կողմէն, կը վախնան եւ վախը  
անհաւատութեան նշան է: Անոնք նոյնիսկ հրաշքէն ետք  
կը զարմանան Յիսուսի զօրութեան, որովհետեւ չեն կրցած  
Յիսուսի ինքնութեան խորքը թափանցել եւ իր իրական  
զօրութիւնը հասկնալ:

### 35. Հատուածներ՝ Մատթէոսի Աւետարանէն

Մատթէոսի Աւետարանը դրոշմուած է Հնգամատեանի տպաւորութեամբ, որուն մէջ Աւետարանիչը Աստուծոյ կամօքին արտայայտութիւնն ու ամփոփումը կը գտնէ: Յիսուս նկարագրուած է որպէս նոր Մովսէսը, որուն նման կ'ուսուցանէ եւ Օրէնքը իր լրումին կը հասցնէ: Ուրեմն, Աւետարանին մէջ յաճախ կը հանդիպինք Յիսուսի գործած հրաշքներուն կողքին անոր ուսուցմունքներուն: Ան լերան վրայ կը քարոզէ կեանքի նոր ձեւի մը մասին, եւ մեծ թիով մարդիկ կը հետեւին իրեն, մտիկ ընելու իր խօսքերը:

Ի՞նչ նիւթերու շուրջ կը խօսի Յիսուս եւ ի՞նչ կը սորվեցնէ:

#### 1. Ծջմարիտ երանութիւնները (5.1-12)

Լերան քարոզին մէջ (5-7) Յիսուս կը խօսի հոգիով աղքատ ըլլալու, հեզ, արդարութեան անօթի ու ծարաւ, ողորմած, սրտով մաքուր ըլլալու եւ խաղաղութիւն ընելու մասին: Այս երանելիները կեանքի ձեւի մը, կենցաղի մը մասին կը խօսին, եւ ո՛չ պարզապէս որոշ պարտաւորութիւններու: Մարդ արարած հոգիով ու համոզումով աղքատ, հեզ եւ ողորմած ըլլալու է: Ասիկա կեանքի կեցուածք մըն է աւելի քան՝ որոշ գործերու ամբողջացումը. սակայն այս կեցուածքը կը բացայայտուի մարդուն ապրելակերպին եւ խօսքերուն ընդմէջէն:

#### 2. Օրէնքի մասին (5.17-48)

Այս Աւետարանը յաճախ կ'ակնարկէ Հին Կտակարանի օրէնքներուն: Յիսուս փորձուեցաւ երեք անգամներ անապատին մէջ. իր փորձութիւնները նման էին հրեայ ժողովուրդին փորձութիւններուն, որոնք մօտ 40 տարիներ

թափառեցան անապատին մէջ: Յիսուս Հին Կտակարանի օրէնքներէն մէջբերումներ ընելով կը պատասխանէ Սատանային եւ կը յաղթէ փորձութեան: Ան կը դառնայ օրինակ բոլոր անոնց, որոնք փորձութիւններու կը հանդիպին (4.1-11):

Յիսուս Օրէնքի մասին կ'ըսէ «Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները արելու: Աւրելու չեկայ, հապա՛ կատարելու»: Օրէնքները բարի ճամբու մէջ առաջնորդելու համար էին: Իսկ փարիսեցիներ անոնց սահմանափակ մեկնաբանութիւն տալով կ'օգտագործէին զանոնք իրենց շահերուն եւ իշխանութեան նպատակներուն համեմատ: Յիսուս ոչ միայն չի հակառակիր օրէնքներուն, այլ կ'ամբողջացնէ եւ կը կատարէ զանոնք, անոնց աւելի խորունկ եւ ճիշդ բացատրութիւն տալով: Ուրեմն Օրէնքները նոր իմաստ կը ստանան Յիսուսով, որ շեշտեց անոնց նպատակն ու հոգին քան արտաքին նշանակութիւնը: Յիսուս կ'ըսէ.-

«Լսեր էք որ ըսուեցաւ. Աչքի տեղ՝ աչք ու ականայի տեղ՝ ականայ: Բայց ես ձեզի կ'ըսեմ. Չարին հակառակ մի՛ կենար, հապա եթէ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձուր անոր միւսն ալ» (5.38-39):

Նստե՛

«Լսեր էք որ ըսուեցաւ Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ասես: Բայց ես ձեզի կ'ըսեմ. Սիրեցէք ձեր թշնամիները, օրինեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն» (5.43-44):

Յիսուսի այս խօսքերը հասկնալու համար իր կեանքին նայելու ենք. Յիսուս վրէժխնդրութեան փոխարէն սէր սորվեցուց. ան ոչ միայն սորվեցուց, այլ նաեւ ապրեցաւ իր սորվեցուցածին համեմատ: Իրեն նայելով Քրիստոնէական Կրօնքը ոչ միայն կարելի է հասկնալ, այլ եւ՝ ապրիլ:

### **3. Ողորմութեան, աղօթքի, եւ ծոմապահութեան մասին (6.1-18)**

Եթէ մէկը իսկապէս զԱստուած կը սիրէ, պիտի սիրէ նաեւ անոր ստեղծագործութիւնը, մարդն ու աշխարհը: Հետեւաբար, Յիսուս կը սորվեցնէ օգնել մեր շուրջիներուն, աղօթել մեր Հօր Աստուծոյն եւ ինչու չէ՝ ծոմ պահել. Սակայն այս ամէնը չընել մարդոց հաճելի երեւնալու համար, այլ ընել գաղտնի, որպէս իսկական սիրոյ արտայայտութիւն:

### **4. Աշակերտութեան մասին (10.1-42)**

Յիսուսի աշակերտ ըլլալ դիւրին չէ. Աշակերտը կրնայ հալածուիլ եւ ամէնուն կողմէ ատելի դառնալ, սակայն Աստուած յարմար ժամանակին պիտի օգնէ իրեն:

### **5. Աստուծոյ Թագաւորութեան մասին առակներ (13.1-52)**

Առակներու միջոցով Յիսուս կ'ըսէ, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը կը սկսի Աստուծոյ ցանուած խօսքով: Այդ խօսքը կրնայ աճիլ եւ պտուղ տալ եւ կամ ալ մէկ կողմ կը դրուի:

Աստուծոյ Թագաւորութիւնը ուրիշ առակներու մէջ կը նմանի պահուած գանձի մը, երբ մէկը գտնէ, իր բոլոր ունեցածը կը ծախէ՝ զայն ունենալու համար:



*Տէր Յիսուս կը սորվեցնէ թէ իր աշակերտները ըլլալ, չի նշանակեր պարզապէս ամբողջացնել իր պատուէրները, այլ ամբողջ սրտով փափաքիլ իրեն նման ըլլալ ու ընել ինչ որ ինք սորվեցուց:*

*Յիսուսի աշակերտ ըլլալ կը նշանակէ ապրի՛լ իր կամքին եւ պատուէրներուն համաձայն: Ոչ թէ ողորմութիւն ընել ա՛յլ ողորմող ըլլալ, ոչ թէ միայն բարի գործ մը ընել, ա՛յլ սրտով բարի եւ մաքուր ըլլալ: Ոչ միայն սիրել մեր բարեկամները, այլ նաեւ՝ մեզ հալածողները:*



### 36. Աւետարան ըստ Ղուկասի

#### **Ի՞նչ տեսակի գրութիւն մը**

Ղուկասի Աւետարանը եւ Գործք Առաքելոց գիրքը միասին կը ներկայացնեն երկու հատորնոց մէկ աշխատանք մը, որ Նոր Կտակարանի ամենէն երկար գրութիւնն է եւ կը պարունակէ 52 գլուխներ:

#### **Հեղինակ եւ թուական**

Աւետարանը կը վերագրուի Ղուկասի, որ Սուրիոյ Անտիոք քաղաքէն բժիշկ էր (Կղ.4.14), եւ Պողոս առաքելի ընկերակից. Ան ստացած էր յունական դաստիարակութիւն եւ գրած է Աւետարանը, որպէս իր գործին առաջին մասը, որ կը շարունակուի Գործք Առաքելոց գիրքով, 80–85 թուականներու միջեւ: Ղկ.1.1–4 եւ Գրծ.1.1 էն կ'իմանանք, թէ Ղուկաս իր այս երկու հատորնոց գործը կ'ուղէ Թէոփիլոսին, որ հռոմէացի ազնուական մըն էր (ոչ–հրեայ): Թէոփիլոս (որ կը ներկայացնէ յունական — հեթանոս աշխարհը) հաւանաբար ստացած էր որոշ քրիստոնէական կրթութիւն, սակայն Ղուկաս անոր կը գրէ, որպէսզի ան իր սորված բաներուն ստուգութիւնը իմանայ (1.4):

Ղուկաս անձնապէս չէր ճանչցած Յիսուսը, սակայն ան լսած էր Յիսուսին մասին իր ուսուցիչէն, Պողոսէն, եւ ուրիշ ականատեսներէ (Ղկ.1.1–3): Հետեւաբար, Ղուկաս իր Աւետարանը գրելու համար օգտուած է Մարկոսի Աւետարանէն, ինչպէս նաեւ Մարիամէն (Յիսուսի մայրը), եւ հաւանաբար Յովհաննէս Մկրտիչի աշակերտներէն:

## **Նպատակ եւ պատգամ**

Ղուկաս ւսետարանիչ կը գրէ քրիստոնեաներու համար, որոնք բուն հեթանոսութենէ դարձած էին, եւ հաւանաբար յունական մշակոյթի հետետորդներ էին: Հետեւաբար, ան իր Աւետարանին մէջ չի յիշեր Հին Ուխտը, զոր յիշուած է Մարկոսի Աւետարանին մէջ (օր․՝ Մր.7.1-23): Այս Աւետարանին մէջ Յիսուս նկարագրուած է որպէս համաշխարհային փրկիչ, իսկ Աստուծոյ խոստումները իրական են ոչ միայն հրեաներուն, այլ նաեւ՝ հեթանոսներուն համար ալ: Աստուծոյ զաւակներն են ոչ միայն հրեաները, այլ եւ անոնք՝ որոնք անմաքուր կը սեպուէին ըստ Հրէական Օրէնքին՝ աղքատներ, կիներ, սամարացիներ ու մաքսաւորներ: (10 բորոտներու բժշկութեան պատմութեան մէջ, 10էն միայն մէկը, որ սամարացի էր, օտար ազգի պատկանող, ետ կը դառնայ եւ երկրպագութիւն ընելով փառք կու տայ):

## **Յիսուս՝ Ղուկասի Աւետարանին մէջ**

1. Ղուկաս, Աւետարանին սկիզբէն իսկ (2.11), Յիսուսը Տէր կը կոչէ՝ «վասնզի այսօր փրկիչ մը ծնաւ ... որ Օծեալ Տէր է»: Իրեն համար Յիսուս յարեալ եւ փառաւորեալ տէր է:
2. Յիսուս Աստուծոյ ով ըլլալը կը յայտնէ. Յիսուսի նայելով կրնանք զԱստուած ճանաչալ: Ծեշտուած է Աւետարանին մէջ Յիսուսի գթացող ըլլալը: Այրի կնոջ որդին մահացած էր, եւ «Տէրը զանհկա տեսնելով՝ խղճաց անոր վրայ ու ըսաւ անոր մի լար» (7.11-17): Աստուած ալ սիրող եւ գթացող Հայր է, ինչպէս անատակ որդիին հայրը, առակին մէջ (15.11-32):
3. Յիսուս Աստուծոյ Թագաւորութեան մասին կը քարոզէ (4.44):

4. Յիսուս բարեկամ է ներսիններուն՝ ինչպէս փարիսէ-  
ցիներուն, ու դուրսիններուն, ինչպէս աղքատներուն,  
մեղաւորներուն, հեթանոսներուն, սամարացիներուն եւ  
կոտրած սիրտ ունեցողներուն (4.18-19):



Գութի եւ ողորմութեան ճամբան դժուար է: Երբ գութով  
եւ ողորմութեամբ լեցուն ենք, մենք ալ կը ցաւինք  
ուրիշներու ցաւով. մենք ալ ենթակայ կ'ըլլանք նոյն տա-  
ռապանքին, որուն ուրիշներ ենթակայ են: Այս  
գաղափարը կարելի է բացատրել բորոտին օրինակով, որ  
Յիսուսի մօտենալով բուժում կը խնդրէ: Յիսուս կ'ուզէ  
բուժել, ան «իր ձեռքը երկնցնելով դպաւ անոր ու ըսաւ.  
կ'ուզե՛մ, մաքրուէ՛.» (Ղկ.5.13). Յիսուս դպաւ բորոտին եւ  
այդպիսով ենթակայ եղաւ նոյն հիւանդութեան:



### **37. Հատուածներ՝ Ղուկասի Աւետարանէն (Ա.)**

#### **Ի՞նչ է առակը**

Առակը կարճ պատմութիւն մըն է, որ ճշմարտութիւն մը կը փոխանցէ ու կը մղէ մտիկ ընողները ինքնաքննութեամբ մտածելու իրենց ապրելակերպին մասին, ինչպէս նաեւ կոչ կ'ուղղէ սրբագրուելու եւ բարեփոխուելու:

Հին կտակարանին մէջ եւս կը հանդիպինք առակներու, օր.՝ Նաթան մարգարէ, յանդիմանելով Դաւիթ թագաւորը իր գործած մեղքին համար, կը պատմէ երկու մարդոց մասին, մէկը հարուստ ու միւրը աղքատ: Հարուստը աղքատին միակ ունեցած գառնուկը կ'առնէ, որպէսզի իր հիւրը հիւրասիրէ: Պատմութեան վերջաւորութեան Դաւիթ կ'ըսէ՝ «այդ ... մարդը մեռնելու արժանի է». Նաթան կը պատասխանէ՝ «այդ մարդը դուն ես» (Բ.Թգ.12.1-9):

Առակին իմաստը հասկնալու համար անհրաժեշտ է վերջաւորութեան այս ձեւով շարադրել զայն. «Ինչպէս ... նոյնպէս դուն»:

#### **Բարի Սամարացիին առակը (Ղկ.10.25-37)**

Այս առակին մէջ վիրաւորին ընկեր եղաւ բարի մարդ մը, որ հակառակ սամարացի ըլլալուն կրցաւ մօտենալ վիրաւոր հրեային (հրեաներ այդ ժամանակ սամարացիները կը նկատէին պիղծ ժողովուրդ եւ թշնամի), վիրաւորին վէրքերը բուժեց եւ տարաւ զայն մինչեւ պանդոկ եւ այսպիսով եղաւ վիրաւորին ընկերը: Այս առակով Յիսուս կը սորվեցնէ թէ մեր ընկերը այն անձն է որ մեր օգնութեան պէտք ունի եւ ոչ անպայման ան որմէ կ'ախորժինք:

**Մեծ Խնճոյքին առակը (Ղկ.14.15-24)**

Յիսուս պատմելով այս առակը խօսքը կ'ուղղէ փարիսեցիներուն, որոնք կը կարծէին թէ Աստուծոյ Թագաւորութիւնը միայն իրենց իրաւունքն էր, որովհետեւ Օրէնքը կը պահէին: Սակայն Յիսուս այս առակով կ'ըսէ թէ իրականութիւնը տարբեր է. Խնճոյքի հրաւիրեալները չեն գար, ուրիշ զբաղումներով տարուած ըլլալուն համար, եւ հրաւէրը կ'ուղղուի ուրիշներու՝ դրսեցիներուն:

Աստուծոյ Թագաւորութիւնը բոլոր անոնց համար է, որոնք պատրաստ են ձգելու ամէն զբաղում եւ գործ, զայն ունենալու համար:

**Այգիին մշակներուն առակը (Ղկ.20.9-18)**

Այս առակը յիշուած է երեք Համատեսակ Աւետարաններուն մէջ: Այս առակով Յիսուս վերջին զգուշացումը կ'ընէ փարիսեցիներուն եւ դպիրներուն: Յիսուս իր առաքելութեան մասին խօսելով կ'ըսէ, թէ ինչպէս Աստուած մարգարէներ դրկած է անցեալին, բայց ժողովուրդը անոնց մտիկ չէ ըրած. վերջապէս իր միաձին Որդին կը դրկէ, սակայն հրեաներ այս անգամ ոչ միայն պիտի չընդունին, այլ նոյնիսկ պիտի ուզեն սպաննել զինք:



*Բոլորին ընկեր ըլլալ չի նշանակեր անպայման ախորժիլ բոլորէն: Ընդհանրապէս կ'ախորժինք կարգ մը մարդոցմէ, եւ ուրիշներէ՝ ոչ. սակայն Տէր Յիսուսի պատմած առակին մէջ բարի սամարացին կրցաւ ընկեր ըլլալ վիրաւորին, որովհետեւ օգնեց իրեն իր դժուարութեան մէջ: Ա՛յս է բարեկամութեան գաղտնիքը:*



### 38. Հատուածներ՝ Ղուկասի Աւետարանէն (Բ.)

#### **Անատակ որդիին (Ղկ. 15. 11-32)**

Առակը պատմելէ առաջ, Յիսուս երկու ուրիշ առակներ ալ կը պատմէ՝ կորսուած ոչխարին եւ կորսուած դրամին մասին, իբր նախաբան այս առակին, որոնք կը շեշտեն Աստուծոյ սէրը իւրաքանչիւր մարդ արարածի հանդէպ:

Անատակ որդիին առակը հօր մը եւ երկու որդիներուն մասին է: Ընդհանրապէս գիւղական կեանքի մէջ հօր մը ժառանգը կը բաժնուէր տղոց, միայն երբ հայրը մահացած է: Սակայն այս առակին մէջ կը տեսնենք թէ պզտիկ տղան չի կրնար իր հօրը մահուան սպասել, ան կ'ուզէ իր բաժինը, եւ հայրը կը բաժնէ անոնց իր ունեցածը: Հայրը ժառանգը բաժնելով, մեծ տղան ալ կը ստանայ իր բաժինը, սակայն տակաւին այդ բաժինը կը մնայ իր հօր տրամադրութեան տակ: Այդ օրերու գիւղական օրէնքները եւ սովորութիւնները նկատի առած, հօր այս ըրածը տրամաբանական չէր: Ոեւէ հայր կրնար վճռուել տղան տունէն առանց անոր կամքը կատարելու: Աստուած ալ սակայն, հօր նման (եւ նոյնիսկ սովորական հօրմէ մը աւելի), կու տայ մարդ արարածին ազատ կամք՝ իր սէրը ընդունելու կամ մերժելու:

Տղան առնելով իր բաժինը կ'երթայ օտար երկիր մը. հոն բոլոր ունեցածը հատցնելով կը դառնայ չքաւոր: Կը մտածէ տուն վերադառնալ, սակայն այդ մէկը պիտի նշանակէր թէ այլեւս իր եղբօր բաժինէն պիտի ապրէր, ինք իր տան մէկ անդամը պիտի չդառնար այլեւս, այլ տան ծառաներէն մէկը: Ասով հանդերձ ան կ'որոշէ դառնալ:

Գիւղին մէջ ամէն մարդ կ'ակնկալէր հօր խիստ եւ անտարբեր վերաբերումը իր տղուն հանդէպ, երբ ան կը

մօտեննար: Սակայն հայրը, հեռուէն տղան տեսնելով սկսաւ վազել. որքան անսովոր տեսարան էր որ իր տարիքով եւ դիրքով մարդ մը վազէր գիւղին մէջ: Հայրը գիտէր թէ իր տղան պիտի անարգուէր բոլորին կողմէն երբ գիւղ մտնէր, ուրեմն ինք կը վազէ իր վրան առնելով տղուն ուղղութիւնք ամօթը եւ անարգանքը: Ան պէտք էր որ իր պատմունանը վեր բարձրացնէր որ կարենար վազել, եւ այս մէկը բաւական ծիծաղելի եւ ամօթալի տեսարան մը պիտի ստեղծէր, որուն մարդիկ պիտի անդրադառնային մոռնալով անատակ որդիին գալը:



Հօր այս ըրածն ալ կը նմանի անոր, որ իր փառքը թողուց եւ խոնարհութեամբ եկաւ մարդոց կեանքերուն մէջ, իր վրայ առնելով անոնց մեղքերը: Այս անձնուրաց սէրը հիմնական է հաշտութեան համար:

Երբ մեծ եղբայրը եկաւ, իմանալով պատահածը բարկացաւ եւ չէր ուզէր ներս մտնել: Մեծ տղուն ապստամբութիւնն ալ նոյնքան լուրջ էր, որքան իր եղբօր ապստամբութիւնը: Խնճոյքի հրաւիրեալները կ'ակնկալէն որ հայրը պատժէ, կամ արհամարհէ իր մեծ տղուն այս ըրածը: Երկրորդ անգամ ըլլալով, նոյն օրուան մէջ, հայրը անձնուրաց եւ անշափելի սիրով կ'երթայ իր մեծ տղուն մօտ: Սակայն ան իր հայրը անարգելով կը պատասխանէ եւ իր իրաւունքը կը պահանջէ որպէս ծառայ մը իր տիրոջմէն եւ ոչ՝ որդի մը, որ իր հօր հետ սիրով խօսէր:

Մեծ տղուն նման փարիսեցիներն ալ կը կարծէին թէ իրենք Օրէնքը պահելով իրենց լաւագոյնը կ'ընեն: Սակայն Օրէնքը առանց սիրոյ ոչինչ է: Օրէնքը առանց սիրոյ հպարտութեան կը տանի, այն հպարտութեան, որ Յիսուսը խաչ կը բարձրացնէ:



Անտուակ որդիին առակը առանց պայմաններու սիրոյ մասին է: Ընդհանրապէս մարդ արարած պայմաններ կը սահմանէ ուրիշներու հետ յարաբերելու. որքանո՞վ կարելի է առանց պայմաններու սիրել, օգնել եւ ներել ուրիշներու:



### **39. Գործք Առաքելոց**

#### **Ինչպիսի՞ գիրք մը**

Գործք Առաքելոց գիրքը կը ներկայացնէ մօտաւորապէս 30 տարուան պատմութիւն՝ Յիսուսի մահէն ետք: Ան կ'ամփոփէ Յիսուսի համբարձումը եւ Ս. Հոգիին գալուստը, Առաջին Եկեղեցիին կազմաւորումը, ինչպէս նաեւ առաքելներուն կատարած գործերը:

#### **Հեղինակ եւ թուական**

Ղուկաս նոյնպէս այս գիրքը կ'ուղղէ Թէոփիլոսին, որ կը ներկայացնէ Հռոմի զարգացած դասակարգը, որոնց Ղուկաս կ'ուզէ տեղեկացնել Քրիստոնէութեան ծագումին եւ տարածումին մասին: Գրողը անձամբ ներկայ եղած է որոշ դէպքերու, որպէս Պօղոս առաքելին ընկերակիցը, հետեւաբար ան կը գործածէ «մեր» եւ «մեզ» դերանունները (16.10-17; 20.5-21.8):

Գիրքը գրուած ըլլալու է 80 ական թուականներուն: Ան կը ներկայացնէ առաջին դարու կիսուն պատահած դէպքերը: Գրողը կը պատմէ այս դէպքերը իրենց պատահելէն մօտաւորապէս 10-20 տարիներ վերջ, երբ արդէն Պօղոս, Պետրոս եւ Յակոբոս մահացած էին:

#### **Ի՞նչ կը նշանակէ առաքելութիւն**

«Գործք Առաքելոց» կը նշանակէ առաքելներուն գործերը. իսկ առաքելը այն անձն է որ յատուկ գործի մը (առաքելութեան մը) համար ղրկուած է: Հետեւաբար առաքելութիւն կը նշանակէ յատուկ պաշտօն կամ գործ, որուն համար անհատը կը ղրկուի: Քրիստոնէական հասկացողութեամբ, առաքելութիւնը Աստուծոյ համար եւ Աստուծոյ միջոցով նշանակուած պաշտօնն է, որուն համար անհատը (առաքելը) կը տրամադրուի:

### **Գիրքին բովանդակությունը**

Գործք Առաքելոց գիրքին առաջին մասին մէջ կը կարդանք Առաջին Եկեղեցիին կազմութիւնն եւ անոր տարածման մասին, եւ թէ ինչպէս Աւետարանը կը քարոզուի հեթանոսներուն, մանաւանդ Պետրոս առաքելի միջոցով: Գիրքին երկրորդ մասին մէջ կը կարդանք Պօղոս առաքելին մասին՝ անոր դարձը, քարոզութիւնը, ճամբորդութիւնները եւ վերջապէս ձեռքակալութիւնը Հռոմէական բանակին կողմէ:

### **Նպատակ եւ պատգամ**

Գիրքին բուն նպատակն է ցոյց տալ թէ ինչպէս Աւետարանը կը փոխանցուի հրեաներուն, եւ իրենցմէ ալ հեթանոսներուն: Կարելոր է նաեւ գիրքին մէջ Ս. Հոգիին դերը, որ Յիսուսի համբարձումէն ետք, Պենտեկոստի օրով կը տրուի առաքելներուն: Ս. Հոգիին միջոցով ականատես վկաները վերածուեցան խօսքը քարոզողներու, որոնք յատուկ զօրութեամբ կը քարոզեն խօսքը, հակառակ բոլոր դժուարութիւններուն եւ հալածանքներուն:

Գիրքին նպատակը կարելի է ամփոփել Պետրոս առաքելի այս խօսքերով՝

«Ո՛վ Իսրայէլացի մարդիկ, ... դուք այն Սուրբը եւ Արդարը ուրացաք ու խնդրեցիք որ մարդասպան մարդ մը ձեզի շնորհուի. Բայց կենաց Առաջնորդը սպաննեցիք, որ Աստուած մեռելներէն յարուցանեց, որուն մէնք վկայ ենք: ... Ուստի ապաշխարեցէ՛ք ու դարձի՛ եկէք» (3.12, 14-15, 19):

Գիրքը նաեւ կը շեշտէ թէ հրեայ կամ հեթանոս ...  
բոլորը կրնան փրկուիլ Տէր Յիսուսին հաւատալով:  
Պետրոս առաքեալ հեթանոսներուն մասին խօսելով կ'ըսէ.  
«Բայց կը հաւատանք թէ Տէր  
Յիսուսին շնորհքով կը փրկուինք  
մենք, ինչպէս անոնք ալ» (15.11):



Կեանքի մէջ իւրաքանչիւրս ունի առաքելութիւն մը: Առա-  
քեալին եւ ոչ առաքեալին տարբերութիւնը այն է որ առա-  
ջինը մտիկ կ'ընէ ու կ'ապրի իր կոչումին համաձայն, իսկ  
երկրորդը իր կոչումէն անգիտակից կամ անհոգ՝ կը  
շարունակէ իր կեանքը:



#### 40. Հատուածներ՝ Գործք Առաքելոցէն

##### **Առաջին Եկեղեցին**

Առաջին Եկեղեցւոյ մասին կը կարդանք թէ «բոլոր հաւատացեալները մէկտեղ էին եւ ամէն բաներնին հասարակաց էր» (2.44): «Ամէն օր միաբանութեամբ տաճար երթալու ետեւէ էին. .» (2.46) «եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի էին» (4.32): Առաքեալներու ենթարկուած հալածանքին արդիւնքով կարգ մը հաւատացեալներ կը ձգեն Երուսաղէմը, «սակայն ցիրուցան եղածները կը պտտէին ու խօսքը կը քարոզէին» (8.4):

##### **Առաքելութիւն՝ հեթանոսներու մէջ**

Գործ.1.8ի մէջ կը կարդանք Յիսուսի խօսքերը որ ըսաւ. - «ինձի համար վկաներ պիտի ըլլաք. . . մինչեւ երկրին ծայրերը»: Եւ իսկապէս կը տեսնենք, թէ ինչպէս Աւետարանը կը քարոզուի ոչ միայն հրեաներուն, այլ նաեւ հեթանոսներուն: Սակայն այս մէկը շատ հարցերու դիմաց կը դնէ առաքեալները, հեթանոսներուն հաւատքի օրինականութեան մասին: Արդեօ՞ք հեթանոսներ քրիստոնէայ դառնալով, պէտք էր պահէին Մովսիսական Օրէնքը, որպէսզի ընդունուին հաւատացեալներու խումբին մէջ:

Հաւատացեալներէն ոմանք, որոնք հրէութենէ դարձի եկած էին, կը սորվեցնէին թէ Մովսիսական Օրէնքը զանց ընողներ չեն կրնար փրկուիլ: Հետեւաբար ժողով մը կը գումարուի Երուսաղէմի մէջ: Առաքեալներ պատմելով թէ ինչպէս Աստուած կը գործէ հեթանոսներուն մէջ, ժողովը կը համաձայնի Օրէնքը պահելու աւելորդ բեռը չդնել անոնց վրայ, որոնք կ'ընդունին Յիսուսը իբր Տէր:

### **Սուրբ Հոգիին գալուստը**

«Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը  
զօրութիւն պիտի առնէք ու ինծի  
համար վկաներ պիտի ըլլաք ...  
մինչեւ երկրին ծայրերը» (1.8):

Յովհաննէսի Աւետարանին մէջ Յիսուս կը խոստանայ Սուրբ Հոգին՝ Մխիթարիչը դրկել (ՅՖ.14.16-31). իսկ Գործք Առաքելոցի մէջ կը կարդանք Սուրբ Հոգիին գալուստին մասին (2.1-13): Այս նոյն Աստուծոյ Հոգին է, եւ Աստուած է, որ սկիզբէն մարդուն եւ աշխարհին ստեղծագործութեան դէպքին մէջ ներկայ եւ գործօն էր եւ կը շարունակէ ըլլալ. անհկա նաեւ Հին Կտակարանի ժողովուրդին, թագաւորներուն ու մարգարէներուն առաջնորդող Հոգին էր: Սուրբ Հոգիին ներշնչումով առաքելներ զօրացան եւ կարողացան հաւատարիմ մնալ իրենց առաքելութեան: Ուրեմն, Սուրբ Հոգին ոչ միայն կը մխիթարէ, այլ նաեւ կը քաջալերէ, կ'օգնէ, խորհուրդ կու տայ եւ անընդհատ հաւատացեալներուն կեանքին մէջ հանդէս կու գայ:

### **Պօղոս՝ Գործք Առաքելոցի մէջ**

Գործք. Առաքելոցի վերջին 13 գլուխները յատկացուած են Պօղոս առաքելին: Ո՞ր էր Պօղոս առաքել:

Պօղոս ծնած էր Կիլիկիոյ Տարսուն գաւառին մէջ (Գրծ.22.3), 5-15 թուականներու միջեւ Բ.Ե.: Անհկա հրեայ ծնողքի մը զաւակն էր: Հայրը փարիսեցի ըլլալով, ինք ալ կը մեծնայ պատկանելով նոյն դասակարգին (Փլ.3.5): Ան ստացած է բարձր ուսում, ինչպէս նաեւ Երուսաղէմի մէջ հռչակաւոր Գամաղիէլ վարդապետին աշակերտած է: Սորված է Մովսիսական Օրէնքին բոլոր մանրամասնութիւնները եւ տիրապետած է յունարէնին եւ

տարբեր սեմական լեզուներու: Արհեստով եղած է վրանագործ (Գրծ.18.3), եւ իր հրէական ազգութեան կողքին եղած է նաեւ Հռոմէական կայսրութեան քաղաքացի (Գրծ.22.28):

Պօղոս որպէս նախանձախնդիր հրեայ մը, եղած է Քրիստոնէութիւնը հալածող: Սակայն տեսիլք մը Դամասկոսի ճամբուն վրայ անոր ամբողջ կեանքին ուղղութիւնը կը փոխէ: Ան կը դառնայ Քրիստոնէութիւնը քարոզող: 40-50 ական թուականներուն կատարած է երեք միսիոնարական ճամբորդութիւններ Մակեդոնիոյ (Փոքր Ասիոյ) եւ Յունաստանի մէջ Քրիստոնէութիւնը տարածելով: Կայսրութեան կարեւորագոյն քաղաքներուն մէջ հիմնած է եկեղեցիներ: Առաքեալը չորրորդ ճամբորդութեան մը ընթացքին, Երուսաղէմի մէջ, կը ձերբակալուի հռոմէական իշխանութիւններու կողմէ եւ կը բանտարկուի Կեսարիոյ մէջ:

Ան հաւանաբար որպէս բանտարկեալ կը ղրկուի Հռոմ, եւ հոն կը նահատակուի 62 թ.ին:



Հակառակ հայածանքի եւ նեղութեան, առաջին քրիստոնեայ հաւատացեալները կը շարունակեն իրենց առաքելութեան մէջ հաստատ մնալ: Այս հաստատ կեցուածքը Աստուծոյ պարգեւն է, որուն արդիւնքով մարդուն նեսիդիէն կ'անհետանան վախն ու երկշուտութիւնը, որոնք կը փոխարինուին վճռականութեամբ, քաջութեամբ ինչպէս նաեւ խաղաղութեամբ:



**Ը. Պօղոս Առաքեալ - Ի՞նչ Գրեց**  
**41. Պօղոս Առաքեալի Ճամբորդութիւնները եւ**  
**Նամակները**

**Պօղոս առաքեալին ճամբորդութիւնները**

Գործք Առաքելոց գիրքին մէջ կը կարդանք երեք աւետարանչական ճամբորդութիւններու մասին, որոնց ընթացքին առաքեալը կը տարածէ Աւետարանին պատգամը Փոքր Ասիոյ եւ Եւրոպայի մէջ: Այս առաքելական գործին համար Պօղոս ունեցած է օգնականներ, որոնցմէ կարելի է յիշել՝ Բառնաբասը (13.2), Մարկոս կոչուած Յովհաննէսը (15.37), Ծիղան (15.40), Տիմոթէոսը (16.3), Ակիլոսը եւ Պրիսկիլան (18.2-4), Ապօղոսը (18.24-28), Երաստոսը (19.22) եւ ուրիշներ:

**Պօղոս առաքեալին նամակները**

Պօղոս առաքեալին նամակները կարելի է բաժնել հետեւեալ ձեւով.-

1. Ճամբորդութիւններու ընթացքին գրուած նամակներ՝ Ա.Բ.Թեսաղոնիկեցիս, Ա. Բ.Կորնթացիս, Գաղատացիս, Հռովմայեցիս, Ա.Տիմոթէոս եւ Տիտոս.
2. Բանտարկութեան շրջանին գրուած նամակներ՝ Փիլիպպեցիս, Փիլիմոն, Կողոսացիս, Եփեսացիս, Բ.Տիմոթէոս.

Այս նամակները գրելու համար նյնպէս Պօղոս ունեցած է օգնականներ: Ընդհանրապէս խօսքը արձանագրելու պաշտօնը կը տրուէր մարգուած քարտուղարի մը, հետեւաբար նամակներէն մաս մը առաքեալը ինք անձամբ չէ գրած, այլ ունեցած է օգնականներ, որոնք գրի առած (եւ շարադրած) են իր գաղափարները. այսպէս փոխանձուած են՝ Եփեսացիս, Կողոսացիս, Բ.Թեսաղոնիկեցիս, Ա.Բ.Տիմոթէոս եւ Տիտոս նամակները: Նամակ-

ներէն մաս մը ինք անձամբ գրած է, ինչպէս Հռովմէացիս, Ա.Բ.Կորնթացիս, Գաղատացիս, Փիլիպպեցիս, Ա.Թեսաղոնիկեցիս:



Քրիստոնէական առաքելութիւնը տարբեր ժամանակաշրջաններուն տարբեր նշանակութիւններ ունեցած է: Յիսուսի կողմէ նշանակուած առաքեալները եւ անոնց միացողները (Պօղոս առաքեալի նման) պատասխանատու զգացած են տեղէ տեղ ճամբորդելու եւ Բարի Լուրը տարածելու: Նաեւ տարբեր միսիօնարներ նման առաքելութիւններ ստանձնած են Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին տարբեր վայրերու մէջ:

Հակառակ նման առաքելութիւններու մեծ արժէքին, հիմնական եւ էական է նախ մարդուն անմիջական միջավայրին մէջ (ընտանիքի անդամներու, դրացիներու, բարեկամներու եւ նոյնիսկ օտարներու հետ) ապրիլ հաւատարմութեամբ, ճշմարտութեամբ եւ սիրով: Այս ալ առաքելութեան հիմնական ձեւ մըն է:



## 42. Թուղթ Առ Կորնթացիս Ա.Բ.

### **Պատմական ակնարկ**

Պօղոս առաքեալ, իր երկրորդ ճամբորդութեան ընթացքին 18 ամիսներ կը մնայ Կորնթոսի մէջ (Գրծ.18.1-17): Կորնթոս կարելոր նաւահանգիստ մըն էր Յունաստանի մէջ: Քաղաքը ճանչցուած էր իր բարոյապէս անմաքոր կեանքով: Առաքեալը հոն Յիսուսը քարոզելով կը հիմնէ եկեղեցի: Սակայն ժամանակ մը ետք կը լսէ թէ եկեղեցւոյ ժողովուրդը դարձած է իր նախկին կեանքին եւ սովորութիւններուն: Եկեղեցիին մէջ կային բաժանումներ, անբարոյականութիւն, կոսպաշտութիւն, ուտելու եւ խմելու հարցեր... եւն: Պօղոս նաեւ կը լսէ տարբեր ուսուցիչներու մասին, որոնք իր առաքելութեան դէմ կը սորվեցնէին:

Պօղոս, 50 ական թուականներուն կը գրէ երկու նամակներ կորնթացիներուն, ցոյց տալու թէ ինչպէս կարելի է ապրիլ սուրբ եւ մաքոր կեանք մը, այլակրօն, անհարազատ եւ խարդախ միջավայրի մէջ:

### **Նամակին պատգամը**

Նամակներուն մէջ առաքեալը կը շեշտէ հետեւեալ հինգ կէտերը.

#### **1. Քրիստոսով՝ մէկ**

«...Մէկ մտքի ու մէկ խորհուրդի վրայ հաստատուած ըլլաք» (Ա.Կր.

1.10):

Պօղոս առաքեալ լսած ըլլալու էր թէ եկեղեցիին մէջ բաժանում կար. մարդիկ միաբան չէին, այլ հակառակութիւններ ունէին: Հետեւաբար ան կը գրէ իրենց ըսելով, թէ՛ քրիստոնեաներ մէկ ըլլալու են, առանց իրար մէջ

բաժանումներու առիթ տալու, որովհետեւ «... մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, հապա այն հոգին որ Աստուծմէն է» (Ա.Կր.2.12):

## **2. Մարմնի մաքրութիւն**

«... Զեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին, ... ուստի փառաւորեցէք Աստուած ձեր մարմիններուն ... մէջ» (Ա.Կր.6.19-20): Պօղոս առաքեալ կը պատուիրէ եկեղեցւոյ ժողովուրդին հետո մնալ ամէն տեսակի մեղքէ՝ «եթէ եղբայր մը կան մտնիկ ըլլայ, կան ազահ, կան կոսպաշտ, կան նախատող, կան գինով, կան յաւիշտակող, անոր հետ հաց ալ մի ուտէք: ... չարը ձեր մէջէն վերցուցէք» (Ա.Կր.5.11-13):

## **3. Զգաստութիւն**

«... Թէ՛ ուտէք, թէ՛ խմէք եւ թէ՛ ինչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք» (Ա.Կր.10.31): Միս ուտելը հարց կը դառնայ քրիստոնեաներուն համար Կորնթոսի մէջ: Ընդհանրապէս կուրքերուն նուիրուած զոհերուն միսերը շուկաները կը ծախուէին, եւ այդ միսերէն կ'ուտէր ժողովուրդը. քրիստոնեաներ արդեօք ուտելո՞ւ էին այդ միսերէն: Պօղոս կ'ըսէ՝ «զգո՛յճ կեցէք, որ չըլլայ թէ ձեր ազատութիւնը տկարներուն գայթակղութիւն ըլլայ» (Ա.Կր.8.9):

## **4. Նոր կեանք Քրիստոսով**

«...Ուրեմն եթէ մէկը Քրիստոսին մէջ է, անկա նոր ստեղծուած մըն է: Հիները անցան եւ անա ամէն բան նոր եղաւ» (Բ.Կր.5.17): Հաւատացեալներ Քրիստոսով նոր ուխտ մը կը սկսին Աստուծոյ հետ: Այս նոր ուխտին հաւատարիմ մնալու համար, հաւատացեալին հին նկարագիրը ամբողջովին փոխուելու է:

### **5. Առաքելային առաքելությունը**

«... Աստուծոյ Աւետարանը ձեզի ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցուցի ...» (Բ.Կր.11.7): Նամակին վերջաւորութեան առաքելը կը խօսի իր առաքելութեան մասին, եւ կը զգուշացնէ կորնթացիները սուտ առաքելներէն, որոնք «Քրիստոսին առաքելներուն կերպարանքը իրենց վրայ կ'առնեն»: Անոնց վերջը «իրենց գործերուն համեմատ պիտի ըլլայ» (Բ.Կր.11.13-15):



Սուրբ եւ մաքուր կեանք ապրիլը մարտահրաւէր մըն է նիւթապաշտ, անհարազատ եւ խարդախ աշխարհի մէջ: Սակայն մարմնի եւ կենցաղի մաքրութենէն առաջ կու գայ հոգիին մաքրութիւնն ու ժուժկալութիւնը, որուն միջոցով միայն մարդուն հոգին կրնայ Աստուծոյ Հոգին ընդունիլ:



### 43. Թուղթ առ Գաղատացիս

#### **Պատմական ակնարկ**

Գաղատիա, հռոմէական նահանգ մըն էր Փոքր Ասիոյ մէջ: Պօղոս առաքեալի քարոզութեան շնորհիւ շատեր քրիստոնէայ կը դառնան եւ եկեղեցի կը կազմեն: Ժամանակ մը ետք այդ եկեղեցին կ'այցելեն խումբ մը վարդապետներ, որոնք խռովութիւն եւ վէճ կը պատճառեն: Անոնք դարձի եկած հրեաներ էին, որոնք չէին ընդուներ Պօղոսին առաքելական հեղինակութիւնը (որովհետեւ ան Յիսուսի կողմէ ընտրուած տասներկու առքեալներէն չէր). անոնք նաեւ կը սորվեցնէին թէ Պօղոսի քարոզութիւնը անստոյգ է, եւ թէ իսկական փրկութիւն ունենալու համար անհրաժեշտ է Մովսիսական Օրէնքը պահել:

Պօղոս, 48-55ի միջեւ, կ'ուղղէ այս նամակը Գաղատիոյ եկեղեցւոյ ժողովուրդին, որոնք սխալ վարդապետութիւններու հակամէտ ըլլալով, Աւետարանը լքելու վտանգի մէջ էին:

#### **Նամակին պատգամը**

Առաքեալը կը գրէ հետեւեալ նիւթերու շուրջ.-

##### **1. Առաքեալին հեղինակութիւնը**

«... Այն Աւետարանը որ ինձմէ քարոզուեցաւ ... եւ .. մարդէ չառի զանհկա ... հապա Յիսուս Քրիստոսին յայտնութենէն» (1.11-12): Այս խօսքերով առաքեալը կը պաշտպանէ իր առաքելութեան հեղինակութիւնը, որպէս ճշմարիտ եւ Յիսուս Քրիստոսէ տրուած:

## **2. Հաւատքով, ոչ Օրէնքով**

«... Մարդ օրէնքին գործերով չի կրնար արդարանալ, հապա Յիսուս Քրիստոսի հաւատքէն...» (2.16): Մարդ արարած Աստուծոյ դիմաց արդար կը գտնուի ոչ թէ պատուիրանները պահելով եւ գործադրելով, այլ հաւատքով եւ վստահութեամբ: «Աբրահամ Աստուծոյ հաւատաց ու անոր արդարութիւն սեպուեցաւ»: Իսկ Օրէնքը մարդոց ուղղութիւն տալու համար եղած է, մինչեւ Տէր Յիսուսի գալուստը:

## **3. Քրիստոսով ազատութիւն**

«Վասնզի դուք ազատութեան կանչուած էք, եղբայրներ՝ միայն թէ ձեր ազատութիւնը մարմնի ցանկութիւններու պատճառ չըլլայ, հապա սիրով իրարու ծառայութիւն ըրէք» (5.13): Քրիստոսով բոլորս ալ կանչուած ենք ազատութեան, այլեւս Օրէնքին եւ մեղքին գերիները չենք: Հաւատացեալներ իրարու նեղութիւնները բաժնեկցելով եւ իրարու հանդէպ բարիք գործելով, կը կատարեն Քրիստոսի օրէնքը:

«Հոգիով գացէք ու մարմնին ցանկութիւնները պիտի չկատարէք: ... Արդ մարմնին գործերը յայտնի են, որոնք են՝ շնութիւն ... կռիւներ, նախանձներ, բարկութիւններ... չար նայուածքներ...: Բայց հոգիին պտուղը այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն» (5.16–23):



«Ամուր կեցէք այն ազատութիւնով, որով Քրիստոս մեզ ազատեց եւ նորէն ծառայութեան լուծի տակ մի՛ մտնէք» (5.1): Քրիստոսին բերած ազատութիւնը կ'ազատէ մեզ մեղքի եւ վախի ծառայութենէն, ինչպէս նաեւ անցեալին ճնշումէն եւ սպազայի մտահոգութենէն:

Ամբողջական ազատութիւն կը նշանակէ ամբողջապէս Աստուծոյ մէջ եւ Աստուծոյ հետ ըլլալ:



#### **44. Թուղթ առ Հոովմայեցիս**

##### **Պատմական ակնարկ**

Հոովմայեցիս նամակը կը նկատուի Պօղոս առաքելի նամակներէն ամենէն կարեւորը եւ հիմնականը: Պօղոս առաքել փափաք ունէր Հռոմ այցելելու, եւ հոն ալ Քրիստոսը քարոզելու, սակայն տակաւին այս մէկը չէր իրականացած երբ կը գրէ այս նամակը 57-58ի միջեւ (Հռ.1.10-13, 15.22): Պօղոս չէր հիմնած այս եկեղեցին, հետեւաբար այս նամակը միակն է որ ուղղուած է եկեղեցոյ մը, զոր ինք հիմնած չէր:

Այս նամակը կը ներկայացնէ առաքելին ընդհանուր միտքը եւ աստուածաբանութիւնը: Գաղատացիս նամակին նման, առաքելը դարձեալ կը շեշտէ թէ՛ «արդարացումը հաւատքով է»:

##### **Նամակին պատգամը**

Նամակը կարելի է ամփոփել հետեւեալ կարեւոր կէտերով.-

##### **1. Ո՛չ մէկ մարդ արդար է**

«Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսին ձեռքով» (6.23): Առաքելը կ'ըսէ.- «ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսեցան»: Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը խզելով, ենթարկուած կ'ըլլանք մեղքի մէջ իյնալու, եւ տեղի տալու ամէն տեսակ չարութեան, նախանձի եւ ատելութեան: Որքան ալ փորձենք օրէնքը պահել, եւ զգուշանալ մեղքէն, այս մէկը մեր անձնական ջանքերով կարելի չէ: Աստուած է որ մեզ կը մաքրէ, կը փրկէ եւ յաւիտենական կեանքի արժանի

կ'ընէ. մեզի կը մնայ միայն իրեն վստահիլ եւ ընդունիլ Յիսուսով փրկութեան իր պարգեւը:

## **2. Հաւատքով արդարացում**

«Արդ մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքով» (5.1): Այս խօսքերով առաքեալը կը շեշտէ թէ «մարդ հաւատքով կ'արդարանայ առանց օրէնքին գործերուն» (3.28): Այսինքն Աստուած կը փոխէ մեր վիճակը մեզ արդար նկատելով:

Օրէնքը բարի է ինչպէս նաեւ անհրաժեշտ՝ ի յայտ բերելու մարդուն մեղքը. սակայն օրէնքը չի կրնար մարդուն նկարագիրը փոխել: Օրէնքը չի կրնար նորոգել մարդուն միտքը եւ հոգին: Աստուծոյ հանդէպ մեր հաւատքն ու վստահութիւնը մեզ Աստուծոյ կը մօտեցնէ, եւ մեզի կարող կը դարձնէ իր փրկութեան ձրի պարգեւը ընդունելու:

## **3. Աստուծոյ կամքին մէջ մնալ**

«Եւ մի՛ կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէ՛ք, որպէսզի քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հաճելի եւ կատարեալ է» (12.2): Մարդուն համար լաւագոյնը՝ Աստուծոյ կամքին եւ ծառայութեան մէջ մնալն է: Աստուծոյ կամքը, որ բարի եւ կատարեալ է, մեզ կ'անաջնորդէ սիրոյ, ներողամտութեան եւ խաղաղութեան:

«... ով որ իր ընկերը կը սիրէ՝ օրէնքը կը կատարէ... սէրը ընկերին գէշութիւն չ'ըներ. ուրեմն օրէնքին լրումը սէրն է» (13.8-10):



*Հաւատացեալը Քրիստոսին հետեւելով պատրաստ ըլլալու է իր արտասանած աղօթքը աղօթելու՝ «ոչ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ»: Ղկ.22.42*



## 45. Թուղթ առ Փիլիպպեցիս

### Պատմական ակնարկ

Պողոս առաքեալ այս բարեկամական նամակը կը գրէ Փիլիպպէի եկեղեցիին, հաւանաբար Հռոմի բանտէն, 60 թուականին: Փիլիպպէ Մակեդոնիոյ կարեւոր քաղաքներէն էր, որմէ ներկայիս կը մնան միայն ատերակներ: Առաքեալը Աւետարանը քարոզելու համար Փիլիպպէ այցելած էր իր երկրորդ ճամբորդութեան ընթացքին: Հոն Լիդիա անունով կին մը քրիստոնէայ դառնալով, իր տունը կը բանայ որպէս եկեղեցի, որ մեծնալով կը սկսի ինք Քրիստոսը քարոզել (Գրծ. 16.9-40, Փլ.1.3-8):

Փիլիպպէի եկեղեցին միշտ օգնած է առաքեալին իր ծառայութեան ընթացքին, եւ պատրաստ եղած է իր ունեցածը բաժնեկցելու, նոյնիսկ ծանր աղքատութեան մէջ (Փլ.4.16; Բ.Կր.8.1-5):

### Նամակին պատգամը

Նամակին մէջ առաքեալը կը շեշտէ հետեւեալ երեք կէտերը. –

#### 1. «Ապրիլը Քրիստոս է»

«Քրիստոս իմ մարմնիս մէջ պիտի փառաւորուի՝ թէ՛ ապրելովս եւ թէ՛ մեռնելովս» (1.20): Առաքեալին համար «ապրիլը Քրիստոս է», այսինքն Քրիստոս է էականը եւ կարեւորը ամէն բանի մէջ: Առաքեալը երկրորդական կը սեպէ իր անձնական հանգիստը, հաճոյքը եւ շահը, եւ առաջնակարգ կը նկատէ Քրիստոսը եւ Քրիստոսով ապրիլը:

## **2. Խոնարհութեան կարեւորութիւնը**

«Բան մը գրգռութիւնով ... մի՛ ընէք. հապա խոնարհութիւնով մէկգմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք. Միայն ձեր անձերուն շահը մի փնտռէք հապա ամէն մէկը իր ընկերինն ալ» (2.3-4): Առաքեալը կ'ըսէ թէ Յիսուս որ Աստուծոյ հաւասար էր, «ինքզինք խոնարհեցուց, մինչեւ իսկ մեռնելու յօժարեցաւ» (2.8), որքան աւելի մենք իր օրինակին հետեւելով խոնարհելու ենք:

## **3. Ուրախ ըլլալ միշտ**

«Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեն ուրախ եղէք» (4.4): Պօղոս առաքեալը կոչ կ'ուղղէ Փիլիպպէի հաւատացեալներուն ուրախանալու Տէրոջմով: Հաւատացեալը գիտնալով թէ բոլոր նեղութիւններուն եւ դժուարութիւններուն մէջ Տէրը իր հետ է եւ կ'առաջնորդէ զինք, ան կարող կը դառնայ «ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով» իրեն վստահելու: Հաւատացեալը առաքեալին նման կ'արտասանէ՝ «ամէն բանի կարող եմ անով՝ որ զիս զօրացուց» (4.13):



*«Որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը. հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով եւ մարդու կերպարանքովը: Ինքզինք խոնարհեցուց, մինչեւ իսկ մեռնելու յօժարեցաւ ու այն ալ խաչի մահուամբ» (2.6-8):*

*Այս համարներուն մէջն է Քրիստոնէութեան եւ Քրիստոսին գաղտնիքը՝ անձը ունայնացնել, այսինքն անձը իր հպարտութենէն պարպել եւ ծառայութեան եւ խոնարհութեան դիրքը բռնել:*



## 46. Թուղթ առ Կողոսացիս

### Պատմական ակնարկ

Պողոս առաքեալ այս նամակը կը գրէ բանտին մէջէն (Կեսարիոյ կամ Հռոմի բանտէն) 60–62ի միջեւ: Կը կարծուի թէ ան ունեցած է օգնականներ նամակը գրելու համար: Կողոսայի եկեղեցին հիմնուած էր Պողոս առաքեալին օգնականներէն՝ Եպափրասին միջոցով (1.7; 4.12): Ան առաքեալին քարոզներէն ներշնչուելով դարձի եկած էր, եւ իր կարգին, սորվեցուցած էր Աւետարանը կողոսացիներուն: Կողոսայի եկեղեցոյ ժողովուրդը հեռացած էր Աստուծմէ, սակայն անոնք Քրիստոսի եւ Աստուծոյ մասին լսելով կը հաւատան եւ կը հաշտուին Աստուծոյ հետ (1.21–22):

Առաքեալը կ'իմանայ թէ եկեղեցին ենթարկուած է ուրիշներէ փոխանցուած սխալ վարդապետութիւններու, որոնք կը սորվեցնէին թէ մարդիկ հետեւելու են որոշ ուսելու եւ խմելու օրէնքներու, եւ հպարտանալով կը կարծէին թէ իրենց ջանքերով կրնային գոհացնել Աստուծոյ, առանց դիմելու Յիսուսին (2.16–19):

### Նամակին Պատգամը

Նամակին մէջ առաքեալը կը շեշտէ հետեւեալ երեք կէտերը. –

#### 1. Քրիստոսով հաշտութիւն

«Վասն զի հայրը հաճեցաւ որ ... անով ամէնքը հաշտեցնէ իրեն հետ» (1.19–20): Մարդ պէտք ունի Աստուծոյ, սակայն մարդուն դժուար է ճանչնալ զԱստուած եւ գիտնալ անոր միտքն ու կամքը: Միայն Յիսուսով կարելի է այս մէկը, որովհետեւ ան «աներեւոյթ

Աստուծոյ պատկերն է» (1.15): Յիսուսով կրնանք ճանչնալ զԱստուած, ան իր կեանքով, գործով եւ մահով յայտնեց մեզի Աստուծոյ խորքը:

## **2. Ամէն մարդ կրնայ հաշտուիլ Աստուծոյ հետ**

«... Որպէսզի ամէն մարդ կատարեալ ընենք Քրիստոս Յիսուսով» (1.28): Ամէն մարդ Յիսուսով կրնայ հաշտուիլ Աստուծոյ հետ, եւ ոչ միայն ընտրեալ մարդիկ, որոնք (հրէական ենթահողէ եկած ըլլալով) կը պահեն որոշ ուսելու, խմելու եւ տօներու օրէնքներ: Այլեւս կարիք չկայ մարդոց հին Օրէնքին հետեւելու, ինչպէս սխալ վարդապետութիւններ կը սորվեցնէին: Երբ մարդ Աստուծոյ հետ հաշտուի, այսինքն իր բոլոր սրտով ու մտքով սիրէ զԱստուած, արդէն ինքնաբերաբար կ'ուզէ Աստուծոյ կամքին մէջ մնալ:

## **3. Նոր կեանք Քրիստոսով**

«Եւ հազէ՛ք այն նորը գիտութիւնով նորոգուած՝ իր ստեղծողին պատկերին պէս» (3.10):

«... ձեր վրայ հազէ՛ք գութը, ողորմութիւնը եւ քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը, իրարու համբերելով եւ իրարու ներելով» (3.12-13):

Այս խօսքերով առաքեալը կը փակէ իր նամակը, հրաւիրելով Կողոսսայի եկեղեցին հազնելու Աստուծոյ արդարութիւնը եւ մէկդի ձգելու ամէն բարկութիւն, չարութիւն, հայհոյութիւն եւ անհամեստ խօսքեր: Այս մէկը չի նշանակեր հեռանալ ընկերային կեանքէ եւ շրջանակէ, մէկուսացած կեանք ապրելով. այլ կը նշանակէ նոյն մեր

շրջանակին մէջ կարող դառնալ Քրիստոսին հոգին եւ լոյսը ցոլացնել:

Առաքեալը նաեւ կ'ըսէ. «Ինչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջը եւ ոչ թէ մարդոց» (3.23): Այս նոր կեանքը որ մեզի Աստուծմէ տրուած է ապրելու ենք ոչ թէ մարդոց գոհացնելու, այլ որպէս մեր Աստուծոյ եւ մարդոց սիրոյն բնական արդիւնքը:



Աւետարանին Բարի Լուրը այս է՝ նոր կեանք Քրիստոսով: Այս նոր կեանքը մեզի կը տրուի Աստուծմէ, մեր ստեղծիչէն, ձրիաբար: Մեր հին իրականութիւնը հանել եւ նորը հաքուիլ ամենօրեայ սովորութիւն պէտք է ըլլայ, մինչեւ որ «անոր առջեւ սուրբ ու անբիծ եւ անարատ» կայնինք (1.22):



## 47. Թուղթ առ Եփեսացիս

### Պատմական ակնարկ

Այս նամակը կ'ուղղուի Եփեսոսի (Փոքր Ասիոյ մէջ) եւ անոր շուրջ գտնուող եկեղեցիներուն: Պօղոս առաքեալ այս նամակը գրելու համար ունեցած է օգնական աշակերտներ, որոնք իրմէ ետք ամբողջացուցած են իր գործը: Նամակը ուրեմն չի հետապնդեր որոշակի եկեղեցւոյ մը հարցերուն լուծում գտնել, այլ առաքեալը ի մտի ունի եկեղեցին որպէս համաշխարհային իրականութիւն մը, որուն անդամներն են բոլոր հաւատացեալները, եւ որուն գլուխն է Տէր Յիսուս Քրիստոս:

### Նամակին պատգամը

Նամակին մէջ առաքեալը կը շեշտէ հետեւեալ երկու կէտերը. –

#### 1. Քրիստոսով՝ մէկ

«Վասն զի անիկա է մեր խաղաղութիւնը, որ երկուքը մէկ ըրաւ ու մէջտեղի բաժնող պատըր, այսինքն իրարու հետ եղած թշնամութիւնը, իր մարմինովը քակեց» (2.14):

Քրիստոսի մահով կը վերցուի այն պատըր, որ կը բաժնէր մարդը Աստուծմէ, ինչպէս նաեւ հրեան հեթանոսէն: Երուսաղէմի տաճարը պատով մը կը բաժնէր տաճարին սրբավայրը հեթանոսներուն գաւիթէն, եւ այդ պատին վրայ ազդարարական գրութիւն մը կը դրուէր հեթանոսներուն համար, որ կ'արգիլէր անոնց տաճար մուտքը: Սակայն Քրիստոսով բոլոր մարդիկ՝ հրեայ թէ

հեթանոս կը միանան կազմելու մէկ մարմին, որն է Եկեղեցին, որուն գլուխը Յիսուս Քրիստոս ինք է: «Մէկ մարմին ու մէկ հոգի, ինչպէս կանչուեցաք ձեր կոչումին մէկ յոյսովը. . . . Մէկ է Աստուած եւ ամենուն Հայրը, որ ամենուն վրայ ու ամենուն հետ եւ ձեր ամենուն մէջն է» (4.4, 6):

## **2. Լոյսի որդիներու պէս քալել**

«Քանզի թէեւ ատեն մը դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի լոյսի որդիներու պէս քալեցէք» (5.8): Քրիստոսի մարմնին՝ Եկեղեցիին անդամները ըլլալով, հաւատացեալներ կանչուած են վերցնելու իրենց մէջէն ամէն տեսակի թշնամական եւ չարակամ գործեր:

Հաւատացեալներ կանչուած են լոյսի որդիներու պէս ապրելու, կանչուած են անելու եւ մեծնալու հաւատքի մէջ, «մինչեւ ամէնքս ալ հասնինք . . . կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հասակին չափը ունենալու» (4.13): Հաւատացեալներ զինուորներու նման կանչուած են սպառազինուելու, սակայն զէնքի ու մետաղեայ զրահին փոխարէն անոնք կը հրաւիրուին պաշտպանուելու Աստուծոյ սպառազինութեամբ՝ նշմարտութեամբ, արդարութեան զրահով, խաղաղութեան Աւետարանով, հաւատքի վահանով, փրկութեան սաղաւարտով եւ հոգիին սուրով, որպէսզի կարենան դէմ դնել չարին բոլոր յարձակումներուն (6.10-17): Պաշտպանութեան այս միջոցները կը հակասէին ուժի հոռոմէական խորհրդանիշներուն, ուրեմն քրիստոնէաներ, անուղղակիօրէն, կը հակադրուէին անոնց վարած քաղաքականութեան:



*Մարդ արարած ընդհանրապես բնույթով կը կառչի իր անմիջական պատկանելիության խումբին՝ ընտանիք, ազգականներ, ազգ, կրօնք, ցեղ եւլն: Սակայն Պօղոս առաքեալի ներկայացուցած Եկեղեցիին այս խորհուրդը, որպէս համաշխարհային իրականութիւն, մարտահրաւերի դիմաց կը դնէ մեզ՝ ընդունելու մեզմէ տարբերը կամ օտարը որպէս նոյն մարնմնի անդամ, որուն մենք ալ կը պատկանինք եւ որուն գլուխը Քրիստոսն է:*



## 48. Թուղթ առ Տիմ.Ա., Բ. և Տիտոս

### **Պատմական ակնարկ**

Տիմ. Ա, Բ., և Տիտոս նամակները կը նկատուին հովուական նամակներ: Անոնք ուղղուած են եկեղեցական առաջնորդներու (հովիւներու), անոնց ուղղութիւն և յորդոր տալու իրենց առաքելութեան մէջ: Տիմոթէոս և Տիտոս եղած են Պօղոս առաքեալի ամենէն վստահելի գործակիցները: Տիմոթէոսի մասին Գրծ.16.1ի մէջ կը կարդանք թէ անոր հայրը յոյն և մայրը հրեայ էր: Պօղոս զինք «սիրելի որդի» կը կոչէ (Ա.Կր.4.17), իսկ Փլ.2.20ի մէջ անոր մասին խօսելով կ'ըսէ «Վասն զի անոր նման սրտակից մէկը չունիմ . . .»:

Տիտոսի մասին աւելի քիչ կը կարդանք, ան «յոյն էր» (Գղ.2.3). Բ.Կր.8.23ի մէջ Պօղոս զինք «ընկեր և . . . գործակից» կը կոչէ: Առաքեալը հաւանաբար իր կեանքին վերջաւորութեան (Հռոմի մէջ իր բանտարկութեան ընթացքին, Բ.Տիմ.2.9, 4.16) կը գրէ այս նամակները, քաջալերելու իր գործակիցները յիշելով իտէալ առաջնորդին օրինակը, որուն հետեւելու են:

### **Նամակներուն պատգամը**

Առաքեալը իր գործակիցներուն գրելով կը շեշտէ հետեւեալ կէտերը. –

#### **1. Զգուշացում սխալ վարդապետութիւններէ**

«... չնայիլ առասպելներու . . . որոնք վերջ չունին, որոնք աւելի վէճեր ալ կը պատճառեն քան թէ Աստուծոյ հաճելի շինութիւն՝ որ կ'ըլլայ հաւատքով» (Ա.Տիմ.1.4):

Առաքելը կը զգուշացնէ իր գործակիցները սուտ վարդապետութիւններէ, որոնք օրէնքը շեշտելով կը մոլորին անկեղծ հաւատքէն: Անոնք «մտքով ապականած ու ճշմարտութենէ հեռացած» են (Ա.Տիմ.6.5-6):

## 2. Եկեղեցական առաջնորդի յատկութիւնները

«Դուն օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարմունքով, սիրով, հաւատքով եւ մաքրութեամբ» (Ա.Տիմ.4.12):

Եկեղեցական առաջնորդը ըլլալու է անարատ, զգաստ, պարկեշտ, հիւրասէր, ժուժկալ, ո՛չ գինեմոլ, ո՛չ կոռուղ, ո՛չ արծաթասէր, ո՛չ բարկացող, ո՛չ ալ անարգ շահախնդրութեան ետեւէ եղող (Ա.Տիմ.3.2-4; Տիտ.1.7): Ան ամօթ սեպելու չէ Տէրոջ վկայութիւնը եւ նեղութիւններու համբերելու է «Յիսուս Քրիստոսի բարի զինուորի մը պէս» (Բ.Տիմ.2.3): Առաքելը կ'ըսէ՝ «Տէրոջը ծառան պէտք չէ կռուի, հապա հեզահոգի ըլլայ ամենուն, սորվեցնող, ոխ չպահող. քաղցրութեամբ խրատէ հակառակ կեցողները...» (Բ.Տիմ.2.24):



Ընդհանրապէս մարդիկ կը նային հոգեւոր առաջնորդներու որպէս օրինակներ իրենց կեանքերուն համար, եւ կ'ակնկալեն որ անոնք պիտի կարողանան զիրենք դէպի գԱստուած առաջնորդել: Մեր առաջնորդները մեծ ազդեցութիւն ունին մեր հոգեւոր անմասն վրայ:

**Թ. Քանի մը Ընդհանրական Նամակներ**  
**49. Թուղթ առ Եբրայեցիս**

**Պատմական ակնարկ**

Այս նամակը կարելի է նկատել Ընդհանրական Նամակներէն մին: Ընդհանրական կը կոչուին այն նամակները, որոնք ուղղուած են ընդհանուր քրիստոնէաներու եւ ոչ յատուկ խումբերու կամ եկեղեցիներու: Նամակը եղած է քարոզ մը որ Պօղոս առաքեալի աշակերտներէն մէկը, 70 թուականի մօտ, ուղղած է քանի մը քրիստոնէաներու: Անոնք բուն հրեայ եղած էին, որոնք Յիսուսի մասին լսելով կը դառնան քրիստոնէաներ. սակայն շուտով իրենց խանդը կը պակսի, եւ որոշ դժուարութիւններու դիմաց գտնուելով կը շուարին իրենց նախկին համոզումներուն եւ ներկայ հաւատքին միջեւ:

**Նամակին պատգամը**

Գրողը հետեւեալ կէտերը կը շեշտէ.-

**1. Յիսուսի հետեւիլը անելի ճիշդ է քան նախկին հրէական օրէնքներուն**

«Շատ ձեներով ու շատ կերպերով կանխաւ խօսած է Աստուած հայրերուն հետ՝ մարգարէներով: Այս վերջին օրերս իր որդիովը խօսեցաւ մեզի հետ, որը ամէն բանի ժառանգորդ ըրաւ, որով աշխարհն ալ ստեղծեց: Ան իր փառքին լոյսն է եւ իր էութեան՝ բուն պատկերը» (1.1-3):

Գրողը նաեւ կ'ըսէ թէ «օրէնքը գալիք բարիքներուն շուքն է, ոչ թէ անոնց բուն կերպարանքը» (10.11): Յիսուս անելի բարձր եւ անելի մեծ է Մովսէսէն եւ

հրեշտակներէն՝ (1.4; 3.1-6): Հեղինակը բաղդատական ձեւով կը ներկայացնէ քահանայապետին գործը, որ ամէն տարի զոհ կը մատուցանէր, ժողովուրդին մեղքերու թողութեան համար, եւ Յիսուսի կատարած փրկութեան գործը, որ «իր անձով մեր մեղքերը սրբեց» (1.3):

## **2. Միայն հաւատքով կրնանք մօտենալ Աստուծոյ**

«Հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը ու չերեցած բաներուն ապացոյցն է» (11.1): Հեղինակը կ'իւզէ հաստատել քրիստոնէաները իրենց հաւատքին մէջ քրիստոնէական կեանքի մէջ կան դժուարութիւններ, որոնք միայն հաւատքով կարելի է յաղթահարել: Երբ կը հաւատանք Աստուծոյ ներկայութեան, եւ Տէր Յիսուսի կատարած փրկութեան գործին, վստահութեամբ կրնանք դիմագրաւել ամէն դժուարութիւն եւ փորձութիւն:



Հաւատացեալներ, տարիներու ընթացքին, փորձուած են եւ տակաւին կը փորձուին փաստել իրենց հաւատքը, եւ իրենց հաւատքի նիւթը՝ Աստուած: Սակայն առաքեալը յստակ կը գրէ՝ «հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը ու չերեցած բաներուն ապացոյցն է»:

Յոյսը կարելի չէ փաստել, թե ոչ ան կը դադրի յոյս ըլլալէ, եւ եթէ հաւատքի նիւթը ապացոյցով հաստատուի, ալ ինչո՞ւ հաւատքի պէտք կայ:

Մարդ արարածին համար, Աստուած կը մնայ խորհուրդ մը, որուն միայն յոյսով եւ հաւատքով կարելի է մօտենալ:



## 50. Թուղթ Յակոբու

### Պատմական ակնարկ

Այս Ընդհանրական Նամակին հեղինակը հաւանաբար Յակոբոս առաքելալին աշակերտներէն էր, որ հրէական արմատներ ունէր եւ գրած է իր նամակը առաջին դարու վերջաւորութեան: Ան հիմնականօրէն կը խօսի քրիստոնէական կեանքի եւ կենցաղավարութեան մասին եւ անոր մասին բարոյական ուսուցումներ կը փոխանցէ:

### Նամակին պատգամը

Հեղինակը հետեւեալ կէտերը կը շեշտէ.-

#### 1. Գործնական հաւատք

Հաւատացեալին համար բաւարար չէ արտայայտել իր հաւատքը խօսքով, այլ ան ապրելու եւ գործադրելու է այն ինչ որ կը դաւանի: Աբրահամ, Աստուծոյ հաւատալով պատրաստ էր զոհելու նոյնիսկ իր որդին, Իսահակը. Աբրահամին հաւատքը միայն խօսքով չէր այլ նաեւ գործով: Առաքելալին համար «հաւատքը առանց գործերու մեռած է» (2.20):

«Խօսքը կատարեցէ՛ք, միայն մի՛ լսէք՝ ինքզինքնիդ խաբելով:

Վասն զի եթէ մէկը միայն լսէ խօսքը ու չկատարէ, կը նմանի մարդու մը՝ որ հայելիի մէջ աչքերը տնկած իր բնական երեսը կը դիտէ. Վասն զի դիտելով կը տեսնէ ինքզինք ու կ'անցնի կ'երթայ եւ շուտ մը կը մոռնայ թէ ինչպիսի մէկն էր» (1.22-24):

## 2. Քրիստոնէական արժէքներ

Առաքեալը կը շեշտէ թէ որպէս քրիստոնեաներ ունենալու ենք չափանիշներ եւ արժէքներ, որոնք մեր կեանքին ու վարմունքին ուղղութիւն կու տան եւ մեզ տարբեր կ'ընեն ուրիշներէ: Մեր շուրջի աշխարհը մեզ դիւրութեամբ կրնայ գրաւել եւ մեզմէ խլել մեր չափանիշները. դիւրութեամբ կրնայ մեղքը մեզ համոզել թէ պէտքը չկայ ճիշդը ընտրելու եւ ճիշդը ընելու: Սակայն քրիստոնէական արժէքները պահելով եւ գործադրելով հաստատ կը մնանք մեր հաւատքին մէջ: Այդ արժէքներէն կարելի է յիշել՝

Ա. «Որբերուն ու որբեայրիներուն այցելել [անոնց] նեղութեան ատենը ...» (1.27).

Բ. Հիւանդներուն եւ նեղութեան մէջ եղողներուն այցելել (5.13-14).

Գ. Աչառութիւն չընել հարուստի եւ աղքատի միջեւ (2.1-7).

Դ. Զգուշանալ ցանկութիւններէ եւ նախանձէ, որոնցմէ յառաջ կու գան պատերազմներ եւ կոիւներ (4.1-3).



Հաւատք եւ գործեր. արդէօք ասոնցմէ ո՞ր մէկը առաջ-նակարգ է: Որպէս մարդ, Յիսուս ալ գործեց եւ իր հետետորդներուն գործնական հաւատք սորվեցուց: Սիրոյ

գործերը կ'արտացոլեն մարդուն ճշմարտության խորքը: Ուրեմն, կարելի է ըսել թե հաւատքը (կամ հաւատքի արտայայտութիւնը) առանց գործերու կը դառնայ անիմաստ, որովհետեւ Աստուծոյ հանդէպ իսկական հաւատքին անպայման կ'ընկերակցին մարդոց ալ հանդէպ սէրն ու հոգատարութիւնը: Անշուշտ հոս խօսքը չի նշեր որեւէ օրէնքի հետ առնչուած գործ. սիրոյ գործերը մարդուն խոր հաւատքին արդիւնքն են: Այլապէս, գործերը, առանց Աստուծոյ հանդէպ հաւատքի, մարդս հպարտութեան եւ անձնակեդրոն կեանքի կ'առաջնորդեն:

Քրիստոնէական հաւատքը կարելի է ամփոփել Քրիստոնէական սիրոյ պատուէրով՝

«Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ: ... Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» (Մտ.22.37-39):



## 51. Թուղթ Ա. Պետրոսի

### **Պատմական ակնարկ**

Ըստ Ա. Պտ.1.1ի, նամակին հեղինակը «Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ»ն է, եւ «Քրիստոսին չարչարանքներուն վկայ» (5.1): Հաւանաբար Պետրոս ունեցած է ուսեալ օգնական մը, կամ աշակերտ մը, որ իր բաժինը բերած է որպէս քարտուղար, արձանագրելու Պետրոսի անունով երկու նամակներ: Հաւանական է որ այս նամակները ուշ արձանագրուած են, մօտ 90ական թուականներուն:

### **Նամակին պատգամը**

Առաքեալը հետեւեալ կէտերը կը շեշտէ.-

#### **1. Հալածանքի ժամանակ հաւատք**

«Վասն զի գովեստի արժանի ինչ կայ եթէ մեղք գործելով ծեծուիք ու համբերէք: Բայց եթէ բարիք գործելով չսարչարուիք ու համբերէք, սահկա Աստուծոյ քով շնորհք մըն է» (2.20):

Առաջին դարու երկրորդ կիսուն, նոր դարձի եկող քրիստոնէաներ կ'ենթարկուէին հալածանքի իրենց ընտանիքներէն, դրացիներէն եւ որոշ իշխանութիւններէ: Նամակը կը քաջալերէ զիրենք հաւատարիմ մնալու իրենց հաւատքին եւ համոզումներուն:

#### **2. Քրիստոնէական կենցաղ**

«... ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարմունքներուն մէջ» (1.15):

Աստուծոյ որդիները կանչուած են անհաւատներէ տարբեր կեանք մը ապրելու. անոնք սիրո՛ւմ, հաւատքով եւ յաւիտենական կեանքի յոյսով շարունակելու են իրենց հաւատքի ընթացքը, որպէս Յիսուս Քրիստոսի մարմնին անդամները:

### **3. Քրիստոսի չարչարանքներուն բաժնեկից ըլլալ**

Քրիստոնեաներ, երբ տեսակաւոր նեղութիւններու հանդիպին, անոնք բաժնեկից կ'ըլլան Քրիստոսի չարչարանքներուն (4.13): Յիսուս շատ մը չարչարանքներ կրելով օրինակ եղաւ իր բոլոր հետետորդներուն:

«Քանզի դուք այս բանին համար կանչուեցաք, վասնզի Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ ու ձեզի օրինակ թողուց՝ որպէսզի իր շաւիղներուն հետեւիք» (2.21):



«Ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարմունքներուն մէջ» (1.15):

Աստուած է Սուրբը, որ մեզ Յիսուսով կը կանչէ, որպէսզի իրեն նաեւով սրբութեան ճամբուն հետեւինք: Այս իմաստով հաւատացեալը կանչուած է Յիսուսի չարչարանքներուն բաժնեկից ըլլալու եւ այդպիսով, բաժնեկից՝ Աստուծոյ Թագաւորութեան եւ փառքին ալ:

**Ժ. Յովհաննէս Աւետարանիչի Գործերէն**  
**52. Աւետարան ըստ Յովհաննու**

**Հեղինակ եւ թուական**

Այս Աւետարանը ամբողջովին տարբեր է միւս Աւետարաններէն. Հոս գրական ոճը ընդհանրապէս աստուածաբանական է, իսկ միւս Աւետարաններուն մէջ ոճը յաճախ պատմողական է, որոշ դէպքեր կամ ուսուցումներ փոխանցելու նպատակով: Այս Աւետարանը ամենէն ուշ արձանագրուած Աւետարանն է:

Յովհաննէս՝ Տէր Յիսուսի սիրելի աշակերտը, Պետրոսի եւ Յակոբոսի կողքին, ունեցած է աշակերտներ, որոնց բերանացի փոխանցած է Յիսուսի գործերուն, խօսքերուն, մահուան եւ յարութեան մասին: Յովհաննէս եւ իր աշակերտները Եփեսոս երթալով եկեղեցի հիմնած էին հոն: Հաւանաբար Յովհաննէսի աշակերտները գրած են այս Աւետարանը, երեք նամակները, ինչպէս նաեւ Յայտնութեան գիրքը: Այս գիրքերը գրուած են որպէս պաշտամունքի գիրքեր առաջին դարու վերջաւորութեան (92-100 թուականներու միջեւ):

**Աւետարանին նպատակը՝ հաւատք Տէր Յիսուսի հանդէպ**  
Յովհաննէսի Աւետարանը կը հետապնդէ մէկ նպատակ՝ առաջնորդել ընթերցողը հաւատք ունենալու Տէր Յիսուսի հանդէպ: Աւետարանիչը կը ջանայ համոզել թէ Յիսուս է Քրիստոսը, Աստուծոյ Որդին: Միայն Յիսուսով կրնանք գԱստուած ճանչնալ: «Բայց ասոնք գրուեցան, որպէսզի հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին եւ որպէսզի հաւատալով կեանք ունենաք անոր անունովը» (20.31):

Աւետարանին մէջ յաճախ երկու հակասական աշխարհներու նկարագրութիւնը կայ՝ վերի աշխարհը եւ

վարի աշխարհը, խաւար եւ լոյս, մարմին եւ հոգի . . . : Այս հակասութիւններուն միջոցով Աւետարանիչը կը փոխանցէ Աւետարանին պատգամը, թէ ինչպէս՝  
«Ծշմարիտ լոյսը ան է, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չճանչցաւ» (1.9-10):

Յաւիտենական կեանքը ոչ միայն ապագայի համար է. յաւիտենական կեանքը կը սկսի երբ մեր կեանքերուն ընթացքին ընդունինք եւ ընդառաջենք Աստուծոյ հրաւերին, որ մեզի կու գայ Տէր Յիսուսին միջոցով:  
«Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը» (1.12):

**Յովհաննէսի Աւետարանը եւ Համատեսակ ավետարանները**  
Յովհաննէսի Աւետարանը կը տարբերի Համատեսակ ավետարաններէն քանի մը կէտերով.-

1. Այս Աւետարանին մէջ Յիսուս չի սորվեցներ Աստուծոյ Թագաւորութեան մասին ինչպէս միւս Աւետարաններուն մէջ, այլ ընդհանրապէս Յիսուս կը խօսի յաւիտենական կեանքի մասին (20.30-31) եւ իր Աստուծոյ հետ յարաբերութեան մասին:

2. Համատեսակ ավետարանները կը կեդրոնանան Յիսուսի գործերուն եւ խօսքերուն վրայ, սակայն Յովհաննէսի Աւետարանին մէջ չենք հանդիպիր շատ հրաշքերու կամ առակներու: Հեղինակը կենթադրէ թէ կարդացողը արդէն գիտէ Յիսուսի գործած գործերուն եւ խօսքերուն մասին: Հետեւաբար ան կ'ընտրէ այն դէպքերը եւ այն հրաշքերը որոնք կը յայտնեն անոր ով ըլլալը, եւ կարդացողը

*հաւատքի կ'առաջնորդեն: Այսպիսով Աւետարանը աւելիով  
կը ծանրանայ Յիսուսի անձին եւ անոր աստուածային  
բնոյթին վրայ:*



*«Դրախտը» եւ «դժոխքը» մեր կեանքերուն մէջ կ'ապրինք  
ամէն անգամ երբ Աստուծմէ (ճշմարտութենէն, բարիքէն)  
մօտենանք կամ հեռանանք: Յաւիտենական կեանքը  
ուրեմն որոշ ապագայի տարբեր կեանքի մը մասին  
յայտարարութիւն մը չէ. յաւիտենական կեանքը Աստուծոյ  
հետ մեր կեանքն է, որ հոս կը սկսի ապագայի  
ամբողջականութեան յոյսով:*

*«Յաւիտենական կեանքը քեզ ճանչնալն է՝ որպէս  
ճշմարիտ միակ Աստուած եւ ճանչնալ Յիսուս Քրիստոսը՝  
որ դուն զրկեցիր» (Յհ. 17. 3):*



### 53. Հատուածներ՝ Յովհաննու Աւետարանէն

#### **Աւետարանին նախաբանը (1.1-5)**

Նախաբանին մէջ արդէն Աւետարանիչը կը յայտնէ Յիսուսի ով ըլլալը: Յիսուս (Բանը կամ Խօսքը) սկիզբէն էր, Աստուծոյ քով էր եւ Աստուած էր. Ամէն բան անով եղաւ եւ կեանքը անով էր ... : Աւետարանը Ծննդոց գիրքին նման կը սկսի յիշելով թէ Յիսուսի գալը նոր սկիզբ մըն է: Նոր կեանք կը սկսի իրմով եւ իրմէ հեռու գտնուող մարդիկ կը մնան մութի եւ խաւարի մէջ:

«Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զանհկա չճանչցաւ» (1.5):

#### **Յիսուս եւ Նիկողէմոս (3.1-21)**

Նիկողէմոս փարիսեցի մըն էր: Ան հրեաներուն մէջ իշխան մը ըլլալով կ'ուզէ խօսակցիլ Յիսուսի հետ: Գիշերով կու գայ անոր մօտ եւ Յիսուս կը բացատրէ իրեն վերստին ծնունդի կարեւորութիւնը: Նիկողէմոս զարմացած կ'ըսէ.- «Ինչպէ՞ն կրնայ մարդ մը նորէն ծնանիլ, որ ծերացած է»:

Յիսուս Նիկողէմոսի վերստին ծնունդին հոգեւոր նշանակութիւնը կը բացատրէ: Վերստին ծնունդը մարդուն հոգիին կեցուածքն է, որուն միջոցով ան իր կեանքի հիմնական ուղղութիւնը փոփոխութեան կ'ենթարկէ եւ յաւիտենական կեանք կը վայելէ Աստուծոյ Որդիին հանդէպ հաւատքով:

«Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին որդին տուաւ, որպէսզի ամէն ո՛վ որ անոր

հաւատայ չկորսուի, հապա յաւիտե-  
նական կեանք ունենայ» (3.16):

#### **Յիսուս եւ Սամարացի կիներ (4.1-42)**

Սամարացի կնկան մասին կարդալով կ'իմանանք թէ ան կը զարմանայ երբ Տէր Յիսուս իր հետ խօսի. սամարացի կիներ կը հարցնէ Յիսուսի՝ «Դուն որ հրեայ ես, ինչպէ՞ն կ'ուզես ջուր խմել ինձմէ՝ սամարացի կնոջմէ մը»:

Յիսուս կը պատասխանէ.-

«Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը եւ թէ ո՞վ է ան, որ քեզի կ'ըսէ, ինձի ջուր տուր խմելու, դուն անկէ պիտի ուզէիր եւ ինք քեզի կենդանի ջուր պիտի տար»:

Կիներ դարձեալ կը հարցնէ՝ «... ուրկէ՞ պիտի ունենաս այն կենդանի ջուրը»: Յիսուս կ'ըսէ՝

«Ամէն ով որ այս ջուրէն խմէ, նորէն պիտի ծարաւի, բայց ո՞վ որ խմէ այն ջուրէն որ ես անոր պիտի տամ, յաւիտեան պիտի չծարաւի»:

Խօսակցութեան ընթացքին կիներ կ'անդրադառնայ թէ Յիսուս պարզ մէկը չէ. «Տէ՛ր, կը տեսնեմ թէ դուն մարգարէ մըն ես»: Յիսուս կը բացատրէ իրեն թէ ինչպէս «ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով ու ճշմարտութիւնով»: Կիներ, որ հաւանաբար սամարացիներուն ղրկուած Յիսուսի առաջին առաքեալը կը դառնայ, Յիսուսի հաւատալով, քաղաք կը վերադառնայ եւ կը վկայէ անոր մասին:

«Այն քաղաքէն շատ սամարացիներ իրեն հաւատացին այն կնոջ խօսքին համար, որ վկայեց, ըսելով թէ՛՝ ինչ

որ ես գործեր էի բոլորը ինձի ըսաւ՝»  
(4.39):

**Յիսուս եւ ի ծնէ կոյրը (9.1-41)**

Տէր Յիսուս Շարաթ օրով կը բուժէ ի ծնէ կոյրը: Սակայն այս բժշկութեան արդիւնքով փարիսեցիներէն շատեր կը հետապնդեն կոյրը եւ անոր ծնողքը փաստելու համար որ Յիսուս մեղաւոր մէկն է: Կոյրը բժշկուելէն ետք կը վկայէ փարիսեցիներուն եւ կ'ըսէ.-

«Աշխարհի սկիզբէն ի վեր լսուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը բացած ըլլայ: Եթէ Աստուծմէ չըլլար այն մարդը, բա՛ն մըն ալ չէր կրնար ընել» (9.32-33):

Կոյրին հաւատքը Տէր Յիսուսի հանդէպ այնքան զօրաւոր էր որ կրցաւ քաջութեամբ հրեաներուն վկայել անոր մասին: Ի ծնէ կոյրին այս վկայութիւնը պատճառ կ'ըլլայ իր տաճարէն դուրս դրուելուն: Յիսուս գտնելով ի ծնէ կոյրը կը հարցնէ իրեն.- «Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ որդիին»: Կոյրին պատասխանը կ'ըլլայ.-

«Կը հաւատամ, Տէ՛ր»:

**Հրաշքներ եւ խօսքեր**

Յովհաննու Աւետարանին հեղինակը կը ներկայացնէ Յիսուսի 7 հրաշքներ, ինչպէս նաեւ իր 7 «ես եմ» խօսքերը: Հոս կարելի է ներկայացնել այս հրաշքները եւ խօսքերը հետեւեալ ցանկով.

**Տէր Յիսուսի կատարած 7 հրաշքները Յովհաննու Աւետարանին մէջ.-**

1. Զուրը գինիի փոխելը (2.1-12)
2. Ազնուականին որդիին բժշկութիւնը (4.46-54)

3. 38 տարիէ հիւանդին բժշկութիւնը (5.1-18)
4. Հինգհազարը կերակրելը (6.1-15)
5. Ի ծնէ կոյրին բժշկութիւնը (9.1-41)
6. Ղազարոսին կեանքի գալը (11.1-44)
7. Աշակերտները 153 ծուկեր կը որսան (21.1-14)

**Տէր Յիսուսի 7 «Ես եմ» Խօսքերը.-**

1. «Ես եմ կենաց հացը» (6.35).
2. «Ես եմ աշխարհի լոյսը» (8.12).
3. «Ես եմ ոչխարներուն դուռը» (10.7).
4. «Ես եմ բարի հովիւր» (10.11).
5. «Ես եմ յարութիւնն ու կեանքը» (11.25).
6. «Ես եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը» (14.6).
7. «Ես եմ ճշմարիտ որթը» (15.1):



Տէր Յիսուսի հետ հանդիպելով մեր կեանքերը կը փոխուին, ինչպէս սամարացի կնոջ կեանքը կը փոխուի: Իսկ ի ծնէ կոյրին նման, մե՛ր աչքերն ալ կրնան բացուիլ եւ մենք ալ կրնանք քաջութեամբ վկայել Լոյսին մասին, որ մեր կեանքերը կը լուսաւորէ:



## 54. Ա. Յովհաննու

### **Պատմական ակնարկ**

Այս նամակը հաւանաբար եղած է քարոզ մը, որ ուղղուած է քանի մը եկեղեցիներու Փոքր Ասիոյ մէջ առաջին դարու վերջաւորութեան: Եկեղեցիներուն մէջ եղած են հաւատացեալներ, որոնք զիրար չէին ընդուներ, մինչ ուրիշներ հեռացած էին ճշմարտութենէ, յարելով սխալ ուսուցմունքներու:

### **Նպատակ եւ պատգամ**

Հեղինակը կը շեշտէ թէ բոլորս ալ մեղաւորներ ենք եւ պէտք ունինք Տէր Յիսուսի բերած փրկութեան: Ան նաեւ կը յիշեցնէ հաւատացեալներուն, թէ «Աստուած սէր է», «ուրեմն մենք ալ պարտաւոր ենք մէկզմէկ սիրել» որպէս Աստուծոյ որդիները:

«Տեսէ՛ք, Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ որդիներ կոչուինք. ասոր համար աշխարհ մեզի չի ճանչնար, վասն զի զանհկա ալ չճանչցաւ» (3.1):

«Ան որ չի սիրեր՝ Աստուած չի ճանչնար. Վասն զի Աստուած սէր է» (4.8):

«Մէկը երբէք Աստուած տեսած չէ: Եթէ մէկզմէկ սիրենք, Աստուած մեր մէջ պիտի բնակի ու անոր սէրը կատարեալ պիտի ըլլայ» (4.12):



*Որպէս Աստուծոյ որդիները բոլորս ալ կանչուած ենք սիրով ապրելու իրարու հետ: Առաքեալին գիրար սիրելու այս պատուէրը կարելի է ի գործ դնել միայն երբ յոյսով հաւատանք թէ Աստուծոյ սէրը միշտ պիտի մնայ մեր սրտերուն մէջ եւ ինք պիտի օգնէ մեզի սիրելու մեր քոյրերը եւ եղբայրները:*



## 55. Յատնութիւն Յովհաննու

### **Պատմական ակնարկ**

Յայտնութեան գիրքը հաւանաբար գրի առնուած է Յովհաննէս առաքեալին աշակերտներէն մէկուն կողմէ, Եփեսոսի արեւմուտքը գտնուող Պատմոս կղզիին մէջ (ուր հաւանաբար հեղինակը արքայութեան արքայութեան պատճառով), 92-96 թուականներուն: Հեղինակը կը գրէ եօթ եկեղեցիներու: Գիտնալով թէ եօթ թիւը կատարելութեան խորհրդանշան է, ուրեմն, կարելի է ըսել թէ գիրքը ուղղուած է ընդհանուր Եկեղեցիին:

Գիրքը գրուած է տագնապալից ժամանակաշրջանի մը ընթացքին, եւ կը նկարագրէ հալածանքի ենթարկուող եկեղեցիին տառապանքը, սակայն միեւնոյն ժամանակ՝ անոր վերջնական յաղթանակը չարին դէմ: Հեղինակը, այդ օրերու պատահարները մեկնաբանած է Աստուծոյ խօսքին լոյսին տակ. ան գուշակ մը չէր, սակայն, հաւատքի տեսանկիւնէն դիտած, գիտէր թէ բարիին եւ չարին միջեւ պայքարը Աստուծոյ յաղթանակով պիտի աւարտի:

### **Գիրքին գրական ոճը**

Յայտնութեան գիրքը գրուած է այլաբանական, (allegorical) ոճով. գրական այս ոճը յաճախ կը հաղորդէ հոգեւոր իմաստ, որ կը գերազանցէ հատուածի մը բառացի նշանակութիւնը: Այս իմաստը հասկնալու համար, սակայն, յատուկ բացատրական աշխատանք տարուելու է, որպէսզի իւրաքանչիւր պատկերի խորհրդանշական նշանակութիւնը պարզուի: Գրական այս ոճը հիմնական յատկութիւնն է յայտնութեանական գրականութեան (apocalyptic literature), որ տարածուած էր հրէական եւ

քրիստոնէական գրութիւններուն մէջ Ք.ա.200էն-Ք.ե.200 թուականներուն:

Յայտնութեանական գրականութեան իւրայատկութիւնն է գոյներու, հագուստի եւ մետաղի խորհրդանշական նկարագրութիւնը (1.13-16; 3.18; 4.4; 6.1-8; 17.4; 19.8) նաեւ՝ թիւերու (չորսը կը մատնանշէ աշխարհը, վեցը՝ թերութիւն, եօթն՝ կատարելիութիւն, տասներկուքը՝ Իսրայէլի ցեղերը կամ տասներկու առաքեալները, իսկ հազարը՝ անսահմանութիւն կամ անհունութիւն:) Այլ խորհրդանշաններ են նաեւ Երկնային գահը, կնքուած գիրքը (Հին Կտակարանը), որուն կնիքները միայն Յիսուս կրնայ բանալ, նաեւ փոքր գիրքը (Աւետարանը), մորթուած Գառնուկը, որ «կանգնած է», խորհրդանշելով Յարութիւնը: Իսկ հեթանոս աշխարհէն՝ Վիշապը (այսինքն Սատանան), ծովի գազանը եւ երկրին գազանը (քաղաքական եւ գաղափարաբանական իշխանութիւնները), շնացող Բաբելոնը (այսինքն Հռոմը):

### **Գիրքին բովանդակութիւնը եւ նպատակը**

Գիրքին նախաբանէն (1.1-3) ետք, կան եօթը նամակները, ուղղուած եօթը եկեղեցիներուն (1.4-3.22). Ապա Աստուծոյ եւ գառնուկին նկարագրութիւնը (4.1-5.14). եօթը կնիքները, փողերը եւ հարուածները (6.1-16.21), Բաբելոնին եւ հեթանոս աշխարհին անկումը (17.1-2).15), նոր ստեղծագործութիւնը (21.1-22.5) եւ գիրքին վերջաբանը (22.1-22.5):

Յայտնութեան գիրքը կը պարունակէ տարբեր տեսիլքներ, որոնք մեծ մասամբ առնուած են Հին Կտակարանէն, յատկապէս Եզեկիէլի, Ջաքարիայի եւ Դանիէլի մարգարէական (եւ մասամբ յայտնութեանական)

գրություններէն: Տեսիլքներու այս խորհրդանշական պատկերացնումը առնուելու չէ որպէս բառացիօրէն: Անշուշտ անկարելի պիտի ըլլայ մեզի պատկերացնել գառնուկ մը եօթը եղջիրներով եւ եօթը աչքերով. սակայն այսպիսի պատկերով նկարագրուած է Յիսուս Քրիստոս (5.6): Հեղինակը այս պատկերները օգտագործած է մատնանշելու Քրիստոսի տիեզերական (ընդհանրական, «եօթը եղջիր») զօրութիւնն ու գիտութիւնը («եօթը աչք»):

Գիրքը հասկնալու համար անդրադառնալու ենք նաեւ թէ անհկա գրուած է տազնապալից ժամանակաշրջանի մը ընթացքին, առաջին դարու վերջաւորութեան, երբ հռոմէական իշխանութիւնները քրիստոնէաները անգութ հալածանքներու կ'ենթարկէին: Ուստի, գիրքը կը յորդորէ առաջին դարու քրիստոնէաներուն հաւատքի մէջ հաստատ մնալու եւ զգուշանալու հեթանոսութենէ, նոյնիսկ ի գին նահատակութեան: Անոնք հաւատարմօրէն սպասելու էին Աստուծոյ խոստումներուն իրականացումին. Քրիստոսի թագաւորութիւնը չար ուժերը պարտութեան պիտի մատնէ եւ յափտեանս յափտենից իշխէ, որովհետեւ Աստուած է պատմութեան գերիշխան Տէրը (11.15; 12.10; 17.17):

Ուրեմն, գիրքին նպատակն է եկեղեցին մխիթարել եւ քաջալերել, աշխարհի փորձութիւններուն դէմ դնելու եւ Տիրոջ գալուստին պատրաստուելու (1.7, 8; 22.7, 10, 17, 20):



Անպարտելի չարին դէմ (թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին)  
Յայտնութեան գիրքը այսօր իսկ ունի պատգամ  
քրիստոնէաներուն. պատգամը յոյսի եւ սփոփանքի  
պատգամ է, որ մարտահրաւէր կը դնէ բոլոր անոնց,  
որոնք քաջութիւնը ունին հաւատալու:





## **Օգտագործուած Աղբիւրները**

**Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու, Աստուածաշունչի Միացեալ Ընկերութիւններ, Պէյ-րուօ, 1981.**

*Bailey, Kenneth E., **The Cross and the Prodigal**, Concordia Publishing House, St Louis, Missouri, 1973.*

*Bowden, John (Tr.), Charpentier, Etienne, **How to Read the Old Testament**, London : SCM Press, 1982.*

*Bowden, John (Tr.), Charpentier, Etienne, **How to Read the New Testament**, London : SCM Press, 1982.*

*Brown, R. E.; Fitzmyer, J. A. & Murphy, R. E., **The New Jerome Biblical Commentary**, London: Bath Press, 1968.*

*Efird, James M., **The New Testament Writings: History, Literature, Interpretation**, John Knox Press, 1980.*

*Johnson, Luke T. **The Writings of the New Testament: An Interpretation**, Philadelphia: Fortress, 1986.*

*Ladd, G.E., **A Theology of the New Testament**, Grand Rapids: Eerdmans, 1993.*

*Lasor, William S.; Hubbard, David A. & Bush, Frederic W., **Old Testament Survey**, Grand Rapids, Michigan: Eedmans Publishing Co., 1996.*

*Metzger, Bruce M. & Coogan, Michael D. (Eds.), **The Oxford Companion To The Bible**, New York: Oxford University Press, 1993.*

**Վեր. Յովհաննէս Սարմազեանին Աշխատանքը .**



*Survey of the Bible*  
*Historical and Spiritual Perspectives*

*Sylvie Avakian*

